

ՀԱՅԿԱՆԻ ԳԵՂԱԿՆԵՐ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ա. ՀԱՅԿԱԶ	Մեր դրացի թորամանեանները
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Աֆուամարինա
»	»	Երկունք
»	»	Ինֆնանաչում
Մ. ԻՇԽԱՆ	Մինաս Աշխատող
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Աշխարհահայեացք
* * *	Նոր արձակագիրներ
Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Թագաւորի փոքր որդին
Ա. ՄԵԽԱԿԵԱՆ	Անապատի օրերից մէկը
Ա. ԻՍԱԶԱՆԵԱՆ	Սուրմի իմ ծառ
* * *	Մարդուն մարդկայնացումը
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ	Ալեքսանդր Սոլժենիցին

ՆՇՄԱՐՆԵՐ

«Պատուիրեցին յանձնել ձեզ»

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե. Զարեց, Ա. Բակունց, Վ. Թոթովեց,
Գ. Մահարի, Մ. Արմէն, Վ. Նորեց, Վ. Ալազան
Խ. Դաշտեց, Հ. Յովհաննէսեան, Հ. Սահեան, Վ. Անանեան,
Ա. Իսաչանեան, Ս. Մելիֆուէթեան, Ս. Արզումանեան

Բազմ

ԱՅՍՍՈՒՅԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺՆ. — ԺԶ. ՑԱՐԻ, ԹԻՒ 4

Ա. Պ. Բ. Լ. 1977

ՊԷՅՐՈՒԹ

Ա. Հ Ա Յ Կ Ա Զ

Մ Ե Ր Դ Ր Ա Յ Ի

Թ Ո Ր Ա Մ Ա Ն Ե Ա Ն Ն Ե Ր Ը

Թորամանեանները մեղի անմիջական դրացիի չեն, ինչպէս են Լա Բոզաները, Ճենեսքաները, Մրֆիենք ու Սիմընսները, բայց իրենց տունը մերինէն միայն երեք փողոց հեռու է ու, ինչ որ դժբախտ է, հայ են:

Պարոն Թորամանեանը տպարան մը կ'աշխատէր եւ ութ տարիէ ի վեր հանդստեան է կոչուած: Դժողո՜հ է: Կը ձանձրանայ: Կը դանդաղ մինակութենէ, կ'ըսէ՝ թէ ծերութեան ամենամեծ չարիքը մինակ մնալն է. մա'նաւանդ՝ երբ աստիճանի ծանօթներդ ու բարեկամներդ, բոլո՛րը, դացած են անդի աշխարհը: Իր կինը, Տիկին Հեղինէն, դեռ աշխոյժ է եւ ասան դործերուն եւ պարտէղին հող կը տանի. իսկ իրենց աղան՝ Հայկը, քաղաքէն դուրս դիւրօթիկ վարժարան մը կը յաճախէ: Բժշկական սուղնոց վարժարան մըն է: Պարոն Թորամանեան ուղած է, որ իր դաւակը տոբթոր ըլլայ, չըլլայ իրեն պէս ուրիշներու բերնին հոտը մտիկ ընող դործաւոր: Մարդու եէս, սը՛ր, չըսէ՛ . . .

— Ես լման քառսուն տարի օտարին դեհը քաշեցի, եէս, սը՛ր, ըսի՛ երբ մեծ փափաք ունէի անիծուի՛ս, դժոխք դնա՛ պոռալու երեսնուն . . . Չեմ ուզեր, որ իմ մէկ հատիկս, փոր մը հացի համար, ուրիշին ծառայէ . . .

Ամառը, մօտ երկու ամիս, ու դանադան տօնական օրերու արձակուրդներուն, երբ Հայկ տուն դայ, հայրենի յարկը կը չէննայ, կը լեցուի ուրախութիւնով: Տիկին Հեղինէն, շարաթը քանի մը անգամ, հեռաձայնով մեղ իրենց կը հրաւիրէ՝ դաւակին համար իր եփած համով բաներուն համը նայելու:

— Աս իրիկուն մեզի հրամեցէք. չճաշած եկէք: Կեսարիոյ մանթը եմ չինած. եկէք համը նայեցէք: Շատ չուշանաք. Բենիկ աղան աս առտու սխոն-սխոն պատուիրեց, որ թելեֆոն ընեմ ձեզի: Օրիորդն ալ հեաներնիդ բերէք: Պարոն Արամը մարդուս հետ մէկ-երկու ձեռք քաւու կը խաղայ, մենք ալ քիչ մը խօսակցութիւն, քիչ մը բամբասանք՝ ժամանակ կ'անցընենք... Զահիլներն ալ՝ կը ձգենք իրենց հալին:

Խնդիրը այն է, որ Տէր ու Տիկին Թորամանեանները մեր աղջիկը իրենց աղուն լայըն են տեսած ու, իրենց խելքով, կը ջանան ջահիլները իրարու մօտ բերելու ամէն միջոց օգտագործել:

Տիկինն ու ես վաղո՛ւց անդրադարձած ենք այդ բանին ու, համոզուած ըլլալով, որ ինչ-ինչ պատճառներով Թորամանեաններու երազը իրականացընելու հնարաւորութիւն չկայ, անվնաս այդ բաղձանքը սրբագրելու որեւէ ճիղ չենք ըրած:

Օրերը կ'ընթանային խաղա՛ղ՝ ու Բենիկ աղայի ծրագրածին համաձայն: Ան արդէն կ'երեւակայէր իր սիրելի որդին բժիշկ դարձած, ու իր ընդարձակ ասն առաջին յարկը՝ բժիշկին համար ընդունելութեան սրահի վերածուած, լման՝ սպասման ու քննութեան յատուկ բաժանումներով: Դրան առջեւի գորդանման կանաչին վրայ ալ, ոսկետառ ու գիշերը լուսաւորող ծանուցումը.

ՏՈՔԹՈՐ ՀԱՅԿ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ Մասնագէտ ներքին հիւանդութեանց

Բենիկ աղա վստահ էր, թէ իր որդին լաւ բժիշկ մը պիտի ըլլար եւ դարմանողները խոր երախաազիտութեամբ պիտի յիշէին իր անունը՝ եւ իրենց օրհնութիւնը հասցնէին մինչեւ իր գերդաստանին եօթը պորտը:

Ինչպէս յաճախ, այս անգամ ալ պաաահեցաւ, որ դէպքերը չընթանան ծրագրուած եւ, մա'նաւանդ՝ բաղձացուած ուղիով: Հայկի շրջանաւարտութեան հազիւ ասրի մը մնացած, Փեարուար ամսուն մէջ, երբ ո՛չ ասն կար, ոչ ալ արձակուրդ, օր մը ան եկաւ աուն ու, առանց յառաջաբանի՝ յայտարարեց, թէ որոշած է տեղացի աղջկան մը հետ ամուսնանալ:

Եթէ ամառնային պայծառ օդով օր մը կայծակ իջնէր Թորամանեաններու ասն վրայ, այնքան պիտի չահաբեկուէին ու դարմանային: Նախ՝ յուսացին, թէ վաղանցուկ քմայք մըն է, ու քիչ մը խրատով կրնան իրենց զաւկին միտքը փոխել, ըստ քանի մը նախնական փորձէ ու ընտանեկան ժողովէ ետք, երբ համոզուեցան, թէ խնդիրը իրենց կարծածէն աւելի լուրջ է, մեզ ալ կանչեցին, որ ձայն բռնենք իրենց հետ:

Այս առթիւ, մենք ալ, էրիկ-կնիկ, քիչ մը աուինք-առինք: Ես համամիտ չէի, որ այդ ընտանեկան վէճին միջամտենք, Տիկինը կը կարծէր, թէ իբրեւ դրացի ու բարեկամ, պարտաւոր ենք փորձ մը ընել... Գէշը այն էր, որ շա՛տ բան կ'ակնկալէին ինձմէ, երբ իրենց դասը պաշապանելու միտք չունէի:

— Պարոն Արամը դրող-կարգացող է, իր խօսքը մտիկ կ'ընէ սղաս, — ըսեր էր Տիկին Հեղինէ հեռաձայնին վրայ մեզ հրաւիրած պահուն:

Երբ հիւրանոց մտանք, երեքով, քէն ըրածի պէս, դէմքերնին կախ՝ նստեր էին:

— Զեղի լո՛նչ է պատահեր, — ըսաւ Տիկինը բանէ մը լուր չունեցածի պէս:

— Ի՞նչ պիտի պատահի, լուսահողի մայրս կ'ըսէր, թէ Կօլիւսիւ օլան պիբ կիւն աղլամը, տէլիսի օլան հէր կիւն աղլամը, ալսինքն թէ՛ մեռել ունեցողը մէկ օր կու լայ. խենթ ունեցողը՝ ամէն օր... Ահա մեր մանչը. դպրոցը երեսի վրայ ձգեր, վաղեր տուն է եկեր՝ ըսելու համար, թէ մեղա՛յ՝ մեղա՛յ, բերանս վրայ չ'երթար, որ ըսեմ... Ըսելու համար, թէ խելքը օտար աղջկան մը տուեր է ու հետը պիտի կարգուի:

— Ուրախ չէ՞ք, որ ձեզ մարդու տեղ է դրեր ու եկեր է ձեզմէ հրաման առնելու, — ըսի լրջութեամբ:

— Ամա՛ն, հրաման առեր է չէ առեր, ի՞նչ կարեւորութիւն ունի, — ըսաւ մայրը ինձմէ յուսախաբ, — կարեւորը աղջիկն է... Մենք իրեն համար մտքերնիս լուսերու պէս մաքուր, ցիւցը ցիւցիլիէթը յայտնի աղջիկ մը ունէինք, թող ուսումը աւարտէր, տուն դար, մենք զինքը կը կարգէինք, անա՛նկ հարսնիք մը կ'ընէինք, որ ալէւր նախանձէր ու մատ խածնէր...

Ան հաղիւ աւարտած՝ Բենիկ աղա բացաւ բերանը.

— Հայութենէ ու աղգայնականութենէ ճառող մա՛րդ մըն եմ ես, հիմա տղուս օտարի հետ ամուսնանալը լսողը պիտի չըսէ՞, թէ՛ այ մա՛րդ, փքոցդ ի՞նչ էր, բարեկարգութիւնը տունէ՛դ սկսէիր...

— Եթէ այդ բաները քեզի համար պատուոյ ու խղճի հարց են, փափա, ինձի համար ալ, տուած խոստումս պատուոյ ու խղճի հարց է, — ըսաւ Հայկ:

— Առաջին անգամը չէ, որ նշաններ ետ կը արուին ու խոստումներ կը չնջուին, — առարկեց հայրը:

— Գիտե՛մ, բայց իմ պարագաս տարբեր է:

— Գու պարագադ ինչէ՞ն տարբեր կ'ըլլայ եղեր:

— Իմ առնելիք աղջիկս արդէն...

— Արդէն ի՞նչ:

— Արդէն իր փորին մէջ զաւակս կը կրէ:

— Ըսել կ'ուզես, թէ ամուսնանալէն առաջ հետդ պառկած է, ետլորում, հի՞ջ մը մտքէդ չանցաւ, թէ քու հետդ պառկողը, վաղն ալ կրնայ ուրիշի՛ն ծոցը մտնել...

Հայկ մեծ եռանդով սլաշապանեց իր բարեկամուհին ու տեսնելով, որ տեղ մը չի հասնիր, յուսահատ ու դալկադէմ, ելաւ սենեակէն դուրս:

Մնացինք առանձին: Երկար ատեն լուռ էինք: Կը մտածէի բարի դիւշեր մաղթելով տուն դառնալու մասին, երբ Տիկին Հեղինէ, դիւտ մը ընողի ճառագայթող դէմքով, բերանը բացաւ.

— Մա՛րդս, — ըսաւ, — փառք Աստուծոյ, առողջ ես, պանքան քանի մը տոլար դրամ ունիս՝ անձրեւոտ օրուայ համար խնայած, թող Տէրը ասկէ աւելի անձրեւոտ օր չցուցնէ՛ մեզի, հանենք տանք այդ դրամը մեր աղուն, որ կարգադրութիւն մը ընէ, տայ այդ շան աղջկան, որ միջոցը գտնէ իր փորան բեռէն աղաաւելու... Հայկազնիս ըսաւ, թէ հիւանդապահուհի է, բժիշկներով շրջապառուած, հարկաւ անոնք ապահով միջոցը դիտեն... Թող վերջապէս ի՛նչ կ'ուզէ ընէ՝ աղատի իր բեռէն. եթէ չ'ուզեր սպաննել — մեղա՛յ, մեղա՛յ — թող սպասէ ծնելուն, ու ծնելէ ետք տայ մէկուն... Պէյպի որդեգրել ուղող շա՛ա:

Եւ, խորապէս վրդովուած, ալ չկրցայ հանդուրժել, ոտքի ելայ ու, ինձի հետեւող տիկնոջս հետ՝ դարձանք տուն:

Առաւօտուն, հեռաձայնին վրայ, լալով, Տիկին Հեղինէ կնոջս պատմեց, թէ մեծ լրջութեամբ ու ընտրուած բառերով առաջարկը ներկայացու-

« — Նրսութիւն : Ու ետքը , երբ իր միջոցները ներեն՝ բժշկութիւն :

« — Ուրեմն ծոցդ մտած պահուն դիտէր , թէ խնդրին մէջ յղի մնալ կայ... կրնար յղի չմնալու համար միջոցներ՝ ձեռք առնել... Մի ըսեր , թէ այդ միջոցները , անոնց ամենավերջինը նոյնիսկ , անծանօթ էին իրեն... Բայց չէ՛ , ուղեց դիտմամբ յղի մնալ , որ բռնէ քթէդ ու կարգուի՛ հետդ :

«Վերջապէս , յոգնած , առանց եղրակացութեան մը գալու , գացինք պառկելու : Երկար ժամանակ անքուն էինք անկողնին մէջ : Ուշ ատեն , տեսնելով , որ մարգս ալ ինծի պէս չի կրնար քնանալ , յսի :

« — Բենիկ աղա , ենթադրենք , թէ մեր տղան ետ ըրինք այս աղջիկէն . դարձեալ ենթադրենք , թէ շրջանաւարտութենէ ետք , ամուսնացաւ մեր սիրած ու ընտրած աղջկան , հայ աղջկայ մը հետ ու չեղաւ երջանիկ : Ինչպէ՞ս պիտի հանդարտեցնենք մեր խիղճը , մեր սրտերը պիտի չայրի՞ն իր երջանկութեան արգելք ըլլալնու համար : Ես քանի մը լաւ ընտանիքի աղջիկներու պատմութիւն դիտեմ , դիտեմ , թէ սիրած տղաներնին օտար էին ու ծնողներու ընդդիմութեան հանդիպելով , չամուսնացան : Տարիքնին հիմա քառսունը անցած է ու դեռ չեն ամուսնացած : Ամուսնանալու ալ միտք չունի՞ն... Պատւական ընտանիքի պատուական աղջիկներ էին... Կա՛մ ուխտ ըրին հաւատարիմ մնալ իրենց առաջին սիրոյն , եւ կամ՝ բախտին գուռը դոցուեցա՛ւ իրենց առջեւ . մա՛րգս , մենք ալ նոյն սխալը չգործենք... »

«Ես լացի : Ան պատասխան չտուաւ : Կարծեմ ինք ալ լացաւ , բայց չուզեց , որ գիտնամ թէ կու լայ :

«Առտուն , երբ արթնցայ , ղզուշութեամբ , որ հաւանաբար մեղի պէս երկար ատեն անքուն մնացած տղաս չարթնցնեմ , մուկի պէս անձայն պատրաստեցի նախաճաշը : Ժամը տասի ատենները , ղզուշութեամբ , Հայկի սենեակին դուռը բացի ու նայեցայ ներս : Ինք չկար ու անկողինը չէր աւրուած :

«Մաքէս հագար գէշ բան անցաւ : Վրաս մարելիք եկաւ : Բենիկ աղան մի՛նակս տեսնելով , մեղքցաւ ինծի :

« — Կնիկ , — ըսաւ , — կ'ըսեն , թէ մօր անէծքը չ'անցնիր , բայց հօր անէծքը կ'անցնի... օգնէ ինծի , որ չանիծե՛մ դինք , չանիծե՛մ գինք , չանիծե՛մ դինք... »

« — Մեղա՛յ ըսէ մա՛րդ , — դռչեցի դող ելած , — մեղա՛յ ըսէ , մեր ճիկէրի կտո՛րն է , չանիծե՛ս , կը հասկընա՞ս , չանիծե՛ս... » :

Մէկ-երկու օր ետք , իրիկուն մը մեղի եկան : Հեղինէ հանրմի աչքերը լալէն ուռած էին : Ամուսինը չէր ածիլուած ու տասը տարիով ծերացած ըլլալ կը թուէր : Սեւ սուրճէն ու սովորական «ինչպէ՞ս էք , աղէկ ենք»էն ետք , խօսք բացին :

— Մեռած ունեցողը մէկ օր կու լայ , խենթ ունեցողը՝ ամէն օր , — ըսաւ Բենիկ աղա ու , թաշկինակը հանելով՝ ծածկեց գէմքը , որ չտեսնենք իր յուզումը :

Հեղինէ հանրմ , որ օր մը առաջ երկար-բարակ շատախօսած էր կնոջս հետ , աւելի պաղարիւն ըլլալ կը թուէր : Խորհեցայ , թէ որոշման մը յանգած են , համակերպած :

Տեսնելով , որ կը վարանին գիրենք մեղի բերող շարժառիթին մասին խօսք բանալ , բարուք համարեցի խօսքը ես բանալ :

— Հայկէն ի՞նչ լուր , — հարցուցի :

— Գիտցածիդ պէս, նոր լուր մը չկայ, — ըսաւ Հեղինէ հանրմ :

— Շիտակը ըսելով, երբ հարցուցի՝ նորութիւն մը չէի ակնկալեր : Վրայէն թող քանի մը օր անցնի՝ կը լսէք իրմէ, — ըսի :

Քիչ մը շատ երկար տեւող լուրսէնէ ետք, վերջապէս Հեղինէ հանրմն էր, որ խօսիլ սկսաւ .

— Մենք ձեզ քուր-ախպօր տեղ ենք գրած... Գլուխնիս որ ցաւի, կը վազենք ձեզի... Լաւ դրացին հեռուն ապրող մօտ ազգականէն լաւ է. աս անգամ ալ, երեսնիս ամրացուցած, եկանք ձեզի :

— Բարի էք եկեր, — ըսի :

— Շնորհակալ ենք :

— Եկանք ձեզի խնդրանքով մը, — ըսաւ ու լռեց :

— Ըսէ լսենք այդ խնդրանքը, մի՛ վարանիր, — քաջալերեցի ես :

— Պիտ ըսե՛մ. բայց չորնալիք բերանս վրայ չ'երթար... Երէկ գիշեր ու աս առաւօտ, երկար բարակ խորհելէ ետք, եկանք քեզմէ խնդրելու, որ երթաս ու աչքերովդ տեսնես, թէ ինչացո՞ւ է այդ աղջիկը... Գիտենք, թէ ծանր բան է, որ կը խնդրենք քեզմէ, բայց ա՛լ ուրիշ մէկը չունի՞նք... Վերը Աստուած — ան ալ մեզ մոռցած կամ մեզմէ նեղացած ըլլալ կը թուի՝ — վարը՝ դուք : Եթէ Հայկս քոյր կամ եղբայր, Էմմի, քեռի ունենար, հարցը կը փոխուէր, քու տեղդ դայն կ'ուղարկէինք, բայց չունի՛... Թուրքին աչքը քորնայ, մեզ ամէն բանի կարօտ թողուց... Մէկ հատիկ զաւակ մը ունինք, ա՛ն ալ կորսնցնելու վրայ ենք :

— Յոռետես մի ըլլաք : Կորսնցնելու խնդիր չկայ : Եթէ Տէրը կամի ու Հայկ ամուսնանայ՝ տունդ կը շէննայ, աղջիկ մը կը շահիս գործերուդ օգնող : Ամէն օտարազգի աղջկան հետ ամուսնացող չի՛ կորսուիր ազգին համար : Քանի որ կը փափաքիք, կ'երթամ ու աչքովս աղջիկը տեսնելէ ետք, լուր մը կը բերեմ ձեզի :

— Աստուած օրհնէ ձեզ, գէշ օր չտեսնէ՛ք, մէկ բարձի վրայ ծերանաք, քար բռնէք՝ ոսկի՛ դառնայ :

— Ե՞րբ կ'ուզէք, որ ճամբայ ելլեմ, — հարցուցի :

— Երբ որ ուզես... Բայց որքան շուտ՝ այնքան լաւ : Եթէ հոն հասնիս ու տեսնես, որ Հայկը հոն է, մեզի լուր մը հասցուր թելեֆոնով : Գեռ հոն վերադարձած ըլլալուն իսկ վստահ չենք, մտքերնուս հազար գէշ բան կ'անցնի, — ըսաւ խեղճ կինը լալով :

— Աղէ՛կ, վաղը առտու կանուխ ճամբայ կ'ելլեմ, մինչ այդ, դուք շատ մի մտահոգուիք :

— Չենք մտահոգուիր : Երբ հաւանութիւն տուիր հոն երթալու, կարծես մեր սրտին վրայէն բեռ մը վերցաւ : Ըրած ու ընելիք ծախսերդ սիրով կը վճարենք :

— Ինչպէս ըսի, վաղը առտու կանուխ ճամբայ կ'ելլեմ. մինչ այդ, դուք դացէք տուն ու խոստացէք, որ շատ պիտի չմտահոգուիք : Եղածը բան մը չէ. Հայկը ո՛չ առաջինն է, ոչ ալ վերջինը, որ սիրտը կու տայ օտար աղջրկայ մը. ու բոլոր այլազգի աղջիկներու հետ ամուսնացողները դժբախտ չեն ըլլար :

— Թերեւս իրենք չեն ըլլար, բայց ծնողները կ'ըլլան, — ըսաւ Հեղինէ հանրմ :

— Կնիկ, ձա՛նդ... — գոռաց Բենիկ աղան :

Մեզի բարի գիշեր մաղթեցին ու ելան դացին :

**

Հայկի բարեկամուհին մեղրով ու կաթով շաղուած աղջիկ մըն էր . նուրբ, բարձրահասակ, շնորհալի, ժպտագէմ ու կապուտաչուի : Պարապ տեղը չէր, որ Հայկ իր սիրտը տուած էր անոր : Առաջին տպաւորութիւնս եղաւ շատ նպաստաւոր, բայց երբ հեռաձայնի գլուխն անցայ՝ Հայկի ծնողքին հետ խօսելու համար, անոնց միայն տեղեկացուցի, թէ հանգիպած էի Հայկին ու ան լաւ էր, առողջ ու իր դասերով ու գործով զբաղուած : Կը հաւատամ, թէ անոնք գէթ կիսով մը հանգստացան, բայց ես ինքզինքս յանդիմանեցի նման պատասխանատու գործի մը մէջ մտնելուս համար :

— Յիմա՛ր. քառակուսի յիմար, ինչո՞ւղ պէտք ասանկ գործերու մէջ կը մտնես, — ըսի ինքզինքիս, — բայց ա՛լ անգամ մը եկած էի՝ ու վերադարձ չկար :

Զարմանալիօրէն ուրախ էր Հայկ, իբրեւ իր ծնողքին ներկայացուցիչը գալուս համար : Վստահ էր իր բարեկամուհին վրաս ձգած ու ձգելիք տպաւորութեան վրայ. ու իմ այն հարցումիս, թէ Մարկրիտ գիտէ՞ ով ըլլալս ու ինչո՞ւ համար գալս, պատասխանեց, թէ գիտէ :

— Ըսելու չէիր, — գիտել տուի :

— Ինչո՞ւ :

— Կրնայի իբրեւ պատահամբ ձեր կողմերը եկած ծանօթ կամ բարեկամ ներկայանալ իրեն, — ըսի :

— Այո՛, կրնայիր, բայց ես երջանիկ պիտի չըլլայի Մարկրիտը խաբած ըլլալուս համար :

Ու հարցը փակուեցաւ :

— Այս իրիկուն երեկոյթի մը պիտ երթանք, — ըսաւ Հայկ, ու դըրպանէն երկու հրաւիրադիր հանելով՝ մէկը տուաւ ինծի, — հոն կը հանգիպինք :

Իրիկունը, հրաւիրաւորսին մրայ նշանակուած ժամէն կէս ժամ ետք, երբ արդէն սրահը կիսով լեցուած էր ու տրամադրելի սեղաններուն մեծամասնութիւնը գրաւուած, Հայկն ու Մարկրիտը, երկուքն ալ սպիտակ հագած, մտան ներս : Իրենց ճամբուն վրայ քանի մը ծանօթներ ըրեւելէ ու ուստի մանց հետ ջուխտ մը խօսք փոխանակելէ ետք, եկան քովս : Մարկրիտ միշտ կը ժպտէր ու կը թուէր, թէ տեղեկութիւն չունէր իր բարեկամին ծնողքին կը ժպտէր ու կը թուէր, թէ տեղեկութիւն չունէր իր բարեկամին ծնողքին հետ ունեցած դժուարութեանց մասին : Ակնարկս իր փորին գնաց : Յղութեան ո՛չ մէկ հետք, ո՛չ մէջքին, ոչ ալ գէմքին վրայ :

— Խնդրեմ նստեցէք, — ըսի :

— Նախ քան մեր նստիլը՝ պէտք է որ քանի մը բարեկամներու հաւաքեղի հետ, — ըսաւ Հայկ :

— Գացէք, սիրելիներ, գացէք, բայց Հայկ ջան, երթալէ առաջ, ինծի ընկերանալու համար, սանկ երկար բաժակով զովացուցիչ մը զրկէ, որ մինչեւ ձեր գալը մինակ չմնամ . . .

Խմիչքս եկաւ : Խոշոր կուճ մը խմեցի ու սկսայ խորհրդածել :

«Ահա Հայկը, սքանչելի հայ մանչ մը՝ պայծառ ապագայով : Ուեէ հայ աղջիկ ուրախ պիտի ըլլար ի՞նչ բախտը անոր կապելով ու որդիներ ծնելով անոր համար : Բայց ահա այդ պայծառ ապագայով տղան իր խելքը ու նաեւ սիրտը տուած է օտար աղջկայ մը, ու ինչ որ աւելի կը բարդացնէ հարցը, այդ օտար աղջիկը Հայկէն որդի մը կը կրէ իր մէջքին մէջ : Հայկ մէկէ ա-

ւելի պաաճառներով կը սիրէ այդ աղջիկը ու պատրաստ է հօրենական տունը լքելով անոր հետեւիլ... Իմ հոս գալս բոլորովին, բոլորովին աւելորդ էր... Բայց միւս կողմէ, ծերունիներուն վիճակը այնքան խղճալի էր, որ փոխանակ տրամաբանութեանս ձայնը լսելու, ունկնդրեցի սրտիս ձայնը. ու սիրտը ամէն անգամ շիտակ բաներ չէ՛, որ կը թելադրէ... Ենթադրենք, պարզապէս ենթադրենք, թէ յաջողեցանք այս երկուքը բաժնել իրարմէ, ու դարձեալ ենթադրենք, թէ Հայկ, ի վերջոյ ամուսնացաւ ծնողքին կողմէ ընարուած ու ընդունուած հայ աղջկայ մը հետ ու եղաւ ապերջանիկ, դժբախտ... Այդ պարզային ծնողքն ու մա՛նաւանդ ես պիտի չխղճահարի՞նք, մտածելով, թէ մենք ենք եղած անոր ապերջանկութեան պատճառը... Ու զաւակը, որ պիտի դայ... Աստուած՝ իմ, ես՝ որ ամէն նեղը մնալուս Քու դուռը կը զարնեմ, Սողոմոնի աւանդական իմաստութեան մասնիկ մը տուր ինծի, որ ուղիղ բանը ընեմ, ո՛չ սա երիտասարդներուն երջանկութիւնը պղտորեմ, ոչ ալ ծերունիներուն վրաս ունեցած վստահութեան դաւաճանած ըլլամ: Աս վերջին անգամն է, կը խոստանամ յետ այսու քիթս նման հարցերու մէջ չկոխել: Եւ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»:

Ադօթելէ ետք, առի սեղանիս վրայ քրտնոզ բաժակը ու պարունակութիւնը մինչեւ վերջին կաթիլը ծծեցի:

Երբ քիչ ետք Հայկ վերադարձաւ, խնդրեցի իրմէ, որ բաժակս նորոգէ:

— Սա բաժակս նորոգէ ու ըսէ ինծի, թէ ո՞ւր է Մարկըրիտը, ո՞ւր կորսընցուցիր:

— Զուգարան գնաց, հիմա կու դայ:

— Իմ հոս գալուս պատճառին ու ծնողքիդ հակառակութեան մասին որքա՞ն բան գիտէ, — հարցուցի:

— Գիտէ ամէն բան. կը սիրեմ զինք ու գաղտնիք չունիմ իրմէ: Ըսած եմ, ըսած եմ ամէն բան:

— Հոս գալուս պատճառն ալ...

— Հոս գալուդ պատճառն ալ:

— Երբ այդ բոլորը ըսիր, ի՞նչ եղաւ իր վերաբերմունքը:

— Յուզուեցաւ: Բայց չլացաւ: Գիտեմ, հպարտ է: Զուգեց, կարդ մը ուրիշներու պէս, արցունքը իբրեւ զէնք դործածել... Արցունքը տկարի, պարտուողի զէնք կը համարէ... Մինակ իր կզակն էր, որ քիչ մը դողաց... Աչքերով ջանաց թափանցել մինչեւ սրտիս խորը՝ տեսնելու համար, թէ հոն ի՞նչ կայ:

— Մինչեւ հիմա չէ՞ր գիտեր, թէ հոն ինչ կայ:

— Գիտէ՞ր, բայց նաեւ դիտէր, թէ ծնողները յաճախ ինչ մեծ ազդեցութիւն ունին իրենց ձագերուն վրայ... Վստահ եմ, եթէ վարանքի հետք դտնէր իմ մէջ, կը ձգէր—կը հեռանար: Գիշերը, ուչ ատեն, երբ իր աունը կ'երթար, դրան առջեւ մատէն հանեց իրեն տուած մատանիս, — աժաննոց բան մը — երկարեց ինծի ու ըսաւ.

« — Գիտես, թէ կը սիրեմ քեզ. բայց եթէ ծնողքիդ կամքին կամ փափաքին հնազանդելով պիտի բաժնուիս ինձմէ, ու ատով երջանիկ պիտի ըլլաս, ազատութիւն կու տամ քեզի... Կը ցանկամ, որ յղութեանս համար չմտահոգուիս: Կամաւորապէս, ուզելով մնացի յղի, որովհետեւ կը փափաքէի քեզմէ զաւակ մը ունենալ. զգուշութեան բոլոր միջոցները, ինչպէս գիտնալու ես, ծանօթ էին ինծի, բայց չուզեցի անոնցմէ օգտուիլ... Կը հաւատաս խօսքիս, չէ՞, կը հաւատա՞ս... Կ'երդնում ամէն սրբութեան վրայ, որ քեզ բռնել ու պահելու համար չէր, որ փափաքեցայ քեզմէ յղի մնալ, յղու-

Թիւնս իբրեւ զէնք գործածել... Ընկերուհիներէս մէկը, որուն խոստովանած եմ ամէն բան, զիս հանգստացնելու համար ըսաւ, թէ ծնելէս առաջ կամ ետք երախայէս աղատելու բազմաթիւ միջոցներ կան. կ'ուզես՝ հիմա, կ'ուզես՝ ետքը կ'աղատիս ձմերուկէդ — այո՛. ձմերուկէդ ըսաւ — զիս ինչի՞ տեղ դրած էր, խելքս չհասա՛ւ...

«Այս խոստովանութիւնը, որ լսեցի, ա՛լ չձգեցի, որ շարունակէ, առի զինք թեւերուս մէջ, համբուրեցի իր շատախօս բերանը ու ըսի իրեն, թէ բընա՛ւ, բնա՛ւ պիտի չբաժնուիմ իրմէ, ու ամէն բան, ներելի թէ աններելի, պիտի ընեմ՝ զինքը երջանիկ ընելու համար»:

— Հայկ, — ըսի, — չես կրնար երեւակայել, թէ որքան ուրախ եմ, որ առանց իմ կամ արտաքին միջամտութեան եզրակացութեան մը յանգած ես: Ուրախ եմ, որ այս բոլորը ըսիր ինծի: Կը մնայ համոզել ծնողքդ, որ, կը կարծեմ, թէ շատ դժուար պիտի չըլլայ:

— Ա՛, ծնո՛ղքս... Հաւատա՛, որ չէի ուզեր իրենց կամքին հակառակ շարժիլ, կը սիրեմ ու կը յարգեմ զիրենք, բա՛յց...

Այս անգամ ես էի, որ կտրեցի իր խօսքը.

— Հա՛յկ, սի՛րելիս, ըսուած է, թէ «արեւածագէն առաջ արեւելքէն ինչե՛ր կը ծնին. մի՛ յուսահատիր, անգամ մը տուն երթամ՝ հա՛յրդ ալ կը համոզեմ, մա՛յրդ ալ: ...Մայրդ արդէն խմորի պէս է, զայն անգամ մը համոզելէ ետք, զինք դաշնակից կ'առնեմ ու հայրդ ալ կը համոզենք միասին:

Ճիշդ այդ պահուն Մարկրիտ վերադարձաւ ու սկսաւ տեղեկագրել Հայկին, թէ զուգարանին մէջ որո՞նց էր հանդիպած եւ որո՞նք բարեւ էին զըրկած իրեն: Երբ աւարտեց իր խօսքը, ժպտելով դարձայ իրեն ու ըսի.

— Երբ հոս չէիր դուն, Հայկին հետ խօսեցանք քու մասիդ:

— Օ՛...

— Հապա՛... Քիչ մը բամբասեցի՛նք:

— Հայկը, վստահ եմ, իմ մասին դանդատելիք շատ բաներ ունէր...

— Ձեռ կրնար երեւակայել, թէ որքա՛ն շատ...

Պահ մը լռութիւն տիրեց: Վերջապէս ես, ժամանակը հասած համարելով, առի իր սպիտակ, սիրուն ձեռքը արհեստաբար մէջ ու ըսի.

— Մարկրիտ, սիրելի՛ս, մտիկ ըրէ: Ես չէի ուզեր, որ Հայկը քեզի ըսէր հոս դալուս պատճառը, բայց ըսեր է՝ ու ես հիմա ուրախ եմ այդ բանին համար: Կ'ուզեմ որ հաւատաս, թէ իր ծնողքը հակառակեցան քեզի հետ իրենց զաւկին ամուսնանալուն ո՛չ թէ այն պատճառաւ, որ քեզի դէմ բան մը ունին, քեզի չեն հանդիպած, քեզ չեն ճանչնար. ու, բնականաբար, բան մը չունի՛ն քեզի հանդէպ. կը հակառակին, որովհետեւ կեանքի մէջ նման խառն ամուսնութիւններ երջանիկ օճախներ կազմելու հաւանականութիւն չունին յաճախ. բարքեր, սովորութիւններ, ազգային աւանդութիւններ, կրօնական տարբերութիւններ, նոյնիսկ խոհանոց, դրական կամ բացասական որոշ դերեր ու միջամտութիւններ ունին: Այս տարբերութիւնները, յաճախ, բախումներու եւ անհանդուրժողութեանց պատճառ կ'ըլլան. բայց կը հաւատամ, թէ ձեր պարագային, կրնան ասոնք բոլորը վերնալ կամ հարթուիլ, որովհետեւ կրթուած ու խելահաս անձեր էք:

Ճառս վերջացուցած, նայեցայ ժամացոյցիս: Ժամը մօտաւորապէս ինն էր:

— Եթէ չեմ սխալիր, — ըսի, — ժամը ասսին Նիւ Եորք թող օդանաւ մը կայ. կ'ուզեմ անով վերադառնալ տուն:

— Մենք քեզ, քսան բոպէէն, Հայկին կառքով կը տանինք օղակայան,
— ըսաւ Մարկրիա :

— Թաքսիներուն ի՞նչ է եղեր... Անոնց վարիչներն ալ պիտի ապրին,
տուն պահե՛ն... Դուք հոս մնացէք ու զուարճացէք, շնորհակալութիւն եւ
մնաք բարով :

Քիչ մը նազ-առուղէ ետք, համոզուեցան ու ես ժամը աասի օղանաւով
վերադարձայ տուն :

**

Մարկրիաի մէջքին լայննալէն առաջ պսակը աեզի ունեցաւ : Հայկին
մայրը իր ձեռքով կարեց ազուն կին ըլլալու սահմանուած հունգարացի աղ-
ջրկան պսակի սպիտակ ամպէ ձեւուած հաղուսար եւ Բենիկ աղա գրամ չինա-
յեց ընդունելութիւնը շքեղ ու յիշատակելի ընելու համար : Ամէն ոք գոհ էր
ու երջանիկ, բայց վստահ եմ ծերունիներու երջանկութիւնը լման չէր . օր մը
նոյնիսկ խօսք բացին, հասկցուցին զգոյշ բառերով, թէ համակերպած են
Հայկին օտարի հեա ամուսնանալուն, բայց իրենց մաքին մէջ...

— Ձեր մաքին մէջ ի՞նչ, — գոռացի զայրացած :

— Մեր մաքին մէջ այն է, որ...

— Հսէք, ինչո՞ւ կը վարանիք...

— Այն է, որ ծնելիք մեր թոռը, մանչ կամ աղջիկ, ապօրինի է, — ը-
սաւ Բենիկ աղա :

— Հասակէդ ու ասրիքէդ ամչցիր, մա՛րդ, — բարկացայ ես, — նոյն-
իսկ հասարակ բողբոջ ծնած զաւակները ապօրինի չեն կրնար ըլլալ, այդ ան-
մեղ ու անօգնական էակները ապօրինի որակելուդ համար բնաւ, բնա՛ւ պիտի
չներեմ քեզի, — դարձայ շուարած երեւոյթով մը մեր վէճը մտիկ ընող Հե-
ղինէ հանրմին ու աջ ձեռքիս ցուցամատը իրեն ուղղած գոռացի .

— Քեզի՛ ալ. դո՛ւն ալ մեղադրելի ես... Ամէն գալուս, ամէն խօսքի
մէջ, էրիկ-կնիկ կը դանգատէիք, թէ թուրքը մեզ ասանկ ըրաւ, թուրքը մեզ
նանկ ըրաւ, մեզ անօգնական ու մինակ թողուց, մարդու, լաւ դրացիի ու աղ-
գականի կարօ՛տ մնացինք, դետնէն բուսած հողի, ներողութի՛ւն, խոտի պէս
մինակ ու անօգնական մնացի՛նք, եւայլն, եւայլն, եւա՛յլն... Հիմա Աստուած
ձեզի սիրելու եւ վրան գուրգուրալու համար, մէկ անդամով, երկու լուսի պէս
բալիկ է զրկած ու դուք կը դանգատիք... Կը հասկնա՞ք, կ'ըմբռնէ՞ք ձեր
բախտաւորութիւնը, մէկ անգամով ձեր պարպուած սրտերը լեցնելու համար
երկու բալիկ է զրկած ու դուք ելեր սեւ ու ճերմակ, օրինաւոր կամ ապօրինի
կը փնտռէք... Ի՞նչ տարբերութիւն կ'ընէ, թէ քահանան անոնց վրայ առա՞ջ,
թէ ետքն է կարգացեր, տարբերութիւն մը կ'ընէ՞, թէ ճաշելէ առաջ թէ վերջն
էք շնորհակալ եղեր Աստուծոյ կողմէ ձեզի պարզեւուած բարիքին համար...

— Քա, մեղա՛յ, ես բնաւ այդպէս չէի խորհած, պարոն Արամս, — ը-
սաւ կինը, — շնորհակալ ենք, որ բացիր մեր աչքերը :

— Հապա դո՞ւն, դո՞ւն ինչ կը խորհիս, — ըսի Բենիկ աղային :

— Տղաս, կը տեսնեմ, որ խելքը տարիքին մէջ չէ, այլ՝ գլխուն...
Ինչպէ՞ս կ'ուզես որ խորհիմ... բացիր աչքերնիս . շնորհակալ եմ :

**

Իրիկուն մը, ուշ ատեն, տանս գուռը զարնուեցաւ ու հեռադիրներ բերող մանչուկը դեղնագոյն թուղթ մը տուաւ ձեռքս:

— Ո՞վ է, ի՞նչ կ'ուղէ, — հարցուց Տիկինը սանդուխին գլուխէն:

— Հեռագիր մըն է:

— Որմէ՞ն է:

— Դեռ չբացի:

— Իշալլահ խեր է:

Հեռագիրը Մարկրիտէն էր. կը գուժէր, թէ Հայկ, երբ հիւանդատար կառքով օգնութեան կը փութար վար ինկած ու բռնկած օդանաւի մը աղէտեալներուն, ճամբան կը բախի ուրիշ կառքի մը եւ ուշաթափ կը բերուի հիւանդանոց: Վիճակը անյոյս է: «Խնդրեմ, եկուր», կը վերջացնէր Մարկրիտ իր հեռագիրը:

Կայարանէն ուղղակի, առանց ժամանակ կորսնցնելու, գացի Մարկրիտի մօտ: Ամէն բան վերջացած էր: Հիւանդանոցին մէջ, մասնագէտներ իրենց կարելին ու անկարելին փորձած էին՝ փրկելու համար Հայկին կեանքը: Ամէն ճիգ անցած էր ապարդիւն: Մահ տեսնելու վարժ այդ հաստատութեան մէջ ընդհանուր տխրութիւն մը կը տիրէր:

— Հիմա ի՞նչ պիտի ընենք... Ծնողքին ձեռով մը լուր տալու ենք, — ըսի Մարկրիտին:

— Այո՛, բայց ո՞վ պիտի կատարէ այդ դժնդակ պարտականութիւնը: Մարկրիտ պաղատագին նայեցաւ ինծի:

— Չէ՛, մի նայիր ինծի այդպէս... աչքիս առջեւ կ'իյնան—կը մեռնի՛ն, հաւատա՛, աչքիս առջեւ կ'իյնան կը մեռնի՛ն, կամ կը խենթանա՛ն...

— Հեռագրե՞նք, նամակ գրե՞նք...

— Ո՛չ մէկը, ոչ միւսը... Երկու պարագային ալ, հետեւանքը նոյնը պիտի ըլլայ:

— Ուրեմն սպասենք, ու թաղումէն ետք, կամաց—կամաց զանոնք նախապատրաստելէ ետք, կ'իմացնենք:

— Չ'ըլլար... Դուն չես ճանչնար հայ ծնողքը... Եթէ այդպէս ընենք, անոնք բնաւ պիտի չներեն քեզի, ոչ ալ ինծի:

Գիշերը, օդանաւով վերադարձայ Նիւ Եորք ու առտու կանուխ, Տիկինն ալ միասին առջնելով՝ գացինք Թորամանեաններու տունը:

— Հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք, խեր ըլլա՛յ, առտու կանուխ դուք ալ մեր տունը կու գա՞ք եղեր...

—

Կասկածեցան:

Չար լո՞ւր մը ունիք:

— Այո, գէշ լուր մը ունիմ, — ըսի ես վարանքով, — քիչ առաջ Մարկրիտը կանչեց ու ըսաւ, որ երբ Հայկ հիւանդատար կառքով մը, երկու այլ բժիշկներու հետ վար ինկած ու բռնկած օդանաւի մը ճամբորդներուն օգնութեան կը փութար, ճամբան կը զարնուին ուրիշ կառքի մը ու բոլորն ալ գէշ կերպով կը վիրաւորուին: Եկայ ըսելու, որ ես կը կարծեմ, թէ լաւ կ'ըլլայ, որ անդամ մը ամէնքով երթանք հոն: Մարկրիտն ալ բոլորովին մինակ չի զգար...

Կասկածեցան:

Պնդեցին, որ երդում ընեմ:

Ըրի: Չհաւատացին ու սկսան լալ:

— Եթէ պատահածը պարզ արկած մը ըլլար, մեզ հոն տանելու չէիր աշխատեր ու ինքդ չէիր գար մեզի հետ:

— Մե՞ղք գործեցի ձեզի ընկերանալ ուզելով...

Անվերջ թուող տաժանելի ճամբորդութենէ մը ետք, երբ տեղ հասանք ու իրականութեան տեղեկացան, խնդիր մըն ալ հոն ծագեցաւ:

Ծերունիները ուզեցին Հայկին դիակը փոխադրել մեր քաղաքը եւ ամփոփել ընտանեկան դամբարանին մէջ:

Մարկրիտ մերժեց:

— Ես ո՛ւր՝ ամուսինս ալ հո՛ն, — ըսաւ:

Օրէնքը կնոջ կողմն էր:

Ծաղիկներու դէզի մը տակ, գոց դագաղը փոխադրուեցաւ գերեզմանատուն եւ դրուեցաւ յօրանջող փոսին մէջ:

Ըսի՛ թէ դագաղը գոց էր: Կնքուած: Մահացեալի ծնողքին բոլոր դիմումն ու խնդրանքը, որ անգամ մը բացուի դագաղին կափարիչը ու իրենք վերջին անգամ տեսնեն իրենց զաւակը, անցաւ ապարդիւն:

— Այդպէս լաւ է. կը յիշէք զինք իր լաւ օրերու դէմքով ու կերպարանքով, — ըսին:

Թաղման արարողութենէն ետք, փափա թորամանեան ուզեց, որ ըստ հայկական սովորութեան, հոգեճաշ տայ քաղաքի լաւագոյն ճաշարաններէն մէկուն մէջ: Ներկաները, մեծ մասով բժիշկներ, ուսանողներ ու հիւանդապահուհիներ, զբաղում պատրուակելով՝ մերժեցին: Կարծեմ չկրցան ըմբռնել, թէ Հայկին պէս անուշ ու խոստումնալից տղայ մը հողը դնելէ ետք, ի՞նչ սրտով կրնային սեղան նստիլ, շաղակրատել ու ճնկել...

Շիտակը, ես ալ չեմ կրցած հասկնալ ինչ որ տեղի կ'ունենայ հայկական հոգեճաշերու ընթացքին: Կը մոռնան հողը գրուողը ու սովահարներու պէս կ'ուտեն ու կը խմեն... Ո՞վ դիակ, թերեւս ներքուստ կը ցնծան, որ հողը դրուողը իրենք չէի՛ն, այլ՝ մէկ ուրիշը... Թերեւս խմիչքը կը սրէ ախորժակները ու կը բթացնէ զգացումները...

Թերեւս...

Օ՛, թող դժոխք երթան այս քերեւաները...

Յաջորդ օրը, առտու կանուխ, «մնաք բարով» ըսինք Մարկրիտին ու վերադարձանք տուն:

Երբ աուն հասանք, այր ու կին, երկուքով կրկին լացին անյուսօրէն ու ըսին արցունքներու մէջէն, թէ ամէն բան վերջացաւ.

— Պարոն Արամս, ա՛լ մեր կեանքը արժէք մը չունի, եթէ հոգէառը այսօր գայ, վաղը եկուր չենք ըսեր, մեզի համար ամէն բան վերջացաւ...

*
*
*

Սուգի եւ տխրութեան այս օրերէն հազիւ երկու ամիս անցած, օր մը մեր տան դուռը զարնուեցաւ: Դուբսինը ով որ էր, անհամբեր ըլլալ կը թըւէր, որովհետեւ, հազիւ կէս ըրպէ անցած՝ մատը կրկին դրաւ ելեկարանի կոճակին: Տիկինը ոտքի ելաւ:

— Կեցի՛ր, կնի՛կ, ես բանամ, տեսնենք ո՞վ է...

Թորամանեաններն էին: Ներս մտան, ծիծաղելով ու երջանիկ: Մենք՝ որ անոնց աչքերը չոր չէինք տեսած, այս հոգեփոխութեան առջեւ մնացինք ապշած:

Ծերունի թորամանեանը, հիւրանոցի ջահին աակ կայնած՝ ետ-առաջ կը ճօճէր ու իր բերնէն յորդող օղիի բուրումով կը լեցնէր սրահը:

— Կնի՛կ, — ըսաւ վերջապէս, — ի՛նչ սերսէմի պէս կայներ ես, սա ծոցէդ հանէ թուղթը ու ցոյց տուր մեր բարեկամներուն, որ անոնք ալ ուրախանան... Անոնք մինակն են, որ մեր սեւ օրերուն կու լան մեզի հետ, ու հիմա իրաւունք ունին ուրախանալու դարձեալ մեզի հետ... Կնի՛կ, ծոցէդ հանէ՛ սա թուղթը ու տուր պարոն Արամին, որ կարդա՛յ...

Կինը, լայն ժպիտը գէմքին՝ ծոցի մորթին վրայէն հանեց դեղնագոյն քառակուսի թուղթ մը, ու դայն համբուրելէ ետք, երկարեց ինծի:

Ես, անգամ մը դայն ինքզինքիս համար կարդալէ ետք, կարդացի բարձրաձայն.

«Սիրելի մամա ու փափա. սթօփ. մանչ թոռ մը ունիք. սթօփ. անունը հիւանդանոցի տումարին մէջ գրել տուի Հայկ. սթօփ. սիրով, Մարկրիտ»:

— Լսեցի՞ք, մարդիկ, մանչ թոռ մը ունիմ, անունն ալ՝ Հայկ-Մարկրիտ, անո՛ւչ աղջիկ, ես քեզի մեղա՛յ, եւ քեզի մեղա՛յ, հազա՛ր անգամ, միլիոն անգամ ես քեզի մեղա՛յ, հուաք է կըրլ, հուաք է ուռնտըրֆուլ կըրլ...

Յաջորդ օրը, առտու կանուխ, զիրենք օղակայան տարի, որ երթան թոռներնին տեսնեն:

Երեք օր, լման երեք օր, ստիպուեցայ մտիկ ընել զիրենք, երբ վերադարձան երջանիկ եւ ուրախ: Յաջողեր էին համոզել Մարկրիտը, որ փոխադրուի Նիւ Եորք ու հոն հետեւի Գոլումպիա Բժշկական Համալսարանի դասընթացքներուն: Կարծեմ այս որոշման մէջ մեծ բաժին էր ունեցած մեծ մայրիկին այն հաստատումը, որ եթէ մնան ուր որ են, ո՞վ հոգ պիտի տանի իր անգին թոռնիկին... Մինչ Նիւ Եորքի մէջ, կայ ինք ու եթէ հարկ ըլլայ, մեծ հայրիկը պատրաստ է իր սիրասուն թոռնիկին համար հոգատար մը վարձելու, որ պիտի ապրի իրենց ընդարձակ ու հանգստաւէտ տան բազմաթիւ սենեակներէն մէկուն մէջ:

Ու իրենք պիտի ըլլային երջանիկ. խելայեղօրէն երջանիկ:

*
*
*

Պզտիկ Հայկը հիմա չորս տարու է: Սիրուն ու շփացած: Երբ օր մը բարեմտօրէն ըսի իր մեծ հօրը, թէ շատ կը շփացնէ դայն, շատ մեծ լրջութեամբ պատասխանեց, թէ «մեծ հայրերու պարտականութիւնն է իրենց թոռները շփացնել»: Հիւրանոցի ու խոհանոցի պատերը, որոնք ճերմակ են ներկըրած, լեցուն են մանկական մատնադրոշմներով ու գծագրութիւններով: Մեծ հայրիկը պատուիրած է, որ չսրրուին անոնք, սրբել համարձակողին մատները կը կոտրտե՛մ, գոռացած է օր մը, ու շուրջինները, բոլո՛րը, հաւատացած են այդ սպառնալիքին:

Ըլլալով արեւելքցի ու ճակատագրապաշտ, մխիթարուած են Հայկի կորուստով.

— Ի՞նչ ընենք, իր ու մեր ճակատը այդպէս է դրուած եղեր, — ըսին ու համակերպեցան: Մարկրիտը կը սիրեն իրենց հարազատ աղջկան պէս ու կը կատարեն անոր ամէն մէկ քմահաճոյքը: Միակ մտահոգութիւննին այն է, որ Մարկրիտ, վկայական առնելէ ետք՝ պիտի մնա՞յ Նիւ Եորք ու իրենց մօտ:

Օր մը, երբ այդ մասին խօսք բացուեցաւ մեր ու իրենց միջեւ, ըսին, թէ երբ այդ օրն ու պահը գայ, «գետն անցնելու միջոցը կը գտնեն»...

Մարկրիտ շատ մօտ է ինծի: Օր մը, երբ պարտէզը նստեր էինք թմբիի շուքին աակ, ըսաւ, որ խոստովանութիւն մը ունի ընելիք. գիտէ, թէ ինձմէ գաղտնիք դուրս չ'ելլեր, ու մինչեւ հիմա այդ գաղտնիքը ինծի չվստահելուն համար խղճահար է:

— Չեմ կրցած մոռնալ, թէ դուն, առաջին մէկ օրէն, դաշնակից էիր մեզի: Մեր դժուարութեան օրերուն վստահելի բարեկամ մը եղար, — ըսաւ: Ու իր աչքերը լեցուեցան:

— Ինծի գաղտնիք մը խոստովանելու վրայ էիր, — ըսի նիւթը փոխելու համար: Ու, ի՛նչ մեղքս պահեմ, կարծեցի, թէ նոր սիրոյ մը մասին էր իր ընելիք խոստովանութիւնը:

— Այո, գաղտնիք մը պիտի խոստովանէի քեզի. գիտեմ, որ պիտի չյայտնես ոչ ոքի, բայց դարձեալ կը խնդրեմ, որ իմ հոգիիս անդորրութեան համար, խոստանաս չյայտնել ոչ ոքի:

— Ի՞նչ խոստանամ, — ըսի՝ աջ ձեռքս դէպի երկինք բարձրացուցած:

— Քեզի կ'ըսեմ, որովհետեւ դուն մեր հարազատը, մեր ընտանիքին անդամը կը համարուիս, մեր լացն ու ժպիտը, որ շատ քիչ անգամ պատահեցաւ, բաժնած ես մեզի հետ... Խնդրեցի քեզմէ, որ յայտնելիք գաղտնիքս չյայտնես ոչ ոքի՝ ո՛չ թէ այպանելի բան մը ըլլալուն համար, այլ վախնալով, որ օր մը, ձեւով մը, կը հասնի ծերունիներուն ականջը: Ու գիտեմ, որ անոնք բնա՛ւ, բնա՛ւ պիտի չներեն ինծի, ու աւելին ըլլալով, պիտի տառապի՛ն:

— Մարկրիտ, սիրելիս, նախաբանդ իսկ կը սարսափեցնէ զիս:

— Չէ, մի սարսափիր, սարսափելու բան չկայ, աննման, հրաշալի նուիրաբերումի մը մասին է հարցը... Գիտես, թէ Հայկը ինչպէս ամբողջութեամբ, ամբողջ էութեամբ բժիշկ էր, մարդկութեան ցաւը ամոքելու համար իրմէ աւելի նուիրուած մը դեռ չեմ ճանչցած:

— Գիտեմ, թէ նուիրուած մըն էր:

— Ուէ՛լ, երկու տարի առաջ, իր աչքերը, ու իր մահէն քանի մը ամիս առաջ ալ, ամբողջ մարմինը նուիրեց հիւանդանոցին ու բժշկական վարժարանին: Տարիներ առաջ, ազգային, այսինքն՝ քաղաքային ձրի հիւանդանոցները, մեր ուղածին չափ դիակ կը հայթայթէին ուսանողութեան դասի ընթացքին հերձումի համար, բայց վերջերս, քանի պետութիւնը սկսած է հիւանդանոցներու մէջ մեռնող անտէր համարուած մեռելներուն համար գումար մը տրամադրել իբրեւ թաղման ծախս, անտէր համարուածներուն պարագաները յանկարծ շատցան. պետութեան տրամադրած գումարին կէսով կը թաղեն մեռելը՝ ու մնացածը կը գրպանեն: Առաջ Բրուտին Արտը(*) թաղւող շատ կար. հիմա չկայ: Աս ալ կայ, որ հիւանդանոցին մէջ մեռնող ապառողջ մարդոց մարմինն մասերը առհասարակ անպէտ են՝ նորոգութեանց համար: Այդ գործին համար արկածով մեռնող առողջ մարդոց մարմնէն առնուած կտորներ կ'օգտագործուին:

— Հասկցայ, մնացածը ըսելու պէտք չունիս...

(*) Բրուտին Արտը. — Երբ Յուդա մատնեց իր Տէրը իսա՛ն արժաթի փոխարէն, Յիսուսի խաչելութենէն ետք խղճահարուելով եղաւ անձնասպան: Հրեաները չուզեցին քաղել անոր պիղծ մարմինը իրենց գերեզմանատան մէջ. անոր ծոցի քան արժաթով գնեցին Բրուտին Արտը ու հոն քաղեցին գայն: Հիմա ամէն քաղաքակիրթ երկրի մեծ քաղաք, իր անտէր մեռելներուն համար, ունի իր Բրուտին Արտը:

— Իր մահէն ետք, ակնաբոյժ բժիշկը, լալով — Հայկի մտերիմն էր — անոր աչքերը, սքանչելի բարի աչքերը փոխադրեց ի ծնէ կոյրի մը: Երկու ամիս ետք, մասնաւոր հրաւերով ներկայ էի, երբ վերակապերը բացին ու կոյրը առաջին անգամ ըլլալով տեսաւ լոյսն ու գոյները... Կարծեցինք, թէ պիտի խենթենար:

« — Տեսա՛յ, կը տեսնե՛մ, Աստուա՛ծ իմ, մարդի՛կ, կը տեսնե՛մ, — գոչեց արտակարգօրէն յուզուած, — տեսայ ձեր գէմքը... որքան սիրուն էք... երկնքի հրեշտակները ձեզի պէս ըլլալու են... Որչա՛փ թերի է երեւակայութեամբ տեսնուած աշխարհը... Գոյներէն կապոյտը ո՞րն է, սպասեցէ՛ք, գիտե՛մ, երկինքը կապո՛յտ է, մարդը՝ կանաչ ծաղիկները՝ գոյնզգոյն... Ա՛խ, իմ բարի, բարի ուսուցիչները, որոնք կը ջանային գոյները երաժշտութեան օգնութեամբ ըմբռնելի դարձնել ինծի, երբ միայն սեւը կը ճանչնայի ես... ու ինծի հետ՝ բոլոր ինծի պէսները... Ա՛խ, ինչպէ՛ս կարելի էր... Շնորհակալութիւն, բժիշկ, հտգա՛ր շնորհակալութիւն, տո՛ւր, տո՛ւր ձեռքդ համբուրեմ ու գնեմ ճակտիս. մինչեւ մահուանս պահը երախտապարտ պիտի ըլլամ քեզի, օգնականներուդ ու այս բախտաւորութիւնը ինծի կամեցողներուն»:

« — Ին առաջ այս տիկնոջ, — ըսաւ բժիշկը՝ զիս ցոյց տալով, — անոր սքանչելի ամուսնոյն աչքերովն է, որ հիմա կը տեսնես մեզ՝ ու աշխարհը»:

« — Շնորհակալութիւն, քոյր, շնորհակալութիւն, կը ցաւիմ, որ իմ երջանկութիւնը քո դժբախտութեան վրայ հիմնուեցաւ, կը ցաւիմ, իսկապէս կը ցաւիմ...»:

— Կարծեմ, — շարունակեց Մարկըրիտ, — ուրիշ շատ բաներ ալ ըսաւ, բայց ես չլսեցի: Կու լայի. Տարին զիս դուրս: Կարծեմ իր օրհնութիւնը տարածեց մինչեւ Հայկին ծնողքը, որոնք լուր չունին այս բոլորէն:

— Թերեւս, եթէ օր մը ըսենք, իրենք ալ ուրախ ըլլան:

— Չեմ կարծեր... Մա՛նաւանդ՝ որ դեռ խոստովանութիւնս չեմ ամբողջացուցած:

— Ներողութիւն ընդմիջելուս համար:

— Այն դադաղը որ քու, իմ ու բազմաթիւ մարդոց ներկայութեան փոսիջեցուցինք, պարապ էր:

— Ի՛նչ, — կարծեմ գունատեցայ ես, — կը կատակե՞ս...

— Չէ՛, չեմ կատակեր... Ըսի արդէն, թէ Հայկ իր ողջութեան իր մարմինը հիւանդանոցին էր կտակած: Իր անակնկալ ու անժամանակ մահէն ետք, այդ կաակը բեկանել տալու համար բոլոր ճիգերս ու արցունքներս ապարդիւն անցան... Այն ատեն, խնդրեցի բոլորէն, որ գործակցին ինծի՝ խաբելու համար Հայկին ծերունի ծնողքը: Հաւանեցան: Որոշեցին, իբր թէ պեասական արգելքով, դադաղը պահել գոց ու կնքուած՝ ու այդ ձեւով իջեցնել փոս: Գիտես անչուշտ, թէ շատ ալ դիւրին չեղաւ այս որոշման իրագործումը, բայց վերջապէս քահանան համոզեց զանոնք, որ լաւ է չտեսնեն Հայկին աւերուած դիմագծերը, ու յիշեն զայն՝ իր լաւ օրերու կերպարանքով:

Մարկըրիտ իր ցորենագոյն մորթին վրայէն մաաովը սրբեց դէմքէն վարսողացող արցունքի կաթիլ մը, ու շարունակեց.

— Այո՛, բարեկամս, ծաղիկներու դէզի մը տակ յօրանջող փոսին յանձնըւած դադաղը պարապ էր:

— Այդ իրողութիւնը արգելք մը պիտի չըլլայ որ, — ըսի, — ամէն մեռելոցի օր, քահանայ մը գտնենք ու վրան աղօթք մը կարդալ տանք... Այդ

բանը արգելք պիտի չըլլայ, որ երբեմն երկու թել ծաղիկ դնենք այդ «քան-
չելի աղուն վրայ... Մենք՝ հայերս, շատ լաւ դիւանք այդ պարագան. Թուր-
քիոյ, Տաճկահայաստանի ու արաբական անապատներու լայնքին ու երկայն-
քին ցրուած հազարաւոր սիրելիներու անյայտ գերեզմաններ ունինք, որոնց
վրայ, տարին գէթ անգամ մը, իրենց բացակայութեան, կ'աղօթենք, կու լանք
ու խօսքի կը բռնուինք հետերնին...

*
**

Ինչպէս քիչ վերը ըսի, մօտ օրէն Մարկրիտ պատուով շրջանաւարտ
կ'ըլլայ ու իր արուեստը ուղած աեզը կիրաբկելու իրաւուն կը ստանայ: Փոք-
րիկ Հայկի մանկապարտէզ ընդունուելու օրերն ալ կը մօտենան... Այդ ու
կին մտահոգուած ենք: Թորամանեաններու տան մէջ գթուար կացութիւն պի-
տի ստեղծուի կը կարծենք: Մարկրիտ դեռ շատ երիտասարդ է ու շատ ալ դե-
ղեցիկ: Մեղրի բուրում առնող ճանճերու պէս իր շուրջ դարձողներ շատ
կան... Բնական է, որ ան չուղէ յաւիտենապէս ապրիլ ծերունիներու շուքին
ու հովանիին տակ... Փափաքի առանձինն տուն-տեղ ըլլալ... Շնորհակա-
լութիւն յայտնէ ու, իր ձագին թաթիկէն բռնած՝ մէկ աչքը չոր, միւսը թաց,
հեռանայ...

— Այն ատեն վայ է եկեր մեծ հայրիկին, — ըսի օր մը կնոջս:

— Ի՞նչ մեծ հայրիկի մասին է կը խօսիս, — ըսաւ կինս:

— Այ կնի'կ, քանի՞ մեծ հայրիկ կը ճանչնանք... Թորամանեան մեծ
հայրիկին մասին էր խօսքս: Կը մտածէի, թէ օր մը չէ օր մը, Մարկրիտ
պիտի ձգէ այդ տունը:

— Դեռ այդ օրը չէ եկած, — ըսաւ ան, — իսկ երբ դայ, Աստուած
չա'տ ամուր է շինած մարդ արարածը. անոր ալ կը դիմանան. փաշայի պէս
աղուն մահուան դիմացան՝ անո'ր ալ կը դիմանան: Յետոյ, եթէ անուշու-
թիւնով բաժնուին, միշտ կ'երթան-կուգան իրարու:

— Ատենը անգամ մը երթալ-գալն ուրի՛շ, միշտ միեւնոյն տան մէջ
ըլլալն ուրի՛շ... Կ'երեւակայեմ, երբ Թորամանեան շատ կարօանայ իր թոռ-
նիկին, պիտի երթայ պատերուն վրայ անոր ձգած մանկական գծազրութիւն-
ներուն առջեւ կայնի ու ժամերով դիտէ դանոնք, յետոյ դառնայ իր կնոջ ու
ըսէ.

— Հեղինէ, չըլլա՛յ, չըլլա՛յ, որ դպիս ասոնց... Տուն մաքրելու եկող
կնկան ալ պատուիրէ՛ չդպի ասոնց... Կնի'կ, կը հասկնա՞ս, պատուիրէ սխը-
սխը, որ չդպի՛ ասոնց...

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Ա Ք Ո Ի Ա Մ Ա Ր Ի Ն Ա

Կու գաս դժուար՝ ինչպէս նշոյլը յոյսի:
 Ով իմ ցնորք ապօրինի, գիտեմ... կու գաս
 խշրտալէն ժամերու գսպանակին մէջ սառած
 եւ քեզի հետ բնծաներու մահաբեր նաւեր,
 նաւե՛ր ատելութեան, նողկանքի:

Խաւար անհուն: Մահուան բոցեր վիռկակերպ: Ապականած աւազնե-
 բուն երազաբաշխ բոնաբարուած հորիզոն, ուր կը շնչես դուն անշունչ
 դիակներու հեղուկացող, լաւայացող գառանցանքներ: Ապրի՞լ... ինչո՛ւ...
 կեանքը յամառ է հիմա եւ դուն միակ, վերջի՛ն պայմանն ես կեանքին:

Պէտք է ապրիլ:
 Պէտք է ծնիլ գեհեցիկն մէջ այս օտար՝
 օտարութիւնը կեանքի, օտարութիւնը մահուան
 եւ նողկալի այլանդակումն արիւնի...

Ծո՛ւլ, անցեալի դիւցազնաշունչ սիրուհի,
 երազներու, տեսիլներու կապոյտ շուշան,
 անէութեան ու մեր մահուան միջեւ ծագող
 ընդարձակուող բուրումներու անմար մատեան,
 վարդագոյն չես,
 եւ նաեւ չեմ ես վարդերու ծովը կեանքի.
 Իսկ դիցուհիդ սեւազգեստ՝
 գինեալներու խրամներուն մէջ բոզացած,
 — գեղեցկօրէն գեղեցկացած աւերակ —
 մահիճներուն գարշաբոյր մանուկ դուեր կը ծնի...

Լոյսե՛ր, լոյսե՛ր, յոգնած լոյսեր,
 մեր օրերուն հետ սպառած ջուրերն ի վար
 սուգուող, թաղուող երազներու յոգնած խօսքեր:

Լոյսեր, նաւեր, լոյսեր, նաւեր, մահուա՛ն գիրքեր,
 հիմա պղտոր, խուլ, հաշմանդամ, կոյր ու անկեանք ձեր շողերուն,
 ձեր շողերուն մէջ կը ծնիմ կեանքի, լոյսի՛ շարականներ...
 ու տակաւին՝

իմ իսկ մութէն,
 իմ էութեան, մեր մթութեան խորխորատէն
 Քարափն ի դէմ, նաւերն ի դէմ՝
 ճիգակներու պէս խոյացող ըմբոստութեան փոթորիկներ...

Ե Ր Կ Ո Ւ Ն Ք

Տեսիլներն իմ ծովափներուն կը թողում
 եւ կը սուրամ ես լոյսի բարձունքներու սաղարթին՝
 իբրեւ արֆայ եւ գնչու ուխտագնաց ցաւագին:

Անտառն ամբողջ կը կծկուի ծաղիկի մը սրտին մէջ
 եւ ծովափին տարտղնուած տեսիլներն իմ սնամէջ,
 ձուերու հետ աննրագ, կը փոթորկին էջ առ էջ:

Կասկածներու էջերն անգիր — յիշողութիւն ֆայֆայուած —
 իմ բիրերուս երկփեղկուած հայելիին ակունքներէն,
 յիշողութեան ոստերէն, մշուշներէն, գետերէն
 եւ իմ արեան խառնակուտակ փեթակներուն խաւարէն
 գորակոչի ենթարկուած՝ դառնութեան մեղր կ'արարեն...

Տեսիլներն իմ ծովափներուն կը ցանեմ
 եւ հրաթեւ առասպելի մը նման
 ես կը սուրամ լոյսերու անրջական անտառին՝
 իբրեւ սիրոյ եւ լոյսի ուխտագնաց ցնծագին:

Ի Ն Ք Ն Ա Ճ Ա Ն Ա Զ Ո Ւ Մ

Նստած է ան գիշերուան մէջ
 եւ բիրերուն յանդիման ադի ծառին աւերակ ստինքներէն
 ժամանակի վարդերը վառ կը վազեն:

Աղֆատութեան անապատէն կը ծնի գոյնն սպասեալ
 եւ բիրերուն ստրկութեան երկինքին
 Բացերն ամբողջ նարնջագոյն փոթորիկներ կը խօսին:

Ելաւ ոտփի՝ թախիծով մը թեւաւոր,
 Ու երբեմնի ձեւագեղծ դէմքը խայտաց,
 Պղտորեցան հայեացքները ծուլութեան
 Եւ պղպջաց Աստուծոյ անդիմորոշ գիծերուն ուռկանն ի վեր
 Բզկտուած հոծ գիշերը հոգիին:

Ու բիրերէն, իր բիրերուն վառ ջուրերէն որոտացին
 Լինելութեան գիծերն անբիծ,
 Նախագիծը գիծերուն, իր գիծերուն անծանօթ
 Տեսիլները անջրպետներ յղացան
 Ու աննման եւ հեղուկ լուսադէմքն իր կերտեցին...

Մ. Ի Շ Խ Ա Ն

Մ Ի Ն Ա Ս Ա Շ Ի Ա Տ Ո Ղ

**

Գարնան սկիզբներն է. բացառիկ այն օրերէն մէկը, երբ արեւուն ջերմութենէն կանանչապաա դետինը կը խայտայ կարծես եւ գինովցնող բոյրեր կը ծփան միջօցին մէջ: Ծիծեռնակի թեւեր կը սահին երկինքէն: Ուսանողներս դուրսն ենք, ծառերուն տակ, պարտէզի ածուներու եղերքին:

— Տղա՛ք, Մինասը տեսնող եղա՞ւ, քանի օր է մէջտեղ չկայ նորէն, — հարց կու տամ ընկերներուս:

— Ո՞ւր պիտի ըլլայ, սենեակը նստած դաս կը սորվի անպայման, ուրիշ ի՞նչ կրնայ ընել, — կ'ըսէ Վաղդէն:

— Պաաւօ՛ հաւասին, — կ'աւելցնէ Յակոբ, — այսպիսի արեւոտ օրով ալ մարդ սենեակը կը փակուի՞:

Բայց խօսքը մեր բերանը կը մնայ: Քիչ անդին, ծառուղիին մօտ կը նշմարենք Մինասը, առանց վերարկուի, ձեռքերը տարատին գրպանը, անհող ու ծոյլ մարդու թափառող քալուածքով: Հրա՛ջք... Մինաս դուրս ելած է սենեակէն, Մինաս դաս չի սորվիր, Մինաս կը պտըտի ծառուղիի երկայնքին: Խումբով կը վաղենք գէպի իր կողմը: Գժբախտութի՞ւն մը պատահած է արդեօք:

— Ի՞նչ է, Մինաս, պարապ ժամանակ կը վատնես կոր...

— Այդպէս է, այսօր այդպէս եղաւ... Մաաենազարանը նրսաած կ'աշխատէի՝ աշխարհիս բոլոր սատանաները մէջս մտան:

— Խեր ըլլայ, նոր բա՞ն մը կայ:

— Նոր բանը սա հրաշալի արեւն է, սա կանանչ մարգագետինը: Գլուխս կեցեր է, չ'աշխատէիք: Ինծի ասանկ բան չ'էր պատահած: Մարգագետնին վրայ տապալակիլս եւ խոտերը ուտելս կու գայ...

— Ատոր արածիլ կ'ըսեն, — կը հեզնէ Ղեւոն:

— Ճիշդ բառն է, արածիլս կու գայ: Պէ աղբար, ի՞նչ փափուկ խոտ է, ի՞նչ խորունկ կանանչ. մեր կողմերը ասանկ բան չես գտներ:

Մինաս յափշտակուած, վերացած երեւոյթ ունի. գիւտ մը ընողէ ինքնամոռաց երեւոյթը: Կարծես նոր կը տեսնէ մարգագետինը, ծառերը, ծաղիկները եւ անոնց վրայ փռուած ոսկի արեգակը: Իր աչքերը կը յիշեցնեն դարնանամուտին դոմի խաւարէն առաջին անգամ դուրս ելող ցուլերուն բոցափայլ նայուածքը:

— Գիտէ՞ք ինչ, աղա՛ք, ես այս մարգագետնին վրայ լայնքիս երկայնքիս պիտի աապլակիմ հիմա:

— Չընես, չ'ըլլար, չե՞ս տեսներ ցուցանակը:

Արդարեւ ցուցանակին գրութիւնը յսաակ է. «Արդէ՛լուած է կոխկուտել մարգագետինը»:

Մինաս կը զարմանայ արգելքին համար. անիմասսա եւ անտեղի կը գտնէ զայն: Խոտը հոն է, որ ծամես կամ ալ վրան պառկիս ուզածիդ պէս: Այլապէս ինչի՞ կը ծառայէ հրաշալի սա դալարիքը: Եւ ահա ամբողջ հասակովը կը պառկի մարգին վրայ եւ կը սկսի թաւալիլ մէջը, երբեմն-երբեմն բացագանչելով:

— Օ՛խ, ի՛նչ աղուոր է, ի՛նչ հաճելի. մարդ կը թարմանայ, բոլոր յոգնութիւնները կը մոռնայ:

Չես գիտեր ուրկէ՛, չես գիտեր ինչպէ՛ս, ոստիկան մը կը տընկըւի յանկարծ:

— Բայց պարոն, չէ՞ք տեսներ, որ արգիլուած է, ցուցանակը չէ՞ք կարդար:

— Ներողամիտ կ'ըլլաք, — կը միջամտէ Յակոր, — մեր ընկերը գիւղացի է եւ իր գիւղին էջերը միտքը ինկած են... Ձգեցէք որ կարօտը առնէ հողէն եւ խոտէն:

Ոստիկանը կը ժպտի ներողամիտ ժպիտով, թեւերը վեր կ'առնէ իբրեւ զարմանքի նշան ու կը մեկնի:

Մինաս ոտքի է՝ գոհ եւ յաղթական: Դէմքը պայծառացած է, շարժումները՝ կենսայորդ:

— Օ՛խ, — կ'ըսէ, — վերածնայ կարծես: Եւ հիմա՝ օ՛ն, յառաջ դէպի աշխատանք:

— Վաղէ՛, վաղէ՛, սենեակդ մտիր, այսօր շատ ժամանակ կորսընցուցիր, — կ'ըսէ Վաղգէն եւ բոլորս ալ կը խնդանք:

**

Քննութեանց թուականը կը մօտենայ: Մինաս կատազօրէն նետուած է գիրքերուն վրայ: Դժուար է իրեն հանդիպիլ ուսանողական շրջանակներու մէջ: Իրիկուն մը դինք կը բռնեմ ճաշարանի դրան առջեւ. աւելի եւս նիհարցած է, աչքերը արիւնոտ եւ կոպերը ուռած:

— Մինաս, ինայէ՛ առողջութեանդ, հիւանդ պիտի ըլլաս, — կ'ըսեմ կարեկցութեամբ:

— Շատ չեմ աշխատիր, — կը պատասխանէ ամենայն պարզամտութեամբ, — գասերս կարգի գրած եմ արդէն: Երէկ գիշեր մինչեւ առտուան երեքը միայն աշխատեցայ:

Մինչեւ առաւօտեան ժամը երեքը... Եւ ասիկա չափաւոր աշխատանք է Մինասին համար: Աստուած իմ, գլուխը պիտի կորսընցընէ այս տղան: Դասամոլութեան ախտը պիտի սպաննէ դինք: Յանկարծ կը դառնայ եւ մտահոգ հարց կու տայ.

— Վաղգէնը օրը քանի՞ ժամ կ'աշխատի, լուր ունի՞ս. չըլլայ ինձմէ աւելի կը նստի կոր:

— Ո՛չ, Մինաս, ո՛չ, Վաղգէնը քու կէսգ չ'աշխատիր, այդ մասին անհոգ եղիր:

— Հա, սանկ ըսէ... ինձի համար մեծագոյն ցաւն է գիտնալ, թէ ընկերներէս ոեւէ մէկը գիշերը սեղանին առջեւ ինձմէ աւելի նըստած եւ սերտած է: Ատանկ բան չեմ հանդուրժեր ես:

— Մինաս, — կ'ըսեմ ձեռքս ուսին գնելով, — անկեղծ եղիր, չէ՞ս զղուիր դաս սորվելէն, հաճոյքով կ'աշխատիս, թէ կը ձեւացընես հաճոյք ստանալ:

— Ի՛նչ կ'ըսես, արիւնս կ'եռայ, երբ դասի նստիմ եւ գիրքս

բանամ : Քննութեան օրերուն ես նման եմ ձիարչաւի գացող նժոյգներուն... քննութիւնները հանգէս են ինծի համար : Ի՞նչ ուրախ եմ, որ հանդէսները կը սկսին շուտով...

Ո՛չ փառասիրութիւն, ո՛չ ցուցամոլութիւն : Պարզապէս գինովութեան տեսակ մը, աշխատելու գերագոյն հաճոյքը : Ըսուած է, թէ մարդկային բնութեան հարազատ գիծը ծուլութիւնն է : Մինասի բնութիւնը հակառակը կը փաստէ : Տարբեր խմորով շաղուած ըլլալուն, թէ ինքնաներշնչումի հզօր ընդունակութեան շնորհիւ : Մեր ուժերէն վեր է ճշդել ատիկա :

Կեանքը Մինասին համար սորվիլ կը նշանակէ, եւ սորվիլը՝ կեանք : Ուրիշներ մահուան դրան առջեւ կ'ափսոսան սէրը, դինին, կեանքի այլազան հաճոյքները, Մինաս մէկ ցաւ ունի միայն, սերտել չկարենալու ահաւոր ողբերգութիւնը :

— Մահը, — կ'ըսէ, — շատ գէշ բան է :

— Ինչո՞ւ, Մինաս, ինչո՞ւ մտահոգուած ես :

— Երբ կը խորհիմ, թէ մեռնելէս ետք պիտի չկարենամ սորվիլ, խենթենալս կու գայ : Սա լեփ-լեցուն ուղեղս հողին տակ պիտի մնայ եւ պիտի գազրի գործելէ... ըլլալիք բան չէ :

— Զգայարանքներդ ալ հողին տակ պիտի մնան, անոնց չե՞ս մեղքնար :

— Անոնք հոգս չեն. կարենայի միայն ուղեղս փրկել եւ յաւիտեան լարուած պահել :

Մինաս կ'ափսոսայ կորսուած մանկութիւնը : Զկարծէք սակայն, թէ իր ափսոսանքը մանկութեան անուշ եւ անհող օրերուն համար են. եթէ անոնք ետ դառնան, ինք հիմա գիտէ, թէ ինչպէ՛ս պիտի լեցնէ զանոնք :

— Ութ-տասը ասրեկանիս գայլիկ էի : Ընկերներով ամբողջ օրը կը խաղայինք եւ կը վազվզէինք : Ի՞նչ յիմար եմ եղեր այն ատեն. որքա՛ն օրեր անցուցած եմ առանց բան մը ընելու : Մե՛ղք, մե՛ղք, կրնայի այն ատեն ալ դաս սորվիլ : Հազա՛ր ափսոս կորսուած օրերուս համար...

— Բայց Մինաս, — կը յիշեցնենք իրեն, — մօրդ գրկին մէջ կաթ ծծած ատենդ ալ կրնայիր դաս սորվիլ, փոխանակ շորերդ թըրջելու եւ քնանալու :

Մինաս մեզի կը նայի հարցական մեծարաց աչքերով, կարծես ըսել կ'ուզէ. «Իրա՞ւ, կարելի՞ էր արդեօք» :

— Տեղը աւելիով կը հանես կոր, — դիտել կու տայ Վազգէն, — լոյսդ մինչեւ առաւօտ չի մարիր :

— Իմ լոյսս պէտք չէ մարի : Իմ լոյսս պէտք է խառնուի առտրեան լոյսին : Իմ լոյսս պէտք է անսնուի վերջին քնացողին կողմէ, որպէսզի ամէնուն վրայ ծագի ի վերջոյ իմ մաքիս լոյսը :

— Հէ՛, կամաց, շատ բարձրէն սկսած ես թռիլ, — կը հեզնէ Աեւոն :

— Զի կրնար թռիլ, — կ'աւելցնէ Յակոբ, — յետոյքը փակած է աթոռին :

— Աթոռս եւ ես մէկ մարմին ենք, անբաժանելի միութիւն, ուրիշ ըսելիք մը ունի՞ք, — կ'եզրակացնէ Մինաս եւ կը խոյանայ դէպի մատենադարան :

Շատակերներու ձեռք բերած արդիւնքը կ'երեւի իրենց մարմ-

նին վրայ: Մեր Մինասն ալ շատակեր մըն է... մաքով: Յիշողութեան եւ դատողութեան երկանաքարերը անոր ուղեղին մէջ գիշերցերեկ կը բանին եւ կ'աղան անթիւ քանակութեամբ գիտելիքներ: Ասկայն արդիւնքը չ'երեւիր:

— Արդիւնքը, — կ'ըսէ ան, — տարուան վերջը պիտի տեսնէք: Երբ քննութիւնները վերջանան եւ անունները կախեն, ես հետուն պիտի կենամ ինքնավստահ եւ ապահով: Դուք վախ ու դողով պիտի մօտենաք կախուած ցանկին եւ իմ անունս ամէնէն վերը պիտի տեսնէք, ցանկին դիմաց... ըսէք, աշխարհի բոլոր հաճոյքները չ'առժե՞ր ասիկա:

— Բայց այդ օրը դուն հոն պիտի չըլլաս, որ վայելես հաճոյքը, — կ'առարկէ Վազգէն:

— Ինչո՞ւ, — կը հարցնէ Մինաս զարմացած:

— Դաս սորվելով զբաղած պիտի ըլլաս:

Կը խնդանք բոլորս, Մինասն ալ մեզի հետ:

**

Վերաքաղի ամսուան վերջին օրերն են: Ուսանողներու ամէնէն ծովերն իսկ սենեակներու մէջ փակուած դաս կը սորվին: Կը խորհիմ, թէ Մինասի սերտողական ուժականութիւնը անչափելի աստիճաններու հասած ըլլալու է: «Վա՛յ որ մէկը ինձմէ առաջ անցնի, վա՛յ որ առաջին չելլեմ, մա՛հ է ինձի համար»: Իր ընթացիկ խօսքերէն մէկն է, որ կը հնչէ ականջիս: Մինչդեռ անդին, քանի՛ քանիներ (անոնց շարքին նաեւ ես) կ'աղօթեն Աստուծոյ եւ կ'ըսեն. «Միայն թէ անցնիմ, ուրիշ բան չեմ ուզեր»: Մեծատունի եւ աղքատի տարբերութիւն...

Սենեակիս դուռը կը զարնեն ուժգին հարուածներով: Ո՞վ կըրնայ ըլլալ այս ժամուն, լարուած աշխատանքի այս եղանակին: Կը բանամ եւ դիմացս կը գանեմ Մինասը, աժդոյն, յոգնած, բայց բոցավառ աչքերով: Ինձի կը թուի, թէ տենդ ունի:

— Ի՞նչ է, Մինաս, հիւա՞նդ ես:

— Երանի՛ հիւանդ ըլլայի... աղէտ, փլուզում:

— Ի՞նչ է եղածը, դէ՛շ լո՞ւր մը առիր տունէն:

— Ո՛չ, աղբար, ո՛չ, չեմ կրնար կոր աշխատիլ...

— Իսկապէս ծանր աղէտ է ատիկա, — կը ջանամ ծաղրական շեշտ տալ խօսքիս եւ փոխել Մինասի տրամադրութիւնը:

— Մի հեղներ, խնդալու ժամանակ չէ, շատ գէշ է վիճակս:

— Լաւ, նստէ նայինք, հասկնանք՝ ի՞նչ կ'ըլլաս կոր: Երեւի չարաչար յոգնած ես:

— Ո՛չ, ուրիշ բան է. կարդացած միջոցիս գրքիս տողերուն վրայէն պլդուր կը քալէ կոր...

— Պլդո՞ւր կը քալէ:

— Այո՛, պլդուրի փիլաւին հոտն ալ քիթէս չի հեռանար: Եթէ այսօր-վաղը պլդուրի պատուական փիլաւ մը չուտեմ՝ ես կորսըւած եմ, քննութիւններուս կրնամ ձախողիլ:

— Մինաս, այս քաղաքին մէջ ուրտեղէ՞ն պլդուր գանենք. բրինձէ փիլաւ կեր, լմննայ երթայ:

— Չ'ըլլար, պլդուրը աչքիս առջեւէն չի հեռանար կոր. ես ընտո՞ր գիրք պիտի կարգամ:

Կացութիւնը լուրջ է իսկապէս... Մինասը, դիրքերը ուսող, դրադարանները լափող Մինասը մասնուած աշխատելու անկարողութեան... ձաւարի համար: Ճարր պէտք է դանել խկոյն, այլապէս աղան կորսուած է: Ընկերներս կը կանչեմ խորհրդակցութեան: Իրարու ետեւէ կը հասնին Յակոբը, Լեւոնը, Վաղդէնը, Կարոն, Ժաղլինը: Բոլորն ալ կ'ընդունին, թէ պարադան աւելի քան ծանրակշիռ է, եւ թէ՛ պէտք է ձարը գտնել: Ի վերջոյ Լեւոն յանձն կ'առնէ քիյօ մը պլղուր ճարել հեռաւոր թաղէ մը, ուր արեւելեան ապրանքներ վաճառող փոքրիկ խանութ մը դոյութիւն ունի: Պլղուրը կու դայ, փիլաւը կ'եփենք իմ սենեակիս մէջ, բոլորս միասին կը ճաշակենք խօսք ու կատակով: Ճաշի վերջաւորութեան Մինաս ոտքի կը ցատկէ, եւ կ'ըսէ.

— Տղա՛ք, վրաս նոր կեանք եկաւ, աչքերս բացուեցան. եւ հիմա՛ օ՛ն, յառա՛ջ դէպի աշխատանք:

Մինասի մեկնումէն ետք, Յակոբ դիտել կու աայ.

— Ի՞նչ թանկագին նիւթ՝ մեր ճառախօսներուն համար: Ի՞նչ մեծ հաճոյքով անոնք պիտի մասնանշէին Մինասը եւ ըսէին. «Ահա-լասիկ ձեզի մարմնացումը հայ ժողովուրդի դարաւոր եւ առասպելական աշխատունակութեան»:

Յաջորդ օր, Մինասին կը հանդիպիմ համալսարանի սանդուղներուն վրայ:

— Ի՞նչ է, Մինաս, նորէն դուրս ելեր ես: Ասանկ չ'ըլլար, ժամանակ կը կորսնցնես կոր:

— Իրաւունք ունիս, բայց ի՞նչ ընեմ. փրոֆեսօրս կանչեց էր: Անցած ամիս ուսումնասիրական թէզ մը ներկայացուցեր էի իրեն:

— Է՛, վախնամ չէ հաւնած...

— Հաւնիլն ալ խօ՞սք է. քսանի վրայ ասանինը դրեր է:

Եւ Մինաս յաղթական շարժումով աչքիս առջեւ կը դնէ սաացած նիշը: Կը նայիմ իբրեւ թէ աչքերուս չհաւատալով եւ կը բացադանչեմ.

— Պռաւօ՛, Մինաս, ասիկա աննախընթաց երեւոյթ է, ասանկ բան չէ տեսնուած համալսարանի պատմութեան մէջ:

— Հապա ի՞նչ գիտցաք. ինծի Մինաս կ'ըսեն. ես տրուած նիւթերուն ուղն ու ծուծը կը քամեմ: Քսանի վրայ տասնի՛նը... դիւանօս ի՛նչ ըսել է ասիկա... կեա՛նք է, կեա՛նք... Աշխարհիս ամէնէն անուշ վարդը այս թուղթին հոտը չունի:

Օրերէ ի վեր Մինաս ճաշարան չի դար. տաք կերակուրի երես տեսած չունի: Բոլորս ալ լաւ դիտենք, թէ ի՛նչ ձեւով կը կշտացնէ փորը: Կշտացնելը խօսք է անշուշտ. շատ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ կը խարէ փորը, հաց ու պանիրի քանի մը շերտիկներով:

— Խոշոր դաւաթ մը սեւ սուրճ կը խմես վրան՝ կը ընչնայ կ'երթայ: Ստամոքսդ կը փակուի, աչքերդ եւ միտքդ կը բացուին: Ինծի պէտք եղածն ալ ատ է արդէն:

Ստամոքս եւ զղայարանքներ Մինասի արհամարհանքին առարկան են տեւաբար: Անոնք բոլորն ալ ստրուկներն են մտքին: Իժդոհ է սակայն անոնց ծառայութենէն: Ստամոքսը պահանջկոտ կը գտնէ, իսկ զղայարանքները՝ դանդաղ, ժամանակի թշնամի:

— Ականջներս, — կը դանդատի յաճախ, — պէտք եղածին պէս չեն դործեր, երբ մտիկ կ'ընեմ դասախօսին ըսածները:

— Երեւի ականջներդ ծանրացեր են, Մինաս :

— Ո՛չ, ծանրանալու խնդիր չկայ, դանդաղաչարժ եղներու պէս ծանր ստեղծուած են անպիտանները :

— Զարմանալի է :

— Ինչո՞ւ կը զարմանաք. ձերինները աւելի լա՞ւ են : Մինչեւ որ փրոֆեսէօրի շրթունքին կիսաձայն շշուկները օգին մէջէն խլեն՝ ահագին ժամանակ կ'անցնի կոր :

— Զայն ըսածդ դանդաղ կը ճամբորդէ, դուն գիտնալու ես Փիզիքի այս օրէնքը :

— Մատներէս ալ դժգոհ եմ :

— Մատներո՞ւդ յանցանքը ինչ է :

— Դանդաղ են, աղբար, դանդաղ են. մե՛ղք իրենց տուած սնունդիս... չեն հասնիր կոր դասախօսին ըսածները բառ առ բառ նոթի առնելու :

— Ուրեմն կայծակնային մտքիդ ամէնէն վստահելի եւ հաւատարիմ ծառաները աչքերդ են, — կ'ըսեմ ծիծաղով եւ անմիջապէս յետոյ կ'աւելնեմ լրջութեամբ, — յարզը դիտցիր աչքերուդ, նայէ ի՛նչ եղեր են :

— Աչքե՞րս, է՛հ, դէչ չեն, բաւական դործ կը տեսնեն, բայց չէի՞ն կրնար երկուքը միասին գործելու տեղ առանձին-առանձին գործել :

— Ինչպէ՞ս :

— Մէկ դիրքի աեղ՝ երկու դիրք դնէի երկու աչքերուս առջեւ եւ ամէն մէկը իր գործը տեսնէր : Ժամանակի ի՛նչ խնայողութիւն կ'ըլլար : Նոյն պահուն երկու դիրքէ երկու դաս կրնայի սորվել :

— Ստեղծիչը այդքանը չէ խորհած. աղերսագիր մը զրկէ Աստուծոյ :

Կէս-կատակ, կէս-լուրջ ըսուած այս խօսքերուն տակ Մինասի հողին տանջող մեծագոյն խնդիրը կայ — ժամանակի սով : Մինաս կը տառապի ժամանակի պակասէն : Յերեկները անպէտք են. հազիւ կը հագուիս, դասի կը վազես, նոթեր կ'առնես, գիրք կը փնտռես, գիրք կը բանաս, մատենադարան կը մտնես, դուրս կ'ելլես, պատառ մը բան կ'ուտես՝ իրիկուն կ'ըլլայ : Իսկ գիշերնե՞րը... ա՛հ, այդ գիշերները որքա՛ն կարճ են... հազիւ դիրքիդ էջերը դառնալ կը սկըսին, հազիւ նիւթիդ մէջ քիչ մը կը խորանաս՝ դաւադիր ժամացոյցները արեւածագ կ'ազդարարեն եւ երկինքը կը ձերմկի :

— Ինչո՞ւ օրը միայն 24 ժամ է, չէ՞ր կրնար աւելի ըլլալ, — կը ջղայնանայ Մինաս :

— Հարկաւ կրնար ըլլալ, — կ'ըսեմ ցաւակից, — բայց գիտե՞ս ինչ կայ, Մինաս, մեր կեանքի տեւողութեան համաձայն օրերն ալ կարճ ձեւուած են :

— Մեր կեանքը կարճ չէ, — կը բողոքէ յաւէտ լաւատես բարեկամս, — ութսուն-իննսուն տարի... ես իմ առջեւ դեռ առնը-լաղն կէս դար ունիմ՝ ուսումս լրացնելէ ետք :

Մենք այդ կարծիքէն չենք սակայն : Նոյնիսկ կը վախնանք, որ այս ընթացքով «բարակ ցաւ»է բռնուի : Վազգէն յոռետես է նաեւ Մինասի քննութեանց մէջ յաջողելուն :

— Վախնամ, — կ'ըսէ, — քիթին-բերնին վրայ պիտի իյնայ

այս աղան. չափազանց շատ կը սորվի եւ ատոր համար ալ սկսած է ըթանալ:

Սարսափելի է. եթէ նման ընդունա՞նք Մինաս նոյն օրն իսկ գետին կը փռուի անշունչ: Անձնասպան ըլլալու պէտք չկայ: Չախողանքի լուրը ճակատագրական լախտի հարուած կ'ըլլայ գլխուն: Անուս եւ չքաւոր արհեստաւորի այս տղան արժանի է վարձատրութեան: Արդար է, որ քննութեանց արդիւնքները ժպտին իրեն: Կեանքն ալ պէտք է ժպտի իրեն: Իրմէ լաւը եւ իրմէ արժանաւորը ո՞ր կարելի է գտնել: Տոկուն նկարագիր, պողպատեայ կամք եւ անդադրում աշխատանք...

Մէյ մը վկայականը առնէ՝ որոշած է կեանքին ուղն ու ծուծը հանել:

**

— Ո՞ր այսպէս, Մինաս:

— Եկեղեցի:

— Ծօ ի՞նչ եկեղեցի, մենք հոս եկեղեցի չունինք:

— Հոգ չէ, բոլոր եկեղեցիներն ալ Աստուծոյ տունն են:

— Ի՞նչ ունիս աղօթելիք:

— Ես մէկ աղօթք ունիմ միայն. Աստուծմէ պիտի խնդրեմ, որ ուժ եւ զօրութիւն տայ մտքիս:

— Եղածը չի՞ ըսեր:

Մինաս իր նայուածքին տխրութիւնը կը սեւեռէ վրաս այնպիսի ձեւով մը, որ լաւ բաներ դուշակել չի տար: Կիրակի առաւօտով՝ եկեղեցի, փոխանակ դրասեղանին առջեւ նստած ըլլալու: Չէ՛, ասոր տակը բան մը կայ: Կը պրպտեմ, կը հարցուփորձեմ եւ կը պնդեմ, որ խօսի: Ի վերջոյ սիրտը կը բանայ: Տունէն դէշ լուրեր կան. հայրը ծանր հիւանդ է: Նիւթապէս ա՛լ պիտի չկարենան տոկալ:

— Պէ աղբար, աս բոլոր դժբախտութիւնները ինձի՞ պիտի գտնեն: Արտաքին բոլոր ուժերը պիտի դաշնակցին, որ ես չաշխատի՞մ: Պապաս ալ հիւանդանալիք ատենը գտաւ... քննութիւններու ամիսը ըլլալիք բա՞ն է ասիկա:

Մինասի աչքերուն մէջ արցունք կայ. յայտնապէս շուարած է: Նամակը ստանալէն ի վեր ո՞վ դիտէ քանի՞ թանկադին ժամ կորսնցող՝ դասերուն հետ կապ չունեցող խնդիրներու մասին մտածելով:

— Խերը անիծեմ ասանկ ուսանողութեան:

— Մինաս, մի՛ յուսահատիք, Աստուած մեծ է:

— Ո՞վ, ե՞ս յուսահատիմ... ինձի Մինաս կ'ըսեն. աշխարհը փլի՛ նորէն վկայականս պիտի առնեմ: Գիտե՞ս ինչ կամք ունիմ ես: Եթէ երկաթը կամքիս զարնես՝ երկաթը կը ծռի:

Գիտե՞մ. այդ մասին կասկած չունիմ: Միայն թէ՛ շատ կը վախնամ, որ «արտաքին ուժերու դաշնակցութիւնը» իրմէ աւելի դօրաւոր դուրս դայ եւ Ֆիդիքապէս զգետնէ հէք քաջամարտիկը:

Վախերս կ'արդարանան դժբախտաբար: Մինաս անկողին ինկած է: Վազդէն ու ես երբ սենեակէն ներս կը մտնենք, Մինասը կը գտնենք պառկած, տաքութիւններու մէջ: Չեռքը գիրք մը կայ նորէն: Արիւնոտ աչքերը դրքին վրայէն վեր կ'առնէ եւ յանդիմանական թախիծով կը յառէ մեր վրայ: Կարծես յանցաւոր ենք, որ ինք

հիւանդ է, անկարող դաս սորվելու, իսկ մենք՝ առողջ, աշխատանքի ընդունակ: Ապա՝ դառնալով Վազգէնին կը բացագանչէ.

— Ծօ՛ սրիկայ, ուզածդ եղաւ, դուն առաջին պիտի ելլես, իսկ ես՝ յետին... Գիշերը քանի՞ ժամ աշխատեցար:

— Մինա՛ս, հոգ մի ըներ, առաջնութիւնը ձեռքէդ խլող չկայ. ես երէկ գիշեր սինեմա գացեր էի...

— Սուտ ես, սուտ էք բոլորդ ալ, ինձմէ աւելի կը սորվիք, բայց գաղանի կը պահէք, հայելիին մէջ դէմքդ դիտէ անգամ մը, աչքերէդ մաթեմաթիկ կը վազէ կոր... ո՛վ դիտէ քանի՛ խնդիր լուծեցիր երէկ...

— Մինաս, — կ'ըսեմ, — դուն այդ մասին մի մտածեր, աշխատէ շուտ ազէկնալ. վստահ եղիր, որ քեղի հասնող չ'ըլլար:

Ինչպէ՛ս չմտածէ, ինչպէ՛ս չմտահոգուի: Ինք հոն, անկողինին մէջ դլխու ցաւով եւ տաքութեամբ պառկած, իսկ մենք՝ ոտքի վրայ, առողջ ու կայտառ, մեր գիրքերուն մտերմութեան հետ... գոնէ քննութեանց ամիսը չըլլար...

— Հոս նայեցէք, — կը պոռթկայ յանկարծ, — սեւ ցանկ մը ունիմ գրպանս, ինծի հետ մրցող, ինծի հեռուէն մօտենալու փորձ ընող աղոց սեւ ցանկը: Վազգէն, դուն անոնց գլուխն ես, դուն շա՛տ վտանգաւոր ես...

Վազգէն կը խնդայ, երգում կ'ընէ, որ նման նպատակներ չունի եւ շատ մը դասեր կան, որոնց վրան իսկ չէ նայած տակաւին:

— Իրա՞ւ, — կ'ուրախանայ Մինաս, — իրա՞ւ չես սորված: Ես զանոնք կ'ըլլած ու մարսած եմ արդէն:

Ապացուցանելու համար, որ իսկապէս լուր չունի այդ նիւթերէն, Վազգէն կը սկսի կարգ մը հարցումներ տալ եւ բացատրութիւններ խնդրել: Մինաս մտիկ կ'ընէ յայտնի հրճուանքով եւ անկողինին մէջ շտկուելով կը պոռայ.

— Ինծի բան մի՛ հարցնէք. գացէ՛ք, գլուխնիդ քարին զարկէք եւ սորվեցէք, ինչպէս որ ես ըրի: Զրիակերներ, ինչո՞ւ կ'ուզէք օգտուել ինձմէ: Ես իմ սորվածներս կը պահեմ հոս, գանկիս գաղտնի խոռոչներուն մէջ: Միայն քննիչին առջեւ մէջտեղ կը հանեմ...

— Մինաս, — կ'ըսեմ, — մէկ-երկու օր մի սորվիր, հանգիստ ըրէ, մինչեւ որ տաքութիւնդ անցնի: Կ'ուզես քեղի բժիշկ բերենք:

— Խե՞նթ ես, — կ'առարկէ իսկոյն, — բժիշկին տալիք դրամովս շաբաթ մը կ'ապրիմ: Իսկ ինչո՞ւ պիտի չսորվիմ եղեր. դիա՞կ եմ, ինչ եմ:

— Տաքութիւն ունիս, ճակատդ կ'այրի, այս վիճակով գլուխդ չի դիմանար...

— Հոգ մի ընէք, կը դիմանայ, ասոր կ'ըսեն՝ Մինասի գլուխ: Լամբերը իրարու ետեւէ կ'այրին, կը փճանան, մատիտները կը հալին կը լմնան, դիրքերը էջ առ էջ անձնատուր կ'ըլլան, բայց այս գլուխը միշտ կանգուն կը մնայ:

Իսկապէս ալ Մինասի գլուխը կանգուն մնաց ուսերուն վրայ: Թէեւ նիհարեցած եւ տժգոյն, բայց Մինաս ոտքի է, ժպիտը երեսին: Համալսարանի պարտէզին մէջ կը մօտենայ ինծի ձեռքերը շփելով եւ աւետիս կու տայ.

— Է՛, վաղը հարսնիքը կը սկսի կոր:

— Ի՞նչ հարսնիք:

— Բերանացի քննութիւնները, ցանքում. կարծես թէ լուր չունիս :

— Պատրա՞ստ ես, Մինաս :

— Եւ ինչպէ՞ս... անհամբերութենէս սանձերս կը կրծեմ կոր... թող զան դիմացս նստին մօրուքաւոր, ակնոցաւոր եւ տիտղոսաւոր բոլո՞ր հեղինակութիւնները. թող հարցնեն ինչ որ կ'ուզեն. անանկ պատրաստուած եմ, որ մատ խածնել պիտի տամ... ինծի Մինաս կ'ըսեն :

— Խորհուրդ կու տամ գիշերը հանգիստ ընել : Մենք խումբով սինեմա պիտի երթանք, կու գա՞ս :

— Դուք խելքերնիդ հացին հետ կերած էք. ճակատագրական նշանակութիւն ունի վերջին գիշերը :

— Ի՞նչ պիտի ընես :

— Սանկ ընդհանուր բըթուշ մը բոլոր սորվածներուս : Այս առտու գիրքերս եւ տետրակներս հաւաքեցի եւ ամէնը մէկ դիզեցի անկողինիս վրայ : Ծանրութենէն մահճակալիս զսպանակները սկսան գողալ :

— Այդքան բա՞ն հաւաքած ես ուղեղիդ մէջ :

— Այո՛, այդ ամէնուն հիւթը քամած եմ եւ կաթիլ-կաթիլ ծծած : Այս գիշեր քնանալ չկայ : Այս գիշեր նախատօնակն է վաղ-լան յաղթանակիս :

— Ի՞նչ խոչոր բառեր սկսած ես գործածել, Մինաս : Նախա-տօնակը ինչպէ՞ս կ'ըլլայ :

— Նախատօնակ կ'ըլլայ երբ մեծ խնճոյքին համար պատրաս-տած գինիներուդ համին կը նայիս քիչ-քիչ :

— Իսկ բուն տօնէն ետք ի՞նչ պիտի ընես :

— Բուն տօնէ՞ն ետք... Եթէ Աստուած տայ ամէն բան յա-ջող անցնի, ուղածիս պէս, որոշած եմ քրտնուտոյ նստիլ եւ պոյ մը սլաոյտ ընել մինչեւ վերջին կայարանը :

— Ժամանակի մեծ շռայլութիւն է ատիկա, Մինաս :

— Խերն անիծած՝ ինչ կ'ուզէ թող ան ըլլայ :

*
**

Քննութիւնները կը սկսին : Համալսարանի միջանցքներէն արագ անցքիս երբեմն Մինասը կը տեսնեմ սրահի մը դրան առջեւ, սմբակ-ներով դետինը ծեծող ձիու պէս անհամբեր :

— Հը՛, Մինաս, ինչպէ՞ս անցուցիր :

— Կասկածո՞ղ կայ ինչպէս անցընելուս : Հոյակապ էր. քննիչ-ները զարմացան տուած պատասխաններուս վրայ, ըսին՝ դուն ի՞նչ ազգի կը պատկանիս. ըսի՝ հայ եմ. ըսին՝ դուն հայութեան պա-տիւ կը բերես :

— Կեցցե՛ս, Մինաս, դուն մեր պարծանքն ես :

— Աս դեռ բան մը չէ. աւարտելէս ետք պիտի տեսնէք, թէ ես ո՛ւր պիտի հասնիմ : Մատով պիտի ցոյց ատն Մինաս Մովսէս-եանը :

— Գիտե՞ս ինչ կայ, Մինաս, — կ'ըսէ Լեւոն՝ Մինասին ուսը գրկելով, — նպատակ ունիմ ապագային քու կենսադրութիւնդ գրե-լու, երբ մեծ մարդ դառնաս : Թոյլ կու տա՞ս արդեօք :

— Կրնաս, ազատ ես, միայն թէ՛ լաւ պէտք է գրես. եւ լաւ

գրելու համար՝ լուրջ աշխատանք պէտք է կատարես :

— Այդ մասին անհոգ եղիր, դիրքիս խորագիրը ընտրած եմ արդէն, — Մինաս Աշխատող :

Մինաս պահ մը վեր կ'առնէ աչքերը, կը խորհի, կը տատամսի եւ կ'ըսէ .

— Գէշ չէ, բայց կը կարծե՞ս, թէ այդ բառը բաւական է իմ բոլոր արժանիքներս խտացնելու :

— Եւ ինչպէ՞ս... դուն ինքզեք ես այդ բառը : Մեր պատմութեան մէջ եղած են Մովսէս Քերթոզ, Ներսէս Շինող, եւայլն . անոնց վրայ կ'աւելնայ նաեւ Մինաս Աշխատող :

— Գիւտ է, հրաշալի գիւտ է, — կ'աւելցնեմ ոգեւորուած :

Սրահին դուռը կը բացուի . Մինաս ինքզինք կը հաւաքէ, կը ժպտի մեղի՝ իր բարի ու անստուեր ժպիտով եւ ինքնավստահ քայլերով կ'անցնի ներս՝ նոր ճակատամարտ մը շահելու համար :

Քննութիւններու աւարտին՝ Մինասի տրամագրութիւնները կ'իյնան հետզհետէ : Նախկին ոգեւորութեան տեղ ընկճուած հով մը կայ վրան : Անսահման աշխատանքին եւ ջիղերու լարումին յաջորդող թուլութիւնն է արդեօք, թէ իր փայլուն յաջողութեան հանգէպ ունեցած կասկածը, որ ղինք կ'ընկճէ այսպէս : Սպառած է, յոգնած եւ նոյն ատեն մտահոգ : Մեր խումբէն չ'ուղեր բաժնուիլ : Այն տղան, որ ամիսներ շարունակ սենեակը փակուած կը մնար, հիմա ընկեր կը փնտռէ, սրճարան կու գայ :

— Մինաս, գնա՛ սենեակդ եւ քսանըչորս ժամ մը մէկ կտոր քնացիր . պէտք ունիս :

— Փորձեցի, չեմ կրնար կոր, մինչեւ քննութիւններուն արդիւնքը չառնեմ՝ չեմ կրնար :

— Ծօ՛ խենթ ես, ի՞նչ ես, յաջողութիւնդ ապահով է . ձգէ որ մենք մտածենք :

— Յաջողիլ կայ, յաջողիլ ալ կայ : Ամէն բան ուղածիս պէս չեղաւ :

— Հապա պատասխաններդ հոյակապ էին :

— Տեղ մը պզտիկ մը սխալեցայ... Շատ լաւ գիտէի, բայց սխալեցայ : Ծաղատ գլխով շունչանորդի քննիչը զիս շուարցուց :

— Հոգ չէ, Մինաս, — կը հանդարտեցնէ Վազգէն, — տեղ մըն ալ պզտիկ մը սխալէ, ատկէ ի՞նչ կ'ելլէ... ես նոյն քննիչին առջեւ ամբողջովին չորցայ :

Մինասի աչքերը կը փայլին երկվայրկեան մը : Իր գլխաւոր մրցակիցը՝ Վազգէն, իրմէ աւելի լաւ չէ ըրած ուրեմն : Այսուհանդերձ, ասիկա ղինք չի հանդարտեցնէր : Խօսակցութեան մէկ նիւթ ունի միայն — քննութիւնները, դասախօսներուն տղած հարցումները, իր պատասխանները :

— Շուն շան որդի քննիչը...

Հապա եթէ միջինէն ցած նիչ մը գրաւ, հապա եթէ այդ դասին վերաքննելի ունենայ... մահ է Մինասին համար : Այդ մէկ դասը կրնայ ճակատագրական ըլլալ : Իյնալը՝ չ'իյնար անշուշտ, վրստահ է ատոր, սակայն պատուոյ յիշատակութիւնը կը կորսնցնէ : Այն ատեն՝ ինչի՞ ծառայած կ'ըլլան իր անքուն գիշերները, իր անհաւասարելի աշխատանքը :

ցանկին առաջին մօտեցողը լեւոնը կ'ըլլայ եւ հեռուէն ձեռքի ուրախ շարժումներ կ'ընէ: Ընդհանուր աղմուկին մէջ կը լսենք իր գոռ ձայնը:

— Մինաս առաջին է... քաջալաւ յիշատակութիւն:

— Տղա՛ք, շուտ ըրէք, լուրը շուտ հասցնենք:

Խումրով կը հասնինք Մինասին սենեակը: Կատակի ատենը չէ: Կը գրկենք ղինք եւ կ'ըսենք:

— Կեցցե՛ս, Մինաս, հայ ազգը հպարտ է քեզմով:

— Հետս մի իյնաք, խայտառակներ՛ր, ըսէք ճշմարտութիւնը:

Անցա՞ծ եմ թէ ոչ:

— Ինչե՛ր կ'ըսես, Մինաս, ցանկին գլուխն ես՝ պատուոյ յիշատակութեամբ:

Նախ չի հաւատար ականջներուն ու մեզի կը նայի զոհուելու սահմանուած ոչխարներու պաղատագին աչքերով: Բայց երբ կը համոզուի, թէ սուտ չենք խօսիր՝ ուրախութենէն կը սկսի պարել սենեակին մէջ:

— Շուն շան որդի քննիչը, շատ աշխատեցաւ, որ զիս շուարցընէ, բայց չկրցաւ... ինծի Մինաս կ'ըսեն:

— Խօսէ, հա՛, խօսէ... լեզուիդ կապերը քակուեցան. երէկ դեռ հաւկիթ կ'ածէիր կոր, — կ'ըսեմ կեղծ խստութեամբ:

— Եթէ ցանկին գլուխը չըլլայի՝ շա՛տ պիտի զարմանայի: Թափած քրտինքիս արդար պտուղը կը քաղեմ:

Տարիները իրարու յաջորդեցին, առանց մազաչափ մը պակաս ցընելու Մինասի աշխատելու եռանդէն: Ընդհակառակն, աշխատանքի իր թափը երթալով աճեցաւ, փոթորիկ դարձաւ: Մինաս համալսարանի տարեգրութեանց մէջ փայլուն թիւերու նոր մրցանիչ հաստատեց եւ ճարտարագէտի վկայականին տիրացաւ բացառիկ յաջողութեամբ: Մերժեց հրապուրիչ պաշտօնի քանի մը առաջարկներ եւ մեկնեցաւ ծնողքին մօտ: Օղակայանին մէջ, զինք ճամբու դնելու համար հաւաքուած տղաքս ըսինք իրեն.

— Մինաս, յաջողութի՛ւն. փայլուն ապագայ մը կը սպասէ քեզի:

— Ապագան հոս է, տիպլումայիս ոլորուածքին մէջ: Սպասեցէ՛ք, խօսիլ պիտի տամ իմ մասիս:

Եւ Մինաս Աշխատող հայոց պատմութեան սփիւռքեան ուղիներով մեկնեցաւ դէպի Ապագան, ղեանքին ուղն ու ծուծը հանելու համար...

Մինասին մահը գուժող թերթը սեղանիս վրայ է, իսկ իր ոսկրուտ եւ նիհար դէմքը՝ աչքերուս առջեւ: Դեռ կը լսեմ իր ձայնը, որ նոյն յամառութեամբ կը կրկնէ.

— Ես դիրքերը կը լափեմ, անոնցմէ համով բան չկայ...

(Շար. 2 եւ վերջ)

Մ. ԻՇԽԱՆ

Ա Շ Խ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Ե Ա Ց Ք

Ու Անանիա Շիրակացին
կը պատմէր թէ
արուեստի մէջ
նշգրտութիւն պէտք է փնտռել

իսկ ես կ'երգէի
ծովամայրերու կենցաղին մասին
անդռհանֆէն գիշերներու
այսեր ինչպէս
արձագանգներ ու պատկերներ կը փախցնէի՝
հասկնալու ոտնափայլերը մեր շարժող
հողին վրայ
որ կը հոսէր ջուրեր ինչպէս

Ու Անանիա Շիրակացին
գտաւ թէ այս
չի յգիւր որ գիշերները հանգիստ ննջէ
ամբաստանեց թէ կը փանդեմ
իր աշխարհը
այնքան նրբին՝
ապակիէ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հայաստանի դրողներու եօթերորդ համադումարի նախօրէին լոյս տեսած քննադատական ակնարկներուն ու համադումարեան ղեկուցումներուն մէջ երկու նոր արձակադիրներ նիւթ դարձան յաճախ, Վահագն Գրիգորեան եւ Ալեքսան Մեխակեան, որոնք առանձին հատորներով թէ մամուլին յանձնած իրենց վիպական-րով՝ վերջին հնդամեակին աշխուժ հետաքրքրութիւն մը առաջացուցին դրական շրջանակներուն թէ ընթերցող լայն խաւերուն մօտ:

Երիտասարդ այս արձակադիրներուն կենսադրութիւնը ծանօթ չէ արտասահմանի ընթերցողին, ոչ ալ հաւանարար առիթ ունեցած է տեսնելու անոնց հրատարակած հատորները: Հայրենի մամուլին հետեւողները սակայն կարդացած պէտք է ըլլան Վահագն Գրիգորեանի «Կարմիր ձիւնը», «Խոստում»ը եւ «Թագաւորի փոքր որդին», իսկ Ալեքսան Մեխակեանէն «Սեղմած շուրթեր», «Անապատի օրերից մէկը» եւ «Բաց երկնքի մահը» անուն վիպակները, որոնք լոյս տեսան «Սովետական գրականութիւն» եւ «Գարուն» ամսադրերուն մէջ:

Յիշեալ էջերը համեմատութեան եղբեր չունին հարկաւ, ոչ ալ հաւասարադոր հնչեղութիւն ունին անոնք, ըողոր պարագաներուն սակայն իրապէ՛ս կը դտնուինք երկու թարմ ուժերու դիմաց, որոնք, ուրախալի է հաստատել, օր աւուր առաջընթացք կ'արձանադրեն՝ հողեվերլուծական, ոճական ու կառուցողական երբեակ առումով:

Վահագն Գրիգորեանի մօտ առաջին ակնարկով ուշադրաւ է տիպարներուն հողեբանական շարժառիթներուն խորքը թափանցելու հակումը, մակընթացութիւններով վիճակ ստեղծելու շնորհը յետոյ, մեռելութիւններուն յարուստիւն տալու հաւաստի շունչը, մինչ Մեխակեան օժտուած է մթնոլորտ ստեղծելու եւ տիպարները անակնկալներով ամբողջացնելու վճռական կարողութիւններով:

Վստահարար պիտի վարձատրուի այն մարդը, որ հետագայ հատուածներուն թելադրանքով պիտի դտնէ ու կարդայ նոյնանուն դործերուն ամբողջութիւնը:

Իրրեւ ուշադրաւ դործ ընտրուած երրորդ նմոյշը, «Սուրմի իմ ծառ», որքան մենք դիտենք, Հայաստանի մամուլին մէջ ոչ մէկ անգամ յիշատակուած դործ է: Տասը տարի առաջ բանաստեղծական դրքոյկով («Ծագիկ կամուրջ») մը հրապարակ եկած Ալբերտ Իսախանեանի արձակ առաջին փորձն է «Սուրմի իմ ծառ»ը, որ արձակադրի քիչ շնորհներ չի մատներ: Ամէնէն առաջ խորք ունի «Սուրմի իմ ծառ»ը ու խորհուրդ, վիճակներու եւ պատկերներու ընդհանուր իւրայատկութիւն մը, որ կ'անջատէ ընթերցողը աօրեայէն եւ կ'առնէ իր հոսքին մէջ, ընծայելով անոր «դոյութեան հրաշքի ետեւից» ընթանալու պատրանքի մը քաղցր թախիծը:

Մեր կարծիքով անտեսում մը կայ հոս եւ պէտք է արդարութիւն ըլլայ Ալբերտ Իսախանեանի:

Յամենայնդէպս, աշխարհահայեացքի թէ ոճական շնորհներու տեսակէտով՝ նոր երանդներու յայտարար նշաններ են վերոյիշեալ երիտասարդներուն էջերը, ուր ծնուցիչ ուժ են եւ առանձին որակ մը կը ներկայացնեն անծանօթին դարնուելու յանդիմութիւնը, ոտնձգութիւններուն դէմ ընդվզումը, ինչպէս նաեւ մեծերու ստեղծած աշխարհներուն ու բնութեան մեծագործութիւններուն մէջ տարրալուծւելու անոնց հակումը:

Վ. Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն



**Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ի
Փ Ո Ք Ր Ո Ր Գ Ի Ն**

Դու այնուամենայնիւ եկար: Հիանալի դիտէիր, որ քո ուշացած այցելութիւնը մեր տուն՝ ոչինչ չի փոխելու, բայց ամէն ինչ այնպէս հարթ էր դըրուում դէպի վախճանը, որ չուղեցիր վերջին պահին ամէն ինչ փչացնել: Ինձ ասել եմ՝ առանց Նարինէի եկար, տուն չեմք թողնելու, եւ դու պատասխանեցիր՝ Ինչ կայ որ, կը գամ: Մենք բարձրացանք վերեւ, ինչպէս, եթէ յիշում ես, անցեալ տարի, երբ քեզ ճանապարհում էի Թրիլիսի, մօրաքրոջ մօտ. ինքնաթիռը ուշացումով թռաւ, եւ ժամանակ սպանելու համար մենք բարձրացանք վերեւ, նստեցինք ռեստորանում:

Նախասրահում մայրս համբուրեց քեզ: Յետոյ կողքիս նստած, դու ստիպուած էիր դիմանալ քննախոյզ հայեացքներին, քանի որ համաձայնել էիր ստանձնել այդ դերը: Իսկ երբ լուրջ կենացներն ու կէսկատակ բացականչութիւնները երեւի ճանճրացնում էին քեզ, երբ դու երեւի սկսել էիր մտածել, որ սխալուել ես համաձայնելով այստեղ դալ, ես արդէն կանաչ բլուրն ի վեր ուսերիս վրայ քաշ էի տալիս ծանր տապանաքարը:

... Ինչն արեւոտ օրը ես երեւի նման էի սիրելի քոյրիկներին կիրակնօրեայ դրօսանքի տանող ուշադիր եղբօր: Եւ ուրախ ու հաճելի ուղեկից էի, ինձնից աւելին չէր էլ պահանջում, իսկ քեզ աւելի անհող ու զրուցասէր, ես չեմ յիշում: Մենք մի քիչ ուշացել էինք, եւ եկեղեցին արդէն լցուել էր տարբեր տեղերից ժամանած հողեւոր երաժշտութեան երկրպագուներով: Ինձ մի կերպ յաջողուեց հոժ բազմութեան միջով ճանապարհ բացել, եւ մենք բաւականին յարմար տեղ դտանք սիւներից մէկի մօտ, որտեղից միանգամայն տանելի կերպով կարելի էր ե՛ւ լսել, ե՛ւ տեսնել: Դու փսփսում էիր ընկերուհուդ՝ մօրաքրոջս աղջկայ հետ, երբեմն միայն սրտաբաց, թէ խորախուսող ժպիտ պարզեւելով ինձ: Յամենայնդէպս, շատ շուտով ես արդէն ոչ այնքան լսում էի, որքան աշխատում էի լսել: Երգում էին «Սուրբ Տիրա-

մայր», «Տէր ողորմեա», «Սուրբ, սուրբ», բայց այդ երաժշտութիւնը սրբագործելու փոխարէն երկատում էր ինձ: Եթէ հոգիս սաւառնում էր ամենաբարձրեալի շնորհած կապոյտ անմահութեան մէջ, ապա մեղաւոր մարմինս պարզապէս կտոր-կտոր էր լինում, յուսահատ դիմադրելով քեզ դիպչելու ցանկութեանը: Հաւանաբար, անցեալ ժամանակներում ինձնից շատ վատ վանական կը ստացուէր:

Թւում էր՝ սիրահարուել եմ, եւ ես ամէն ինչ ունէի, ինձ հարկաւոր էր կանաչ բլուրը, որը դու կարող էիր տալ մի հայեացքով կամ բռնով, եւ ես հիացմունքի ճիչով կը վազէի բլուրն ի վեր, այդ բլուրը հասած արեւի շողի ճշմարտութիւնը գտած, որը յաւերժութեան պատրանք է ստեղծում: Յամենայնդէպս, ամենաբաղձալի հօտում այդ օրը ես մէկն էի այն քչերից, որոնք ոչ թէ արարողութեան նկատմամբ ունեցած իրենց հետաքրքրութեանն էին յազուրդ տալիս, կամ էսթետիկական հաճոյք ստանում, այլ կլանուած էին անսովոր ու հազուադէպ մակընթացութեամբ:

Էլ աւելի առաջ ես այդպէս կանգնած էի դերեզմանոցում, երբ թաղում էին քիմիայի ուսուցչիս՝ քո հօրը: Իմ բաժինը նրա մահուան մէջ անյայտ է քեզ ու անյայտ էլ կը մնայ, դա մէկն է այն մեղքերից, որոնք ոչ մի յօդուածի տակ չեն ընկնում, չեն դատապարտում ընդհանրապէս, թերեւս միայն վերածւում են խզացող ճայնապնակի, բայց դարձեալ շատ աւելի վերացական են ու անորսալի, քան քո հանդէպ ունեցած յանցանք, որը դոնէ կը դատապարտուի փսփսուքներում ու բամբասանքներում: Այն ժամանակ, երբ թաղում էին հօրդ՝ քիմիայի ուսուցչիս, ես յանկարծ շտապեցի հեռանալ, որովհետեւ արածս յայտնագործութիւնը չէր տեղաւորում իմ տրամաբանութեան օղակներում. միայն նրան հողին յանձնելով էինք մենք գտել նրա մօտ տանող ճանապարհը, եւ բաւական է, նա կենդանանար, որպէսզի մենք կըրկին այդ ճանապարհը կորցնէինք: Այդպէս էլ էջմիածնում: Դարձեալ ես շտապում էի դուրս գալ տաճարից, որովհետեւ յանկարծ այն դադարել էր չորրորդ դարում կառուցուած ու եօթերորդ դարում վերակառուցուած ճարտարապետական կոթող լինելուց. ինձ տանում էր անծանօթ մակընթացութիւնը, ու թւում էր, որ եթէ հիմա դու ինձ նուիրաբերես կանաչ բլուրի բերկրանքը, այն յօդս կը ցնդի տաճարից դուրս դալուն պէս: Վերջին հաշուով՝ դրեթէ այդպէս էլ եղաւ, որովհետեւ կանաչ բլուրը ինձ չբերեց քեզ մօտ, այլ ստանալով այն, սկսեցի հեռանալ քեզնից (ինչ պէտք էր ինձ, ստացել էի), ուստի զարմանալի չէ, որ վերջին մետրերը բարձրանում եմ տապանաքարը ուսերիս, հասկացած միայն վերջալոյսի շողի ճշմարտութիւնը. նա պիտի մեռնի բլուրի վրայ, որպէսզի բլուրը կանաչ մնայ:

Ես լաւ յիշում եմ, երբ տաճարից դուրս եկանք, սկսել էր ամպել, արեւը չէր այրում, ու մենք դիտում էինք, թէ ինչպէս են դանակով արիւնոտում աղաւնիների ոտքերն ու բաց թողնում: Աղաւնու ոտքի վրայ յայտնում էր կարմիր արցունքի նման կաթիլը, յետոյ նա թափահարում էր սպիաակ թեւերն ու թռչում որեւէ տանիքի վրայ իր ցաւի հետ մենակ մնալու: Ծալովի դանակը ձեռքին միջին տարիքի դիւղացու համար դա խորը իմաստ պարունակող արարողութիւն էր. Փիզիկական ներգործութեան միջոցով նա ձրգտում էր վաւերացնել ինչ-որ մեծ բան, նիւթականից բարձր կանգնած, եւ հեռու էր ցաւի ու թափած արեան ծանծաղ փաստերից: Դա երեւի աշխարհում մինչեւ օրս դոյութիւն ունեցող հաճոյանալու ամենաանմեղ ձեւն է: Դու նա յում էիր հմայուածի պէս, եւ երբ երկրորդ աղաւնին թռաւ դիւղացու ափից, դու խզացիր աղաւնուն եւ որպէսզի այդ զգացումը փոխանցես ինձ, դիպար

ձեռքիս: Այդ պահին էլ ես հասկացայ, որ մեր միջեւ արգէն կատարուել է հենց այն, որից յետոյ մնացածը լոկ լինելու է աւելորդ ու խեղաթիւրուող յաւելում: Բայց միաժամանակ նաեւ (բացուող հորիզոնները դայթակղիչ են) ես չէի կասկածում, որ ընտրելու եմ քեզ հասնելու ամենակարճ ճանապարհը, կրելու եմ ամենագիւրին դիմակը, որովհետեւ երբեմն (եթէ ոչ միշտ) մենք մոռանում ենք, որ թագաւորի փոքր որդու պահապան հրեշտակը ոչ թէ յաւիտենութեան պատրանքն էր, այլ քարուքիւնը:

Յետոյ մենք զննացինք Արտաշատ, որտեղ մօրաքրոջս աղջիկը՝ քո ընկերուհին, հիւր մնաց մայրական կողմից ազգականներից մէկի ասնը, իսկ մենք ետ եկանք: Եղանակը փչացել էր, անձրեւ էր դալիս, ու ես դանդաղ էի քշում մեքենան, որովհետեւ չէի ուզում շուտ զրկուել քո ներկայութիւնից, իսկ միւս կողմից՝ գլուխս շողուել էր տնական թունդ գինուց: Երեկոյ էր իջնում, շուտով կը մթնէր, կաթիլները ծորում էին ապակիների վրայ, դու նստած էիր յոգնած ու չդիտես ինչու երջանիկ, մի դուցէ խմած գինուց, մի դուցէ գտնում էիր, որ օրը հրաշալի ես անցկացրել, բայց քո այդ զգացումը փոխանցում էր նաեւ ինձ, եւ դուցէ դա է պատճառը, որ հիմա այդքան լաւ եմ յիշում ամէն ինչ՝ երեկոն, անձրեւը, թաց ապակիները, քո անհիմն երջանկութիւնը, իմ յուզմունքը. այո, դա տեսարան էր, թոցրած բարեխղճօրէն նկարուած Փիլմից, որ մենք ուբիշների համար ներողամիտ արհամարհանքով, իսկ մեզ համար սենտիմենտալ յուզմունքով դիտում ենք հեռուստացոյցով ու կինոթատրոններում, որին ծանօթ ենք դրքոյկներից, բանաստեղծութիւններից, որոնք ձեզ հալումաչ են արել դպրոցական տարիներին, ինչից զգուշանում էք ու զգուշացնում ձեր ընկերուհիներին, բայց տարօրինակ օրինաչափութեամբ անպայման ընկնում էք այդ էժանագին ողբերգութեան, թէ Փարսի մէջ: Ես համբուրեցի քեզ, մեքենան կանգնեցնելով խճուղու եզրին, իսկ անձրեւը ուժեղացել էր, երեկոն՝ խտացել (որքան խղճուկ է այն ուժիսորների երեւակայութիւնը, որոնք փորձում են այս զեղումը դեղարուեստական արժէք դարձնել), եւ դու աեղի աուեցիր՝ զիջող էիր ու հիացած, եւ խոնաւ ու տաք երեկոն, թաց ու շողշողուն ասֆալտը մեզ տարան իմ երկու սենեակնոց կոոպերատիւ բնակարանը:

Ոչ, ես միանգամայն անկեղծ էի, երբ կէս գիշերին ասացի՝ Մի գնա, մնա ինձ մօտ: Երբեմն ըոպէական ցանկութիւնը աշխարհ է թւում:

(«Գարուն», 1972, Մարտ)

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ



Ա. Մ Ե Խ Ա Կ Ե Ա Ն

ԱՆԱՊԱՏԻ ՕՐԵՐԻՑ Մ Ե Կ Ը

... — Մանուէ՛լ...

Կանչը դարձեալ ակամայ ստացուեց: Արտակը չէր ուզում ձայն տալ, ցոյց տալ, որ ինքը անհանգիստ է, որ տագնապից չի կարողանում աչք փակել: Չէր ուզում... ստացուեց: Եւ Մանուէլը բարձրացրեց գլուխը.

— Ի՞նչ, Արտակ:

— Բաժակը տուր:

Ուղղակի ուրիշ պատճառաբանութիւն չգտաւ Արտակը, թէ ինչ էր ուզում ասել Մանուէլին, երբ ձայն տուեց նրան: Չգտաւ ու ակամայ այդպէս շարունակեց՝ բաժակդ տուր:

— Իսկ տղաների՞ն, — հարցրեց Մանուէլը:

— Տո՛ւր, — ինքն իր շփոթուածութիւնից գայրացաւ Արտակը: — Տղաներն էլ կը խմեն: Վա՛ւմ, Անդրանի՛կ, տուէ՛ք բոժակներդ:

Ու լցրեց՝ կէս-կէս բաժակից էլ պտկաս: Ամէն մէկին այդքան հասաւ:

— Իսկ դո՞ւ, — հարցրեց Մանուէլը:

— Ես էլ կը խմեմ: — Ու ցոյց տուեց իր բաժակը: — Տես, ձերից պակաս չէ:

Դատարկուած թէյամանը զնգաց վրանի կիսամթում, եւ այդ զնգոցից Արտակը ցնցուեց...

Սա ծարաւի ձայնն է, մի ժամ, երկու ժամ յետոյ նորից վրայ տուող ծարաւի ծիծաղը մեղ վրայ, ծարաւի խրախճանքը: Ինչ զարմանալի էակներ ենք մենք՝ մարդիկս: Յիշո՞ւմ ես, որ մի անգամ մի քանի ժամով մեր շէնքի ջուրը կարուել էր: Խոհանոցում, դոյլի մէջ մի օր առաջ վերցուած ջուր կար, բայց մենք՝ ե՛ւ ես, ե՛ւ դու, քթներս ցցել էինք: Ո՛նց կարել է խմել հնացած ջուրը: Ու հարեւան շէնքի բակից թարմ, սառը ջուր բերեցինք, որովհետեւ չհամբերեցինք, որ սառնարանը դրուած հին ջուրը սառչի: Ծիծաղելի է, ծիծաղելի. մի օր առաջ վերցուած երեւանեան ջրին մարդ անուն դնի, չցանկանայ խմել: Հիմա այդ դոյլն այստեղ լինէր... Ամէն մէկս ուղածի չափ կը խը-

մէջ, մնացածն էլ երկու-երեք օր կը բաւականացնէր մեզ: Արդէն հանգիստ կարող էինք նստել վրանում ու ծիծաղել աւազահողմի վրայ...

... Արտակը փակեց աչքերը, որ չտեսնի, թէ տղաներն ինչպէս են խմում իրենց բաժինը: Իր բաժակը մի կերպ հեռացրեց հագիւ խոնաւացած շուրթերից ու տղաներից գաղտնի այն մտքեց մահնակալի տակ, մի քիչ խրեց աւազի մէջ, որ շուտ չգայ, գլխարկով ծածկեց...

... Թող գոնէ կէս բաժակ մնայ: Մանուէլի՛ համար: Եթէ գու տեսնէիր, թէ նա ո՛նց է տանում ծարաւը, ո՛նց է զղուշուկեամբ տրորւում անկողնու մէջ, որ մենք չնկատենք իր տառապանքը...

... — Տղաներ, նորից չփորձե՞նք բաց անել ջրհորը:

Ոչ մէկը չպատասխանեց Արտակի հարցին: Վաւրը վերջին կումն արեց իր բաժակից, ափսոսանքով նայեց դատարկ ամանին, ցած գցեց այն ու փաթաթուեց սաւանի մէջ, պտըտուեց մի քանի անգամ, որպէսզի աւելի յարմար տեղաւորուի մահնակալին ու անշարժացաւ...

... Ի զուր հարցրեցի: Քիչ առաջ չփորձեցի՞նք: Ինչ ստացուեց: Այժմ արդէն վաւրն ու Անդրանիկը այլեւս փորձելու միտք չունեն: Գլուխները ծածկեցին ու պառկեցին: Այսինքն՝ մեզ հետ գործ չունես:

Ուրիշ ո՞ւմ վրայ կարող եմ յոյս դնել: Մանուէլի՞...

... Արտակը մի քանի բոպէ պառկեց լուռ ու անշարժ, մինչեւ որ տղաները մոռանան իր առաջարկութիւնը, գուցէ եւ քնեն, մտածելով, որ հրամանատարն էլ է ձեռք քաշել ապարդիւն փորձերից: Եւ երբ մահնակալների անհոգները դադարեցին, երբ լսուեց տղաներից մէկի, գուցէ եւ բոլորի, համաչափ շնչառութիւնը, Արտակը զգուշօրէն իջաւ մահնակալից, վերցրեց բահերից մէկն ու դուրս եկաւ վրանից:

Բահը խրեց ջրհորի վրայ կուտակուած աւազաթմբի մէջ: Խրեց յուսահատ վնականութեամբ...

... Եթէ կարողանամ արագ-արագ մի կողմ նետել աւազը... Եթէ կարողանամ այնպէս արագ նետել, որ քամին չհասցնի նորից լցնել մի կողմ նետուածի աեղը... Գիտե՞ս ինչ հրաշալի կը լինի, եթէ իսկապէս կարողանամ բաց անել ջրհորը: Դու կարծում ես, թէ կը պարծենամ տղաների մօտ կամ թէ չէ ուղում եմ զարմացնե՞լ նրանց: Ոչ: Պարզապէս բաց անեմ, դոյլը պարանով իջեցնեմ ջրհորը, լիքը լցնեմ ու տանեմ տղաներին: Մի լիքը դոյլ տանեմ ու շող տամ պառկած տղաների վրայ: Հենց դոյլից էլ ջուրը լցնեմ նրանց բերանները, դլխներին: Ու ասեմ՝ ո՞վ կարող է ասաւր դոյլ ջուր խմել միանգամից...

... Կատաղօրէն աշխատող Արտակը կկոցած թարթիչների տակից նկատեց աւազաթմբի մէջ խրուող երկրորդ բահը...

— Մանուէլ...

Մանուէլը չպատասխանեց: Սկսեց մի կողմ նետել աւազը: Եւ արագութիւնից ու լուրթիւնից երեւում էր, որ նա թունդ վիրաւորուած է հրամանատարի հոգատարութիւնից:

— Ե՛տ գնա, Մանուէլ:

Դարձեալ պատասխան չեղաւ: Մանուէլի բագուկներն ու դէմքը արագօրէն ծածկուեցին աւազի շերտով: Պատճառը քրտինքն էր, որ արդէն ողողում էր նրան: Արտակը նայեց իր ձեռքերին, արագօրէն շփեց նակատն ու պարանոցը: Դրանց վրայ աւազի հատիկներ կային եւ ոչ թէ աւազի այնպիսի շերտ, որը գնալով հաստատում էր Մանուէլի նակատին, պարանոցին ու բագուկներին: Եւ նա շարունակում էր աշխատել: Պարանոցն ու ձեռքերը լարւածութիւնից աւելի էին երկարել, բարակել:

— Վերջ տուր, Մանուէլ, ես յանձնում եմ, — գոռաց Արտակը եւ մի կողմ շարժուեց իր ձեռքի բահը...

... Այժմ արդէն ես ու Մանուէլն էլ ենք Անդրանիկի եւ Վաւրի պէս փուլ եկել մահնակալներին, գլուխներս ծածկել սաւանով: Վե՛րջ: Դժուար թէ

մի անգամ էլ կարողանանք ջրհորը բաց անելու փորձ անել: Այժմ արդէն, եթէ կարողանանք ուրիշ վրայ կանգնել ու քայլել, կը փորձենք շարժուել Գէպի Փերմա: Ուրիշ ելք չկայ. մնալ այլեւս չի կարելի: Իմ պահած ջուրը կը տամ Մանուէլին ու կը դնանք: Չխմի, կը պահեմ ապիաշէի մէջ, ճանապարհին կը ասամ, երբ ուժասպառ կը լինի, չի կարողանայ ես հրել իմ մեկնած տափաշիչը, չի կարողանայ հրատարուել ուրիշի բաժինը խմելուց:

Դու տեսնէիր, թէ ոնց աչքերը փայլեցին ջրհորի մօտ, ոնց հրճուեց, երբ սկսեց մրցել հետս՝ ապացուցելու, որ իմ հովանաւորութեան, խղճահարուելու կարիքը չունի, երբ ուղղակի յողթեց, եւ ես մի կողմ նետեցի բահս: Այդ քնքուշ, նիհար Մանուէլը, որի համար ես դողում եմ, ժպտաց դէմքին ծեփուած աւաղաչերտի միջից, ծիծաղեց երեսիս՝ յողթեցի՝ Ծիծաղեց աչքերով:

Այժմ նա փռուել է մէջքի վրայ, թեւերը տարածել, եւ աւաղահողմի աղմուկն էլ չի կարողանում խլացնել նրա շնչասպառ հեւոցը:

Մինչեւ այժմ երեւի Մանուէլին ուժ էր տալիս ինձ հետ մրցելու, իր ինքնուրոյնութիւնը հաստատելու ցանկութիւնը: Այժմ մրցութիւնն անցել է: Նա ընկել է մահճակալին եւ այլեւս չի քողարկում իր իսկական վիճակը: Գուցէ հենց սա՛ է այն պահը, որի համար պահել եմ իմ բաժինը...

... — Ջո՛ւր, — ինքն իրեն շնջաց Արասկը, վերցրեց մահճակալի տակ պահած բաժակը եւ մօտեցաւ Մանուէլին: — Խմի՛ր, Մանուէլ:

Մանուէլը չշարժուեց, չպատասխանեց:

— Մանուէ՛լ... Մանուէ՛լ...

Ու ցնցեց ընկերոջը:

Մանուէլը ափերով երկու կողմից պինդ բռնեց ցաւոյ մէջքը, նստեց մահճակալին, նայեց Արտակին, ձեռքը տարաւ մահճակալի տակ, այնտեղից հանեց իր բաժակը, որի մէջ էլ նոյնքան ջուր կար, զգուշօրէն մեկնեց Արտակին:

— Ես էլ քեզ համար եմ պահել: Դու առաւօտեան էլ չխմեցիր...

... Այժմ ես լսում եմ այն երիտասարդ զազախ հովուի ձայնը, որի մասին արդէն պատմել եմ քեզ: Արիւբայի որդին է՝ Կադիրը: Ասում է.

— Ես այն օր մոռանաս ձեզ զղուշացնել, որ սամում լինես:

Հենց հիմա ես լսում եմ, թէ նա ինչպէս է դօտուց արձակում տափաշէրը եւ նորից խօսում այս կողմերի ուսերէնով.

— Ձեր ընկերներ շուտով տրակտորով հասնես այստեղ:


Լսում եմ այդ լուրից ուրախացած, վրանից դժի նման դուրս թռչող Անդրանիկի ու Վռամի սրտապատառ ճիշերը: Բայց չեմ կարողանում ոչինչ տեսնել: Աչքերիս առաջ մշուշ է: Ես երեխայի նման արտասուում եմ: Ձեմ կարողանում ինձ զսպել: Ամաչում եմ Կադիրից, Մանուէլից, բայց չեմ կարողանում: Ո՛չ Կադիրի բերած լիքը տափաշէրը, ո՛չ էլ ուրախալի լուրն է արտասուելուս պատճառը: Ես այդ տափաշէրից չեմ խմել, բայց այլեւս ծարաւ չեմ զգում: Այլեւս բերանումս այրող դառնութիւն չկայ: Ձեմ էլ ցանկանում լսել տափաշէրի բաժակի մէջ լցուող ջրի ձայնը: Ես ուզում եմ միայն այսպէս անվերջ զղալ Մանուէլի մօտիկութիւնը: Ուզում եմ անվերջ գրկած պահել նրա նիհար ուսերը, որոնք աւելի անհրաժեշտ են անապատում, քան մի քանի տափաշիչ ջուրը, քան թէկուզ հազար ջրհորներ:

(«Սովետական գրականութիւն», 1974, Սեպտեմբեր)

ԱԼԵՔՍԱՆ ՄԵԽԱԿԵԱՆ

Ա. Ի Ս Ա Ջ Ա Ն Ե Ա Ն

ՍՈՒՐՃԻ
ԻՄ ԾԱՌ



Առաւօտուանից «Նարեկ» կարդացի, կարծում էի, որ վերջացնելու համար երկու-երեք ժամը բաւական էր լինելու, մոռացել էի, որ համարեա՛ չեմ կարողանում դիմանալ «Մաաեան»ին, կէսից դադարեցրի: Չայնս խոստեց, եւ ես դիրքը փոսցի դէմքիս՝ սուրբ հացի պէս արդար այն դիրքը, եւ շատ ափսոսացի դադարեցնելու համար: Մեծերը հղօր կրքերի ալուսնքներ են, իսկ միջակութիւնները նոյնիսկ դրանց ստուերը չեն. երանի նրան, ով շատ անդամ ճաշակել է «Նարեկ» եւ չի մնացել կէս ճանապարհին, որովհետեւ մեծութիւններ կան, որոնց նոյնիսկ ճանաչելու համար մեծ կրքեր են հարկաւոր, մեծ կրքերով փոթորկուելու կարողութիւն: Ես միայն երկու անդամ եմ ճաշակել այդ երանութիւնը՝ երկու անդամ ես հասել եմ աստուածային մաքրութեան եւ առ Աստուած հեկեկացել մարդկային անչափելի արատների համար:

Այս անդամ ես չդիմացայ երկինք առաքուող մեղաների ահարկութեանը, քանի որ նաեւ շատ են ահարկու մարդկութեան արատները եւ դիրքն աստուածային շնորհի պէս փոսցի դէմքիս: Ես շարունակեցի ստորաքարշ դոյութիւնս թաւալել դէպի լոյս, դէպի անարատութիւն:

Ես ժամանակից առաջ մտածեցի դարնան մասին եւ դանդեցի մայրիկին: Մի կոճակ լինէր... Եթէ մայրիկը վերադարձել է աշխատանքից, հիմա կը բարձրանայ վերեւ: Մի կոճակ լինէր եւ երբ սեղմէիր կոճակը, անկողինդ փռուէր անտէր ամայութիւնների վրայ, անծանօթ աւազներից այն կողմ:

Եւ վրադ սուրճի ծառ կախուած լինէր: Գուցէ դա հրաշալի ծառ է եւ այն միակ ծառն է, որ կ'ուղենայի տեսնել: Ես բացի դրանից՝ բացի այդ ծառից ուրիշ ոչ մի ծառ չեմ տեսել երազում: Սուրճի ծառը ինձ անյայտ բոլոր ծառերի խորհրդանիշն է, իմ ամենածառը, այն միակ ուղածս, որ երբեք չեմ

տեսնելու : Ափսոս . . . Եթէ ես յանկարծ սուրճի ծառ տեսնէի , երեւի այնպիսի զգացումներ կ'արթնանային մէջս , որ երբեք չեն արթնանալու . . .

Անյայտ զգացումների կարօտ ունեմ : Եւ որպէսզի շրջանցեմ այդ կարօտը՝ ես մտածեցի . «Գուցէ պատշգամբի ծառերը նոյնպէս հրաշալի ծառեր են եւ նրանց լայն տերեւների տակ նոյնպէս հնարաւոր է պատասպարուել եւ փարատել ամենածառի կարօտը , եթէ այդպիսի կարօտները առհասարակ փառատուում են . . . » : Ես մայրիկին ասացի .

— Անկողինս տանենք այդ ծառի տակ :

— Այսքան վա՞ղ , — ասաց նա եւ նրա ձայնում տազնապ հնչեց :

— Այո . . .

— Ի՞նչ եղաւ , — ասաց նա :

— Բան չի եղել :

— «Նարեկ» ես կարդացե՞լ : — Նա ծալեց դիրքը եւ սիրով նայեց . նա սիրում էր «Նարեկ» կարդալ :

— Այո , — ասացի ես : — Անկողինս տանենք այդ ծառերի տակ :

— Վախենում եմ , — ասաց նա : — Աէկ-երկու շաբաթ սպասենք՝ յետոյ . . .

— Չեմ կարողանում , — ասացի ես :

Ապակիներից այն կողմ պայծառութիւն կար՝ արեւի եւ ինչ-որ անհասկանալի պայծառութիւն , սակայն ինձ բոլոր ձայներով կանչում էր ստուերի կարօտը : Թւում էր , թէ տարիներս ապրել-վերջացրել եմ , իսկ հիմա ուղում եմ մտածել՝ իմ ամենածառի տակ նստած , իմաստուն անտարբերութեամբ՝ եկող-զնացողների մասին :

Մայրիկը նստեց ոտքերիս մօտ՝ «Նարեկ»ը ձեռքին , աչքերում տազնապի լոյս եւ կարծես մարդկութեան յայտնի եւ անյայտ տառապանքները ապրած-ճաշակած : Երբեք այնքան որոշակի չեմ շփուել տառապանք հասկացութեան հետ , որքան՝ երբ ես նայեցի նրան , իսկ նա՝ ինձ , «Նարեկ»ը ձեռքին , աչքերում տազնապի լոյս եւ կարծես մարդկութեան յայտնի եւ անյայտ տառապանքները ապրած-ճաշակած : Եւ նրանում այնքան Աստուծոյ զաղափար կար , նրա տեսքում , եւ ճակատադրի այնքան անբեկանելիութիւն , որ սրբութիւն փռուեց վրաս :

— Մայրիկ , — ասացի ես , — «Նարեկ» կարդայ . . .

— Ես այլեւս չեմ կարողանում , — ասաց նա :

— Իսկ դու փորձիր :

— Յիշո՞ւմ ես այն աղջկան , — հարցրեց նա , — որ քեզ բանաստեղծութիւն կարդաց :

— «Օեր քահանան ոչ մի աղօթք չէր յիշում . . . » , — ասացի ես :

— Այո :

— Բո աշակերտուհուն :

— Այո :

— Որ յետոյ լուսանկարուեցիք միասին :

— Յիշում եմ , — ասացի ես :

— Երէկ արտասանեց այդ տողը եւ լաց եղաւ :

— Նա այդ տողը լացակումած էր արտասանում : — Ես յիշեցի , որ նա կարծես յաղթահարում-վերջացնում էր այդ տողը , ինչպէս միանգամից խորքում արթնացած տխրութիւնն են յաղթահարում :

— Իսկ երէկ նա ուղղակի լաց եղաւ :

— Դու նրան դաս հարցրի՞ր :



Գծանկարը՝ ՅՈՒԱԿ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ

- Այո :
- Երեւի այդ առողը նրա ամենատողն է :
- Նա դեռ չունի իր ամենատողը :
- Գուցէ ունի :
- Այդ ասրիքում չեն ունենում իրենց ամենատողը, — ասաց նա : — Այդ առողը նա հօր պատճառով է այդքան սրտաբուխ արտասանում :
- Հօ՞ր պատճառով...
- Այո : Նրանց այդում խնձորենի կայ : — Մայրիկը յուզուեց եւ եթէ հիմա արտասանէր. «Ծեր քահանան ոչ մի աղօթք չէր յիշում...», դուցէ եւ լաց լինէր : — Նրա հայրը ամէն երեկոյ աղօթք է անում այդ ծառի տակ...
- Երեւի նրա հայրը ուրիշ եկեղեցի չունի, — ասացի էս :
- Նրա եկեղեցին այդ ծառն է, — ասաց նա : — Ծառի տակ, նրա ծնկների տեղում նկատելի փոսեր են դոյացել :

— Ես կ'ուզենայի տեսնել դրանք...


Ես համարեա՛հարբեցի դրանով՝ այդ ցանկութեամբ: Կարծես մէկն իմ փոխարէն աղօթում էր իմ Աստծուն՝ այնպիսի հաւատով եւ հաւատի այնպիսի յամառութեամբ, որ նրա ծնկների տեղում, խնձորենու տակ, նկատելի փոսել են զոյացել, եւ ես կ'ուզենայի տեսնել դրանք: Երբ ես լուսանկարուցի այդ աղջկայ հետ, նա արտասանում էր. «Ծեր քահանայն ոչ մի աղօթք չէր յիշում...», եւ նրա աչքերում շօշափելի տխրութիւն էր ցոլանում, իսկ հիմա ես կ'ուզենայի տեսնել ոչ միայն նրանց խնձորենու տակ զոյացած այդ փոսերը, այլեւ շատ կ'ուզենայի լսել նրա աղօթքի թէկուզ երկու տողը: Գուցէ այն բոլոր յուսալքութիւնները, որոնց պատճառով ես անքուն դիչերներ եմ լուսացրել, նրա շրթունքների վրայ պարզ խօսքեր են դարձել, իսկ ես դրանք չեմ ճաշակում: Գուցէ այն բոլոր առաքինութիւնների համար, որ ես շրջանցել եմ, տառապել է նա եւ հիմա վերյիշում է: Գուցէ...

Ես իմ երեւակայութեամբ ստեղծեցի այդ խնձորենին եւ ծնկեցի խնձորենու տակ, բայց գործած եւ գործուելիք յանցանքներիս մասին երկու տող խոստովանութիւն չառաջացաւ: Ես պարզապէս մեղքերս չեմ կարողանում վերածել խօսքերի:

Այդ դարնանը ես ժամանակից առաջ մտածեցի դարնան մասին եւ անկողինս տարայ ու փռեցի իմ «ամենածառի» ստուերում: Ի հարկէ, ես որոշ նախապատրաստական բաներ արեցի. ամէնից առաջ ես թութակն իջեցրի պատից — նրա վանդակը — եւ նրան արթնացրի քնից: Ես նրան ասացի՝ դընում ենք, — իսկ նա ինձ ոչինչ չասաց, եւ ես նրան վերցրի ու հետս տարայ: Նա ինձ այլեւս ասելու ընդհանրէր: Ասելու բա՞ն... Նա ինձ այլեւս կրկնելու բան չունէր, բայց ես նրան վերցրի եւ հետս տարայ: Նրա փետուրների վրայ անծանօթ գոյներ կային, ուրիշ երկրների գոյներ, եւ այդ գոյների մէջ շոգ կար, անապատի աւազ եւ նոյնիսկ՝ քնած քամիներ: Իսկ ես սիրում եմ անապատի աւազը՝ այդ խորհրդաւոր եւ ամայի անսահմանութիւնը: Ես ուզում եմ լսել անապատի քամու հեքիաթը՝ մանաւանդ մոլեղնելուց առաջ: Իսկ այդ հեքիաթը հօ չի՞ սկսում՝ լինում է-չի լինում, — այդ հեքիաթում երեւի միայն լինում է: Եւ թաղաւորը մահուանից առաջ իր երկրի ողջ հարստութիւնը՝ հողերը եւ դանձարանները եւ հրեղէն ձիերը բոլոր չի կտակում իր մինուճար որդուն, այլ նրան ուղարկում է գոյութեան հրաշքի ետեւից...

(«Գարուն», 1975, Յունուար)

Ա.Լ.ԲԵՐՏ ԻՍԱԶԱՆԵԱՆ



Ի Վապակա՛ն Շարժու՛մ



Մ Ա Ր Դ Ո Ւ Ն Մ Ա Ր Դ Կ Ա Յ Ն Ա Ց Ո Ւ Մ Ը

Մեր յաջորդ էջերուն վրայ ընթերցողը պիտի գտնէ ստալին մասը Ալեքսանդր Սուլժենիցինի նըստից ստեղծած ընդարձակ դրուժեան մը, զոր մեզ մնացած աշխատանքներէն կ'ենն Միկրտչեան պատգամած է յատկապէս «Բագին»ի համար:

Վերջին տասնըփոյնի տարիներէն՝ Սուլժենիցինը, դրական թէ մարդկայնական հասկացողութիւններով ուղղակի երեւոյթ մը դարձաւ ամբողջ աշխարհի մէջ եւ թերեւս գոուար է գտնել նրկիր մը, որուն առնուազն մտաւորականութիւնը հետեւած ըլլայ այս գրողէտին կեանքին ու դրականութեան հոլովոյթներուն:

Անիծեալ հանճարներու յատուկ կենսագրութիւնը կ'ընտելցաւ նաեւ անոր առիթով եւ փոր-

ձանքը անսպասելի եղաւ իր դիտուն, կեանքի բոլոր հանդրուաններուն վրայ: Որք՝ դեռ սաղմնային վիճակի մէջ դանուած օրերէն, չարչարալից պատանութիւն ու երիտասարդութիւն, յետոյ՝ ճամբարային ասանամեակ, յաջորդ բաժակը՝ մահացու հրահրութիւն, պղտիկ դադար մը եւ ասպ դարձեալ խաչի ճամբայ, ձեռագիրներուն դէմ սպառնական խոչընդոտ, արտաքսում՝ դրոշներու միութենէն, արդեւ Նոսիլեան մրցանակի ստացման դէմ, եւ հուսկ ասպ՝ քաղաքացիութենէ զերկելու եւ հայրենի սահմաններէն դուրս դրուելու պետական որոշում ու դորձադրութիւն:

Գրականութեան սլատմութիւնը նման երեւոյթներ շատ կը ճանչնայ, արտաքսումէն աւելի ծանրը կը ճանչնայ նոյնիսկ, սրածումներ ու մոլեխիւնդ, սկսեալ Սոկրատէն, բայց Սոկրատի օրերէն ի վեր ծանօթ է նաեւ գրողէտին յաղթանակը, եթէ իրապէս գրողէտ է ան, տաղանդ ունի, ներքին հրամայականի մը կը ծառայէ, ժամանակակից մահկանացուներուն անմատչելի ջահ մը կը կամարէ աշխարհի վրայ:

Ու Սուլժենիցին դուրի չէ այդ գորութիւններէն:

Մարդուն մարդկայնացումը, — ահա՛ Սուլժենիցինը տաղող մեծագոյն հարցը, որուն նուիրեց իր բովանդակ ուժերը, հաւատարմօրէն, առանց որեւէ ընկրկումի, զոհաբերութեան հասած գեղարդոյն քաջութեամբ մը:

Մարդուն մարդկայնացման սուլժենիցինեան այդ մայր դիժն է, որ լայն քննութեան նիւթ դարձած է կ'ենն Միկրտչեանի երկարաշունչ ուսումնասիրութեան մէջ:

Անցնող տարիներուն, ուրիշներու կարգին նաեւ մեր մամուլը բաւական նիւթ հաղորդեց Սուլժենիցինի մասին, բայց Լ. Միկրտչեանի ուսումնասիրութիւնը աշխարհահռչակ գրողէտին կեանքն ու դորձը հնարաւոր ամբողջութեամբ մը սրտկերացնող առաջին լուրջ փորձն է:

Ընթերցողը վստահաբար մասնաւոր դոհունակութեամբ մը պիտի հետեւի այդ էջերուն եւ երիտասարդութիւնը առիթ պիտի ունենայ անդամ մը եւս հաստատելու, որ դրականութիւնը խառնրածքային հակում ըլլալու նախապայմանին հետ՝ ուժերու ծայրագոյն լարումով ստացուող հարստութիւն է, եւ զոհաբերութիւնը տաղանդէն բաժանելի յատկութիւն չէ...

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ս Ո Լ Ժ Ե Ն Ի Ց Ի Ն

(Մ Ա Ր Դ Ը, Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ը, Գ Ո Ր Ծ Ը)

Ա.

Արդի ռուս մեծ եւ մեծահամբաւ գրող Ալեքսանդր Իսայելիչ Սոլժենիցինի անունը 1962 թուականից առաջ, հրապարակային առումով, բոլորովին անյայտ էր թէ՛ իր հայրենիքում եւ թէ՛ նրանից դուրս: 1961ին, խորհրդային կոմկուսակցութեան 22րդ համագումարի յարուցած մթնոլորտի եւ, մա՛նաւանդ՝ նշանաւոր բանաստեղծ Ալեքսանդր Տվարդովսկու այդ համագումարում ունեցած ելոյթի տպաւորութեան տակ՝ Սոլժենիցինը, հասկանալի վարանումներից յետոյ, վերջապէս որոշեց խզել իր ակամայ լուծիւնը եւ հրապարակ դուրս դալ արդէն պատրաստ գրական երկերից մէկով: Նա «Նովի միր» («Նոր աշխարհ») ամսադրի գլխաւոր խմբագիր Տվարդովսկուն ներկայացրեց, բարեկամ անձանց ձեռքով, «Բանտարկեալի կեանքի մէկ օրը» վիպակը, որը մէկ տարի անց՝ 1962ի Նոյեմբերին տպուեց այդ ամսագրում «Իվան Դեմիսովիչի մէկ օրը» վերնագրով: Վիպակի հրատարակչական արկածալի ողիսականն ինքնին արդէն մի ուշագրաւ պատմութիւն է, երբ հարկ եղաւ ի վերջոյ ապահովել նոյնիսկ Խրուշչովի եւ նրա շրջապատի յատուկ թոյլատուութիւնը՝ երկի ըաց ճանապարհ մտնելուց առաջ:

Այնուհետեւ նոյն ամսագրում տըպուեցին Սոլժենիցինի մի շարք այլ՝ փոքրածաւալ երկեր: Բայց, չնայած անձամբ Տվարդովսկու բարեացակամութեանն ու

Թափած անհամար ջանքերին, չատ չանցած՝ ճանապարհը վերստին փակուեց նորայայտ գրողի առջեւ: Ծայր առան հրապարակային կամ ծածուկ անուանարկումներն ու հալածանքները, իսկ 1974 թ. Փետրուարին ոստիկանական իշխանութիւնները վերին վճռի համաձայն գրողին «արտաքսեցին» հայրենի երկրից:

Այնպէս որ՝ Սոլժենիցինի դրական վաստակը աշխարհին է հասել առաւելապէս ինքնահրատարակչական զանազան ճանապարհներով եւ ապա արտասահմանեան տպագիր հրատարակութիւնների շնորհիւ: Մինչդեռ Ռուսաստանում իշխանութեան կողմից ամէն ինչ տրուել է նրա ձայնը միայն խեղդելու համար:

Սոլժենիցինը, ի հարկէ, մենակ չէ իր այդպիսի ճակատագրով:

Այդ նոյն ողբերգական ճակատագիրը բաժին է ընկել բոլոր նրանց, որոնց իրերի բերմամբ վիճակուել է իբրեւ մարդ աչք բացել կոմունիստական իրականութեան հեղձուցիչ պայմաններում:

Սոլժենիցինը այլեւայլ առիթներով շեշտել է, որ ինքը ի սկզբանէ յատուկ սէր է տածել դրականութեան հանդէպ, ինքն իր մէջ եփուել ու գրել, առանց որեւէ յուսատու հեռանկար տեսնելու իր առջեւ: Նա, օրինակ, ինքնակենսագրութեան մէջ այսպէս է ներկայացնում այդ կացութիւնը.

«Բոլոր տարիների ընթացքում, 1961-ից առաջ, ես ո՛չ միայն համոզուած էի, թէ իմ ողջութեան օրօք երբեք տպուած չեմ տեսնի ոչ մի տող ինձնից, այլեւ

նոյնիսկ մօտ ծանօթներին ոչ ոքի չեմ
 կամւորակում որեւէ բան կարդալ տալ,
 երկիւղ կրելով հրապարակ հանուելուց:
 Վերջապէս, 42 տարեկանում, այդպիսի
 թափուն գրողական վիճակը սկսեց շատ
 անշեղ ինձ: Գլխաւոր ծանրութիւնը իմ աշ-
 խատանքը գրական առումով զարգացած
 ընթերցողների միջոցով ստուգելու ան-
 կարելիութեան մէջ էր կայանում»:

Միլովան Ջիլասը իր «Նոր դասա-
 կարգ» աշխարհահռչակ գրքի մէջ, «Ոգու
 անշուք» գլխում, անդրադառնալով կո-
 մունիստական երկրներում ապրող գիտ-
 նականների, գրողների, արուեստագէտ-
 ների կացութեանը, գոյութիւն ունեցող
 արտառոց ու այլասերիչ պայմաններին,
 եղրակացնում է, թէ նոր դասակարգի մե-
 նաչնորհեալները, այլ խօսքով՝ իշխանա-
 ւորները «բարձրացնում են գաճաճներին
 եւ տապալում հսկաներին, մա՛նաւանդ ի-
 րենց սեփական ժամանակի հսկաներին»:

Եթէ դա այդպէս է առհասարակ գը-
 ղեթէ ընդ որ կոմունիստական երկրնե-
 րում, երեւոյթը առաւել եւս ցայտուն է
 խորհրդային Միութեան մէջ: Սուլժենի-
 ցինի պարագայում մի անգամ եւս երե-
 ւում է, թէ ինչի մէջ է կայանում հողե-
 ւոր գաճաճներ բուծելու եւ նրանց դա-
 հեր բարձրացնելու, իսկ դրա դիմաց վա-
 ւերական հսկաներ տապալելու պետական
 քաղաքականութեան էութիւնը:

Սուլժենիցինն իր ընդունուած կարգով
 դրած, բայց ժամանակին չկարդացած
 «Նորելեան դասախօսութիւն» ճառին մէջ,
 յիշելով, թէ ինչպիսի գրական տաղանդ-
 ներ են անհետացել խորհրդային տաժա-
 նավայրերում, բացականչում է.

«Մի ամբողջ ազգային գրականու-
 թի՛ւն է մնացել այնտեղ, թաղուած ո՛չ
 միայն առանց դազադի, այլեւ նոյնիսկ
 առանց ներքնաշորի, մերկ, ոտքի մատին
 կապուած հաշուեփայտով: Ոչ մի պահ
 չի ընդհատուել ուս գրականութիւնը,
 մինչդեռ կողքից անապա՛տ է թուացել:
 Որտեղ որ կարող էր աճել համերաշխ ան-
 առ՝ երկու-երեք պատահաբար շրջանց-
 ւած ծառեր են մնացել, բոլոր անտառա-
 հատումներից յետոյ»:

Աւելորդ է շեշտել, որ իրերի այդ

վիճակը բնորոշ է ո՛չ միայն ուս, այլեւ
 խորհրդային երկրի միւս բոլոր ազգային
 դրականութիւնների համար, եթէ իրա-
 կանութիւնը դիտենք բուն սկզբունքային
 տեսանկիւնից: Ս.մէնուրեք «պատահաբար
 շրջանցուած ծառերի» գոյութիւնը չի
 հերքում աղէտալի «անտառահատումնե-
 րի» ոճրային բնոյթը եւ ծանր հետեւանք-
 ները:

Սյապիսով, Սուլժենիցինի կեանքի ու
 դրական ճանապարհը լիովին կրում է կո-
 մունիստական մղձաւանջային իրականու-
 թեան դրոշմը: Թէեւ, դարձեալ պատա-
 հաբար, նրան յաջողուեց վերջ ի վերջոյ
 իր ձայնը լսելի դարձնել համայն մարդ-
 կութեանը, առատօրէն շարադրել իր դը-
 բտկան վկայութիւնները, այդուհան-
 դերձ, նրա յիշողութիւնը մնում է ծան-
 րաբեռնուած անցեալի անջինջ ու անըս-
 պառ պատկերներով եւ նորանոր յղա-
 ցումների ու ելքերի մղում: Իրերի բեր-
 մամբ, Սուլժենիցինը ներքուստ պարտա-
 ւորուած է զգում ո՛չ միայն սեփական ա-
 սելիքն ասել, այլեւ ապրող մարդկանց
 փոխանցել այն բոցավառ խօսքերը, ո-
 րոնք պէտք է արտայայտէին նահատակ
 սերունդները, եթէ երբեւէ արտայայտը-
 ւելու պատեհութիւն ունենային: Այս-
 ինքն՝ մասամբ նաեւ նրա՛նց փոխարինել:
 Ճիշդ է, այսօր Ռուսաստանում գնալով
 աւելանում է Սուլժենիցինի ճանապարհով
 ընթացող վաւերական գրողների թիւը,
 ինչ որ իր հերթին մեր ժամանակի բնո-
 ղոչ եւ սրտապնդիչ գծերից մէկն է, բայց
 եւ այնպէս՝ Սուլժենիցինը առայժմ ներ-
 կայանում է իբրեւ եղակի, անմրցակից
 մեծութիւն, ազգային ու մարդկային իւ-
 րայատուկ խորհրդանշան, հողեւոր հո-
 սանքների կենդանի հանգոյց, որին ծա-
 նօթանալով կարելի է ծանօթանալ նաեւ
 այն հիմնական իրողութիւններին, որոնք
 կապուած են մի ամբողջ ժամանակաշր-
 ջանի եւ մի ամբողջ հասարակութեան
 ասլրած կեանքի հետ: Ծանօթութիւնը
 կրկնակի է՝ դրական եւ հասարակական:

Ինչպէս որ արդէն նշուեց, Ալեք-
 սանդր Սուլժենիցինի անունը, իբրեւ գը-
 րողի, խորհրդային եւ արտախորհրդա-

յին հասարակութիւններին յայանի դարձաւ սոսկ 1962 թուի Նոյեմբերին, միանգամից համընդհանուր ուշադրութեան արժանանալով: Դրանից առաջ Սուլթենիցինը մարդ եւ գրող էր բացառապէս ինքն իր մէջ (նաեւ՝ ինքն իր համար), անցել էր կեանքի բաւական երկար ու տաժանելի ճանապարհ, բայց չունէր բառի բուն իմաստով համապատասխան կենսագրութիւն: Դրական ասպարէզ մանելուց յետոյ, հրապարակուեցին մի շարք ժլատ ու կցկտուր կենսագրական տուեալներ: Իսկ ապա, շատ չանցած, երբ ուղղակի եւ անուղղակի միջոցներով խափանուեց այդ ասպարէզը, կենսագրութեանը փոխարինեցին իշխանաւորների կողմից բոլոր խողովակներով տարածուող գրաւոր ու բանաւոր զրպարտչական վերագրումները՝ գրողին ամէն կերպ վարկաբեկելու նպատակով, ինչպէս որ առհասարակ ընդունւած է «կոմունիզմ կառուցողների» երկրում: Սուլթենիցինը գիտակցելով հանդերձ, որ միշտ էլ մէկ մարդու ուժերից վեր է պետութեան հետ չափուելը եւ նրա անունով յօրինուող յերիւրանքները հերքելը, բոլոր առիթներից օգտուեց եւ հարցադրոյցների ընթացքում, այլեւայլ յայտարարութիւնների միջոցով ջանաց հակազդել իր դէմ սանձադերժուած արշաւին: Արտասահման անցնելուց յետոյ, նա յաջորդաբար ինքնակենսագրական բնոյթ կրող զանազան նիւթեր հրապարակեց: Այնպէս որ՝ այժմ կարելի է գրողի բաւական յստակ դիմապատկերը գծել, յենուելով արտասահմանում հրապարակուած առատ նիւթերի վրայ: Իսկ խորհրդային երկրում միայն խորհրդային տեղեկատուական նիւթերով սնուող ոչ մի ընթերցող երբեք չի կարող ճիշդ գաղափար կազմել Սուլթենիցինի մասին: Բացառութիւն կարող են հանդիսանալ, թերեւս, տեղեկատուութեան յաւելեալ աղբիւրներից օգտուող իրազեկ, ազատախոհ եւ ընդդիմադիր խաւերը:

Ալեքսանդր Սուլթենիցինը ծնուել է 1918 թ. Դեկտեմբերի 11ին, Հիւսիսային Կովկասի առողջարանային Կիսլովոգոսկ քաղաքում: Բայց նրա մանկութիւնն ու

պատանեկութիւնը հիմնականում անցել են Դոնի Ռոստովում, 19 տարի շարունակ, եթէ չհաշուենք արձակուրդային եւ այլ առիթները, երբ նա դանուել է գլուղում ապրող ազդականների մօտ: Սուլթենիցինի նախնիները, հօր եւ մօր կողմից, դիւզացիներ էին: Նրանք թէեւ ապրում էին «կողակական» երկրամասում, բայց կողակներ չէին, այլ՝ եկուոր դիւզացիներ:

Հօրենական գծով տոհմագրական տեղեկութիւններ կան, պատահաբար, 17րդ դարից, երբ Ֆիլիպ Սուլթենիցինը տուժեց Պետրոս Առաջինի դայրոյթից, իսկ յետոյ էլ՝ մի այլ Սուլթենիցին ըմբոստութեան համար Վորոնեժի նահանգից աքսորուեց Հիւսիսային Կովկաս, այնտեղ հաստատուելով աղատ ու ամձակ հողերի վրայ: Սուլթենիցինները, գրողի բնորոշումով, ստաւրոպոլեան սովորական դիւզացիներ էին, բազմանդամ ընտանիք, աշխատասէր եւ ձեռներէց, ուստի եւ՝ դիւզական չափանիշով համեմատաբար ունեւոր: Եւ դա բաւական է, որպէսզի ոմանց կողմից կամայարար «կուլակային» կամ «կալուածատիրական ծագում» վերագրուի գրողին:

Սուլթենիցինի մօրենական կողմի պապը եւս համեստ դիւզացի էր, որը Տաւրիկեան նահանգից (հարաւային Ուկրաինայից) եկել էր նոյնպէս Հիւսիսային Կովկաս՝ իբրեւ հովիւ եւ վարձու մշակ (բատրակ) ապրուստը շահելու համար: Զերոյից սկսելով՝ նա հողեր է վարձակալել եւ աստիճանաբար, սեփական եռանդի ու աշխատասիրութեան շնորհիւ, նիւթապէս ամրացել, ծերութեան օրերին նոյնիսկ հարուստ դառնալով: Սուլթենիցինը նրա մասին ասում է հետեւեալը.

«Յիսուս տարեկանում մա երկրի շատ աւելի հացահատիկ ու բուրդ էր տալիս, քան այսօրուայ շատ սովխոզներ (պետական անասութիւններ) եւ դրանց դիրեկտորներից (տնօրէններից) պակաս չէր աշխատում: Իսկ բանուորների հետ այնպէս էր վարում, որ յեղափոխութիւնից յետոյ նրանք ծերունուն մինչեւ մահ 12 տարի կամաւոր պահեցին՝ կոլտկրեցին: Դե՛հ, թող սովխոզի տնօրէնը

պաշտօնագրի ներկայացումը յետոյ փորձի իր բանուարներին այդպիսի բան խնդրել»:

Սուլժենիցինի հայրը, 1914 թ. պատերազմը սկսուելիս, Մոսկուայի համալսարանի բանասիրական բաժանմունքի վերջին՝ չորրորդ գասընթացի ուսանող էր: Նարողնիկ եւ տոլստոյական լինելով հանդերձ, նա ուսումը կիսատ թողեց եւ կամաւոր ճակատ մեկնեց, ծառայելով իրրեւ հրետանային սպայ, առաջաւոր դժի վրայ մնալով մինչեւ Բրեստ-Լիտովսկի հաշտութիւնը: 1918 թ. դարնանը տուն վերադառնալով՝ շատ չանցած մեռաւ, դժբախտ պատահարի եւ վատ խնամքի հետեւանքով, որդու ծնուելուց կէս տարի առաջ: Սուլժենիցինի հայրը եւ մայրը պսակուել են ռազմաճակատում, ղինուորական (բրիգադային) հոգեւորականի ձեռքով:

Ամուսնու մահից յետոյ, երիտասարդ մայրը չամուսնացաւ, գլխաւորապէս նրա համար, ինչպէս պատմում է Սուլժենիցինն ինքը, որ որդին խորթ ու խստասիրտ հայր չունենայ: Որդուն մեծացրեց աներեւակայելի ծանր պայմաններում եւ պատերազմի տարիներին մեռաւ հիւժախտից՝ 49 տարեկանում: Նա կրթուած կին էր, գիտէր ֆրանսերէն ու անգլերէն, սովորել էր նաեւ սղաղրութիւն ու մեքենագրութիւն, բայց լաւ վճարող հիմնարկութիւններում չէր կարող աշխատանքի ընդունուել իր «սոցիալական ծագման» պատճառով: Ահա թէ ինչու գիշերն ու ցերեկը իրար էր խառնում՝ մի կերպ ապրելու եւ որդուն պահելու համար:

Դոնի Ռոստովում Սուլժենիցինը 1936-ին աւարտեց միջնակարգ դպրոցը: Նա ինքնաբուխ սէր ունէր դրականութեան հանդէպ: Մանկամիա թոթովանքները չհաշուած, 30ական թուականներին իսկապէս դրել եւ փորձել է գրածը տպել աւալ, բայց ոչ ոք չընդունեց նրա ձեռագրերը: Ճիշդ նոյն ձեւով մտադիր էր գրական կրթութիւն ստանալ, բայց Ռոստովում նման հաստատութիւն չկար, իսկ Մոսկուա դեռն անհնարին էր՝ մօր մեռնակութեան ու հիւանդութեան եւ նիւթական սուղ միջոցների պատճառով: Ուստի՝ ընդունուեց Ռոստովի համալսարանի Ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքը, այն աւարտելով 1941ին:

Մաթեմատիկայի բնագաւառում ունէր ակնառու ընդունակութիւններ, բայց, իր իսկ ասելով, ոչ կենսական կոչում: Այդուհանդերձ, մաթեմատիկական կրթութիւնը հետադայում փրկարար դեր կատարեց Սուլժենիցինի կեանքում՝ տարբեր պարագաներում: 1939-41 թուականներին Սուլժենիցինը զուգահեռաբար ուսանում էր նաեւ «Մոսկուայի ֆիլիսոփայութեան, Գրականութեան, Պատմութեան Ինստիտուտի» (ՄԻՖԼԻ) հեռակայ բաժանմունքում (բանասիրութեան գծով): Ամուսնացել է ուսանող ժամանակ (1940 թ.) եւ պատերազմը սկսուելուց յետոյ մի քանի ամիս (Սեպտեմբերի 1ից) կնոջ հետ ուսուցչութեամբ զբաղուեց Ռոստովի մարզի Մորոզովսկ քաղաքում, դասաւանդելով մաթեմատիկա եւ աստղաբաշխութիւն:

1941ի Հոկտեմբերի 18ին, Սուլժենիցինը զօրակոչուեց բանակ: Առողջական պատճառներով պահուեց ճիւղորդում: Սւելի ուչ փոխադրուեց հրետանային ուսումնարան, որի կրճատ դասընթացն աւարտեց 1942ի Նոյեմբերին, նշանակուելով հետախուզական հրետանային մարտկոցի հրամանատար, ի վերջոյ կապիտանի կոչումով: Մինչեւ 1945 թ. Փետրուարը, Սուլժենիցինը գտնուեց ռազմաճակատի առաջին գծում, արժանանալով շքանշանների, ապա ձերբակալուեց Արեւելեան Պրուսիայում: Մեղադրուած էր դպրոցական ընկերոջը (Նիկոլայ Վիակեւիչին) գրած նամակներում Ստալինի հասցէին արուած անյարգալից արապայտութիւնների համար, թէեւ նրանունը չէր յիշուել, այլ ակնարկուել էր պայմանական ու ծածկագիր բառով: Բացի այդ, դաշտային պայուսակում գանձուել էին սլամուլաւածքների եւ այլ սեւագրութիւններ: Քանի որ դրանք բաւական չէին «օրէնքով» «դատելու» համար, ներքին դործերի ժողկոմատի (նախարարութեան) «Յատուկ խորհրդակցութեան» որոշմամբ, Յուլիսի 7ին հեռակայ կարգով (բացակայութեամբ) «դատապարտուեց» 8 ասարուայ ճամբարային կեանքին:

Շատ աւելի ուշ՝ 1957 թ. Փետրուարի 6ին, ԽՍՀՄ գերագոյն դատարանի զինուորական կոլեկիան իր նիստում, Սովետներիցինի Կործի հանգամանքները քննելով, անհիմն համարեց երբեմնի ներկայացուած մեղադրանքը՝ յանցակազմի բացակայութեան պատճառով: Այդ կասկածներէն, նշում էր նաեւ հետեւեալը.

«Սովետներիցինի գանգատները ստուգելու ընթացքում հարցախնուեցին Ռեշետովսկայան, Սիմոնեանը, Սիմոնեանցը, ոչոնց մօտ Սովետներիցինի իբր թէ հակախորհրդային յերիւրանմանք է արտայայտել: Նշուած անհիմն Սովետներիցինի բռնութեանը իբրեւ խորհրդային հայրենասէրի եւ հերքեցին, թէ նա հակախորհրդային խօսակցութիւններ է ունեցել»:

Արդ՝ Ռեշետովսկայան Սովետներիցինի կինն էր, իսկ միւս երկուսը, ինչպէս երեւում է ազգանուններից, հայեր են: Դրանցից՝ յայտնի վիրաբոյժ Կիրիլ Սիմոնեանը Սովետներիցինի դպրոցական ընկերներից է, մտերմական շրջանակի «հնգեակի» անդամներից:

Սովետներիցինը «պատիժը կրեց» նախ խառը տեսակի ուղղիչ-աշխատանքային ճամբարներում, ապա՝ 1946-1950 թուականներին, իբրեւ մաթեմատիկոս, փոխադրուեց մոսկովամերձ «յատուկ բանտեր», ներքին գործերի նախարարութեանը եւ պետական անվտանգութեան նախարարութեանը ենթակայ «գիտա-հետազոտական ինստիտուտների» համակարգ: Այնուհետեւ, մինչեւ 1953 թ. Մարտի 5ը, դտնուեց միայն քաղաքական բանտարկեալների համար սահմանուած նորաստեղծ յատուկ ճամբարներում: Էկիբաստուղի ճամբարում (Ղաղախստան) աշխատեց իբրեւ սեւադործ բանուոր, որմնադիր, ձուլող: Այնտեղ երեւան եկաւ որովայնի չարորակ քաղցկեղային ուռուցք, որը վիրահատուեց, բայց լրիւ չբուժուեց, քանի որ դրա բնոյթը աւելի ուշ հասկացան:

Ութ տարի եւ մէկ ամիս «սահմանուած պատիժը» կրելուց յետոյ, առանց նոր դատավճռի ու նոյնիսկ յատուկ խոր-

հրդակցութեան «որոշման», Սովետներիցինը վարչական կարգով, շատ ու շատ ուրիշների նման, ենթարկուեց «յաւիտենական աքսորի» եւ 1953 թ. Մարտից մինչեւ 1956ի Յունիսը ապրեց Ղաղախստանի Կոք-Թերեք գիւղում (Ջամբուլի մարզ), որոշ պահից սկսած տեղական դպրոցում աւանդելով Ֆիզիկա եւ մաթեմատիկա: Այնտեղ քաղցկեղը արագորէն ծաւալուեց եւ 1953ի վերջին Սովետներիցինը մահուան դուռը հասաւ, զրկուելով սնուելու, քրնելու կարողութիւնից եւ ուռուցքի թոյներից տառապելով: Ուստի՝ նրան թոյլատրուեց գնալ Տաշքենտ, որտեղ եւ նա քաղցկեղային բուժարանում բուժուեց 1954 թ. ընթացքում:

Աքսորում Սովետներիցինը խիստ-մեծ նակեացի կեանք էր վարում, դպրոցում դասաւանդում, իսկ տանը թաքուն եւ անընդհատ դրում արձակ կտորներ: Ճամբարում նա միայն բանաստեղծութիւններ էր «գրել»՝ յիշողութեան մէջ պահելով: Այնուհետեւ, «ապաստալինացման» պայմաններում, երբ Սովետներիցինը կարող էր եւրոպական Ռուսաստան վերադառնալ, նա դրածները իր հետ տարաւ: Վերստին, — նախ՝ Վլադիմիրի մարդում, իսկ ապա՝ Ռեադանում — նա արտաքուստ ուսուցչութիւն էր անում, իսկ ներքուստ դրականութիւն ստեղծում: Այդ ժամանակի կեանքի պայմանները Սովետներիցինը արտացոլել է թէ՛ դեղարուեստական երկերում եւ թէ՛ ուղղակի յուշագրական վկայութիւնների կարգով:

1962 թ. Դեկտեմբերին, երբ թւում էր, թէ վերջապէս կանաչ ճանապարհ է բացուել Սովետներիցինի դրական գործունէութեան համար, նա հրաժեշտ տուեց ուսուցչութեանը եւ ամբողջովին կլանուեց ստեղծագործական աշխատանքով: Բայց աւա՛ղ: Խաբուսիկ էր այդ կանաչ ճանապարհը եւ երկար չտեւեց: Կուսակցա-պետական յետադիմութիւնը վերստին մոլեղնօրէն գլուխ բարձրացրեց եւ բոլոր ճակատներում հաշուեյարդարն սկսուեց: Պարզ է, որ Սովետներիցինը, իբրեւ տուժող, առաջիններից մէկը պիտի լինէր: Նրան չէին ընդունում, ինչպէս որ կար, իսկ նա էլ իրենից չէր ուզում եւ

չէր կարող հրաժարուել: Նա անընդհատ գրում եւ գրածը թաքցնում կամ պահ էր տալիս բարեկամների մօտ: Այդուհանդերձ, ոստիկանութիւնը խուզարկութիւնների եւ իրեն յայտնի այլ միջոցներով ընդհատեց բազմաթիւ անտիպ ձեռագրեր (1964-65 թուականներին): Սուլժենիցինը յուսահատական պահեր էր ապրում եւ զղջում, որ սխալ գործեց ու ժամանակից շուտ իմացնել տուեց իր գոյութեան եւ իր աշխատանքների մասին: Բայց աւելի ուշ, մի հայեացք նետելով այդ իրադարձութիւնների եւ առհասարակ իր ամբողջ կեանքի ու անցած ճանապարհի վրայ, նա սկսեց ուրիշ աչքով նայել պատահած դէպքերին, հոգեւոր «յայտնութեան» դիրքերից: Նա զնալով աւելի խորացաւ այդ ուղղութեամբ եւ համոզուեց, որ ամէն ինչի մէջ աղընյայտօրէն «խառն է Աստուծո մատը», որով եւ՝ հիմնականում բացատրւում է նրա հաւատացեալ լինելը: Սուլժենիցինը հանգամանալից խորհրդածութիւնների մէջ այն միտքն է զարգացնում, որ առհասարակ մարդ ի վիճակի չէ անմիջապէս հասկանալ ու զնահատել իր ճանապարհի ճակատագրական իրադարձութիւնները, որ նա սթափուում եւ իրականութեան ամբողջութիւնը ընդգրկում է միայն շղթայական հանգրուանները մըտովին համեմատելու ու ընդհանուր յայտարարի բերելու պարագայում: Եւ ուստի՝ շատ բաներ, որ խոովայոյզ պահերին բացայայտ կորուստ են թւում, իրականում անակնկալ փրկութեան գուռ են նշանակում:

«Իվան Դեմիտովիչի մէկ օրը» վիպակը ապուելուց յետոյ՝ Սուլժենիցինին գըլխապառայա արդութեամբ ընդունեցին խորհրդային գրողների միութեան մէջ: Իսկ յաջորդ տարիներին, թէեւ իշխանութիւնները փաստօրէն լիովին խափանել էին գրողի ճանապարհը եւ բացայայտ հալածանք սկսել նրա դէմ, նա շարունակում էր անուանապէս մնալ միութեան անդամ: Ահա եւ իբրեւ այդպիսին՝ Սուլժենիցինը 1967 թ. Մայիսի 16ին դրեց իր՝ գրողների համամիութենական 4րդ համագումարին յղած նշանաւոր նամա-

կը: Այդ նամակի առանցքը գեղարուեստական դրականութեան նկատմամբ գըրաքննութիւնը վերացնելու պահանջն էր: Ի հարկէ, միաժամանակ խօսւում էր նաեւ խորհրդային դրականութեան ընդհանուր կացութեան, ինչպէս եւ հենց Սուլժենիցինի երկերին վիճակուած ճակատագրի մասին:

Սուլժենիցինի նամակը հետաքրքրական երեւոյթ է ինքնին: Բայց, թերեւս, անհամեմատ աւելի հետաքրքրական է ա՛յն արձագանքը, որը դտաւ նամակը գրողների միջավայրում: Գրողների միութեան 80 անդամներ հաւաքական յայտարարութեամբ սլաշտպանեցին Սուլժենիցինի առաջարկութիւնը (այդ թւում եւ Նորա Ադամեանը): Բացի այդ, բազմաթիւ ուրիշ գրողներ անհատական հեռագրերով, նամակներով, դիմումներով, յայտարարութիւններով անվերապահօրէն հանդէս եկան գրաքննութիւնը վերացնելու օգտին: Վաստակաւոր ու երիտասարդ գրողների կողմից այդ կապակցութեամբ արտայայտուած մտքերը պատմական փայլուն վկայութիւն են, որոնք կրկին անգամ ապացուցում են, որ ստրկամտութիւնը չի արմատաւորուել եւ երբեք չի կարող արմատաւորուել նաեւ խորհրդային գրողների մտածող խաւերի ներսում: Արտաքին առօրեայ հնազանդութիւնը չի կարող հերքել այդ ծանրակշիռ իրողութիւնը:

Սուլժենիցինի նամակը պայթող ուռմբի ապաւորութիւն թողեց ո՛չ միայն խորհրդային գրողների մէջ, այլեւ արեւելա-եւրոպական երկրներում եւ այլուր: Ի հարկէ, նամակը ուղղակի դրական արդիւնքներ չտուեց, որովհետեւ խորհրդային երկրում անկարելի է այդ ողով առաջ քաշուած սկզբունքային հարցերը մարդավարի լուծել: Բայց դա մի քայլ էր, որը բոլորովին անհետեւանք չի կարող մնալ մաքերի խմորման ոլորտում:

Սուլժենիցինի այդ եւ միւս նամակներին կապակցութեամբ, 1967 թ. Սեպտեմբերի 22ին, խորհրդային գրողների միութեան քարտուղարութիւնը զբաղուեց «Սուլժենիցինի հարցով»: Այդ եւ նման հաւաքոյթների նպատակն էր «վերադաս-

տիրակել» Առլթենիցիին: Նոյն ժամանակ արտասահմանում գնալով աւելի տարածուեց Սոլթենիցիինի համբաւը: Նրա երկերը ինքնահրատարակչական ուղիներով հասան արտասահման, եւ մէկը միւսի յետեւից, ռուսերէն եւ այլ լեզուներով, լոյս տեսան իր հայրենիքում հալածուող գրողի գրքերը: Դա աւելի կատաղեցրեց խորհրդային իշխանաւորներին: Եւ ահա 1969 թ. Նոյեմբերի 4ին, Ռեազանի դրական կազմակերպութեան նիստում, որի 7 անդամներից մէկն էր Սոլթենիցիինը, վերջինս հեռացուեց միութիւնից, վերին հրահանգի համաձայն: Հրապարակուած է այդ նիստի սղագրութիւնը, որը իր տեսակի հետաքրքրական փաստաթուղթ է:

Յիշատակուած տարիների ընթացքում Սոլթենիցիինի աշխատանքը խանգարում էին ո՛չ միայն հանրային, այլեւ այսպէս ասած ընտանեկան ու կենցաղային պայմանները: Երբ նա կարող էր բռնակարան ձեռք բերել Մոսկուայում՝ չուզեց այդ բանը, որովհետեւ Ռեազանում խաղաղ աշխատելն աւելի յարմար էր: Իսկ երբ, հանգամանքների ճնշման տակ, հարկաւոր էր Մոսկուայում ապրել՝ իրաւունք չունէր: Բացի այդ, ոստիկանական իշխանութիւնները ինչ-ինչ եղանակով իրենց կողմը քաշեցին Սոլթենիցիինի կնոջը եւ նրան լարեցին գրողի դէմ, զանազան մեքենայութիւններ սարքելով, իսկ հետագայում էլ նրա ստորագրութեամբ իր տեսակի «հակասոլթենիցիներեան» գրքոյկ տպելով: Այնպէս որ՝ Սոլթենիցիինը ապահովութեան համար տեղից տեղ էր գնում, բնակւում բարեկամների մօտ կամ անյայտ) անկիւններ որոնում: Դրելը մէկ հոգս էր, իսկ դրածը պահելն էր՝ կրկնակի հոգս:

Իշխանութիւնների զայրոյթը բազմապատկուեց 1970 թ. Հոկտեմբերի 8ից յետոյ, երբ Սոլթենիցիինը Ատոկհոլմից պաշտօնապէս տեղեկացուեց, թէ իրեն է շնորհուել այդ թուականի Նոբելեան մրցանակը գրականութեան դժով: Իշխա-

նութիւնների վարմունքը ինքնըստինքեան բացատրելի է, որովհետեւ ի սկզբանէ նրանք վարժուած են միայն իրենց թեկնածուները «գնահատուած» տեսնելուն եւ չեն կարող հանդուրժել նոյնիսկ Շուեզական Ակադեմիայի անկախութիւնը կամ դոնէ ինքնուրոյն տեսակէտ ունենալու իրաւունքը:

1973 թ. Դեկտեմբերին, արտասահմանում լոյս տեսաւ Առլթենիցիինի «Գուլագ Արշիպելագը» եռահատոր աշխատութեան առաջին հատորը: Դա արդէն բուն իմաստով գեղարուեստական երկ չէր, այլ պատմական մեղադրական փաստաթուղթ, որի մէջ ամենայն յստակութեամբ ցոյց է տրւում խորհրդային կեանքի բուն պատկերը, առանց պայմանականութիւնների: Ուստի՝ այդ առթիւ Սոլթենիցիինի դէմ սանձազերծուած արշաւը շատ աւելի խիստ բնոյթ կրեց, քան աւելի առաջ՝ «Տասնըչորսի Օգոստոսը» վէպի առնչութեամբ: Եւ շատ չանցած՝ 1974ի Փետրուարի 13ին, Սոլթենիցիինը բռնութեամբ արտաքսուեց Խորհրդային Միութիւնից, այսպէս կոչուած «հայրենիքի դաւաճանութեան», այսինքն՝ իրականում ճշմարտախօսութեան եւ անկաշառութեան համար:

Ինչպէս յայտնի է, Առլթենիցիինը բռնակութիւն հաստատեց Շուեցարիայում՝ Յիւրիխում: Յետոյ նրան միացաւ ընտանիքը՝ երկրորդ ամուսնութեան կինը, երեք մանկահասակ երեխաներով, եւայլն: 1976ի Օգոստոսից ի վեր Սոլթենիցիինն ընտանիքով ապրում է Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Սոլթենիցիինը քանիցս յայտարարել է, թէ ինքը ծնուել է գրքեր գրելու համար, իսկ կեանքի հանգամանքները միայն կասեցրել են այդ գործով զբաղուելը: Այժմ նա ո՛չ միայն գրում, այլեւ ճամբորդում, հարցազրոյցներ ու ելոյթներ է ունենում այլեւայլ առիթներով: Բայց բոլոր գործերի էութիւնը նոյնն է՝ վկայել ճշմարտութիւնը եւ հասցնել մարդկութեան գիտակցութեանը:

Լ. ՄԿՐՏԶԵԱՆ

«ՊԱՏՈՒԻՐԵՑԻՆ ՅԱՆՁՆԵԼ ՁԵՁ»

Եւ ահա, ինչպէս միշտ, — հիմա
Աշխարհի բոլոր կողմերից,
Ազատուած հազար հողմերի
Ժանտաժանտ ուժից, մերձիմահ
Հաւաքուել էին երբ հազիւ
Դաշտերում իրենց հարազատ —
Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց՝ բիրտ ու գազիր...

Ե. ՉԱՐԵՆՑ

17-11-1937

Ըստուած է հազար անգամ ու փաստի չի կարօտիր այն ահաւոր երեւոյթը, որ արեւմտահայ գրականութեան մէջ պատահած աննախագէտ եղեռնէն ընդամէնը հազիւ քսան տարի անց, արեւելահայ գրականութիւնը ենթարկուեցաւ նոյնքան ծանրակշիռ սպանդի մը:

Առաջինը՝ 1915 Ապրիլին, գործ՝ Թուրք բռնակալութեան:

Երկրորդը՝ 1937 Ապրիլին, գործ՝ ստալինականութեան:

Մարդ իրապէս ջղագար կը դառնայ, երբ ստիպուել ապրիլեան երկու այս թուականներու յաճախանքները միասին յիշել:

Ի վերջոյ Թուրքը Թուրք էր, յորովայնէ ոճրագործ, արիւնահեղութեան յաջորդական դրուագներու մէջ արիւն կաղմած արիւնախում կենդանի եւ իբր այդ ըմբռնելի՝ իրեն հակադրուող մարդ էտկը յօշոտելու բնազդներուն յարձակողական վայրագութիւնը, ըայց ինչպէ՞ս ըմբռնել ստալինականութիւնը, որ հայրենիքին ու ժողովուրդին անուսով ուրիշներու կարգին սրածեց նաեւ մեր հայրենիքին ու ժողովուրդին ամէնէն կարկառուն զաւակները:

Մեր միաքը, սակայն, ստալինականութիւնը վերլուծել չէ հոս, այլ մատնանշել է փաստը, ըստ որում՝ հարիւրաւոր մաւորականներ, արուեստի գործիչներ, անկրկնելի բանաստեղծներ ու տաղանդաւոր գրագէտներ զոհ գացին ստալինեան Մոլոտքին, Թուրքերուն ստեղծած Ապրիլ 24ին համահաւասար աղէտի մը սուղը ձգելով հայ գրականութեան մէջ:

Այս տարի քառասնամեակն է այդ չարաշուք թուականին եւ հայ մարդը բարոյական պարտքի տակ է պահ մը խոնարհիլ զոհերուն յիշատակին առջեւ ու անգրադառնալ կարգ մը ճշմարտութիւններու, զորս անմեղ նահատակներն ու «անյանցանք տաժանակիրները» «Պատուիրեցին յանձնել ձեզ»...

Համայնավար 20 եւ 22րդ համագումարներուն մէջ Ստալինի եւ իր ախրահաւակ գործակալներուն պսակաղերծումէն ետք, ինչպէս բովանդակ Սորհրդային Միութեան՝ նաեւ մեր հայրենիքին մէջ անգրադարձան 37ի աղէտին, ըայց մթնոլորտը առողջացնելու եւ ժողովուրդին իր բնական շնչառութեանը վերադարձնելու թափը ընդհատուեցաւ շուտով, խրուչչովեան ձիւն-

Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ.— Իրաւարան, հոգեբան, մանկավարժ, փրոֆեսէօր: Ծնած է Ալեքսանդրապոլ, 1875ին: Միջնակարգ կրթութիւնը թիֆլիսի մէջ աւարտելէ ետք, կ'ընդունուի Պետերբուրգի համալսարանը, որուն իրաւարանական ճիւղը կ'աւարտէ 1899ին: Վերադառնալով հայրենիք՝ էջմիածնի Գէորգեան ճեմարանի մէջ կ'աւանդէ հոգեբանութիւն եւ իրաւունքի պատմութիւն: Հիմնադիրներէն մէկը Երեւանի պետական համալսարանին, ուր կը դասախօսէ մինչեւ 1923: Յաջորդ տարի կը փոխադրուի Լենինական, ուր միաժամանակ քանի մը միջնակարգ վարժարաններու մէջ կ'աւանդէ մանկավարժութիւն եւ հոգեբանութիւն: 1935ին կը վերադառնայ Երեւան եւ կ'աւարտէ հայոց կանոնադրքին նուիրած իր աշխատութեան երկրորդ հատորը: Ծաւալուն աշխատութիւն մը կը նուիրէ նաեւ իր եղբօր՝ երգահան Նիկողայոս Տիգրանեանի ստեղծագործութեան վերլուծութեան:



«Տիգրանեանի գործունէութիւնն ընդհատուեց 1938 քուականին»:

ւած ծրագրով ոչնչացուցած մեքենայութեան հետքերը ջնջել ժողովուրդին հոգեբանութենէն:

Այն օրերէն հասած հատուկտոր տեղեկութիւնները կ'ըսեն, որ դիւրին չէ ստեղծուած խելագարութիւնը աեղաւորել երեւակայութեան մէջ, իսկ շատ աւելի դժուար է ճշդել, թէ համատարած ողբերգութեան մէջ ո՞րն էր աւելի ողբերգականը, անմիջապէս դնդակահարուածներո՞ւն պարադան, բանտ նետաւածներո՞ւն ճակատադիրը, թէ կացութիւնը շնորհնկալներուն, որոնք բռնաւորներուն քաղաքական հաշիւներով խարանուած իրենց եղբայրներուն դէմ ստիպուեցան կրկնել պատրաստի ամբաստանութիւնները:

Սրածուածը դժբախտ, բանտարկուածը դժբախտ, ու ոչ նուազ դժբախտ, անշո՛ւշտ, ա՛ն՝ որ մահապարտներն ու «անյանցանք տաժանակիրները» արժանի հուշակեց սահմանուած պատիժներուն:

Ճիղիքական սպանդներու վրայ դումարուած հողեկան սպանդները դուրսէ պատմութեան մէջ երբեք յայտնուած չեն այն տարողութեամբ, որուն աւանատես եղաւ մարդկութիւնը, ու մեր հայրենիքը՝ ստալինեան եղեռնագործութեան տարիներուն: Նոյն երկինքին տակ ծնած, նոյն տարիներուն ապրած, շատ անգամ նոյն երդիքին տակ նոյն աղ ու հացով ու վարդապետութեամբ սնած մարդիկ օր մըն ալ արթնցան ու չճանչցան զիրար: Մէկ վայրկեանէն միւսը «յայտնի» եղաւ, որ մէկուն հայրը «հայրենիքի դաւաճան» է, միւսին եղբայրը՝ «ժողովուրդի թշնամի», երրորդին զրչակիցը՝ «հակայեղափոխական», չորրորդին դորձակիցը՝ «տեռորիստ», հինգերորդին դադափարակիցը՝ «նացիոնալիստ», վեցերորդը՝ «տրոցկիստ», եօթներորդը՝ «թաքնըւած Դաշնակ», եւ վերջապէս հարիւրաւոր ու հարիւրաւոր աչքառու մարդիկ «եղել են հակայեղափոխական-տրոցկիստական-դաշնակցական-նացիոնալիստական» տարրեր, վնասարարներ, քծնողներ, ստորաքարչներ, Փաշիգմի թափ-թրփուկներ», եւայլն, եւայլն:

Դիւրին չէ հարկաւ պատկերացնել իրենց հայրենիքին մէջ, իրենց հա-



Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Գրականագետ, լեզուաբան, մանկավարժ։ Ծնած է Էրզրումի շրջանի Բաշիֆթլիք գիւղը, 1883ին։ Տեղւոյն ազգային վարժարանը աւարտելէ ետք, 1896ին կ'ընդունուի Էջմնածնի Գէորգեան ճեմարանը։ 1903-1905 թուականներուն Պեաերբուրգի համալսարանին մէջ կը հեաեւի հայագիտութեան, աշակերտելով Ն. Մառին։ 1905ին կը մեկնի Գերմանիա եւ կը յաճախէ նախ Պերլինի եւ ապա Լայպցիգի համալսարանը, հետեւելով գերմանագիտութեան, փիլիսոփայութեան եւ մշակոյթի պատմութեան։

1922ին կը փոխադրուի Երեւան, ուր առաջին տարիներուն կը դասաւանդէ միջնակարգ վարժարաններուն մէջ, իսկ 1928ին՝ Երեւանի համալսարանի մէջ, ուր կ'աւանդէ եւրոպական գրականութիւն եւ գերմաներէն լեզու։ Իր գլխաւոր երկերն են՝ Յ. Թումանեանի «Անոյշը» եւ Բաֆթլի «Չալալեղիւնը»։ Մէկը՝ Յ. Պարոնեանի երկերու հրատարակութեան նախաձեռնողներէն։ Իր տողացի թարգմանութեամբ 1936ին լոյս կը տեսնէ Հայնէի «Երգերի գիրք»ը։ Նոյն տարին Ե. Չարենցի հետ կը ձեռնարկէ «Փառուստ»ի թարգմանութեան։

«Ս. Մանուկեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»։

մողումներուն համար, ծառայութեան իրենց թափին մէջ հարուածուած այդ մարդոց ապրած դժոխքը, եւ աւելի դժուար է բարոյական հասկացողութիւններու հետ հաշտեցնել այն վատասերումը, զոր ստալինականութիւնը ծաւալեց մեր երկրին մէջ, իրենց մարդկային բովանդակութենէն պարպելով թէ՛ պարզ եւ թէ՛ մտաւորական մակարդակներու տէր մարդերը։

Փորձենք թարմացնել կարգ մը վկայութիւններ։

1936 Սեպտեմբերին տեղի կ'ունենայ խորհրդային դրողներու ընդհանուր ժողով մը, ուր Նորայր Դաբաղեան կը կարդայ զեկուցում մը՝ «Տրոցկիստ-նացիոնալիստ-հակայեղափոխական Ն. Ստեփանեանի խմբակի, ինչպէս եւ Հայաստանի խորհրդային գրողների միութեան մէջ բոյն դրած նացիոնալիստական-տրոցկիստական խմբակի մասին»։

Կը կարդանք, որ այդ ժողովին ուրիշներ եւս յարձակողական նոյն ուժով ելոյթներ ունեցած են, եւ ապա՝

«Միաձայն որոշել են վտարել Միութիւնից նացիոնալիստ-տրոցկիստ-հակայեղափոխականներ՝ Դր. Սիմոնեանին, Ալազանին, Ա. Բակունցին, Գ. Մահարուն, Վ. Թոթովեցին, Գ. Վանանդեցուն եւ Վ. Նորեցին»։

Յիշեցնենք, որ Սեպտեմբերին գումարուած ժողովին որոշումով վարուած յիշեալ դրողները արդէն ամիս մը առաջ ձերբակալուած էին եւ անոնց դէմ եղած մեղադրանքները պաշտօնականացնելու այդ ձեւակերպութենէն առաջ քիչ բան չէր ըսուած այդ մասին։

Վերոյիշեալ քննադատը, Նորայր Դաբաղեան, միայն 1936 Սեպտեմբերին եւ միայն մէկ անգամ էլոյթ չունեցաւ ձերբակալուած դէմքերուն դէմ, դաաափեաման նոյն արամադրութիւններով յաճախ հանդէս եկաւ ուն, բայց ինքզինք ղերազանցեց առաջին յարձակումէն ութ ամիս ետք, 1937 Ապրիլի մոայլագոյն օրերուն տեղի ունեցած մէկ ժողովին, ձերբակալուած գրողները քարկոծող իր խօսքին մէջ այս անգամ դնելով նաեւ ունկնդիր խլեակները հարեկող առանձին շեշտ մը։

«Ինչպէ՞ս եղաւ, որ այդ վոհմակը կարողացաւ երկար ժամանակ բոյն դնել խորհրդային կազմակերպութեան մէջ: ...Անկեղծ չեմ այն ընկերները, որոնք անդում են, թէ չեն նկատել հակայեղափոխական սրիկաների գործունէութիւնը, որովհետեւ նացիոնալիստները, երկերեսանի հանջեանի հովանաւորութեամբ, գործել են գրեթէ բացայայտ, եւ ով որ յայտարարում է, թէ չի նկատել այդ բացայայտ նացիոնալիստների քայքայիչ աշխատանքները՝ ապա ինքն էլ տուրք է տուել նացիոնալիստական տրամադրութիւններին»:

Ձերբակալուած գէմքերը վոհմակացնելով նոր զոհեր որսալու Դաբաղեանի ելոյթը, որ անշուշտ վերէն եկած հրահանգ էր, ապահով երաշխիք մը չեղաւ իրեն: Շուտով ինք եւս բաժնեց «բացայայտ նացիոնալիստների» անյայտ ճակատագիրը, իր գրչին պաականոզ հեռեւեալ նախադասութեան մեղքով:

«Հայ գրականութեան եւ մշակոյթի պատմութեան մէջ հայ ժողովուրդը այնպիսի գեղեցկութիւններ ու գոհտրներ է ստեղծել, որոնց հաւասարը չունեն միւս ժողովուրդները»:

Ըստ վկաներու, «Թթու ազգայնական» որակուած է այդ միաքը, պատճառ դառնալով, որ հեղինակը դասուի «ժողովրդի թշնամի»ներուն կարգը ու ասան մը, եթէ չենք սխալիր մինչեւ 1941, իր կարգին քշուի հրապարակէն:

Կարգը այդպէս էր այն օրերուն: Ամբաստանողները շուտով կը նսաէին ամբաստանութեան նոյն աթոռին:

Այլ զուր էր «հակայեղափոխական սրիկաների գործունէութիւնը» նկատողներ երեւան հանելու Դաբաղեանի հրահանգուած ճիգը: Մինչ այդ ո՞վ ամէն ինչ չէր նկատած եւ պարասա ամբաստանութիւնները կրկնող յօժար խառնուածքներէ դաա ուրիշ բանի պէտք ունէի՞ն միթէ Դաբաղեանները բեմ հանող «ակնոցաւոր օձերը»:

Այն օրերուն գործող ուրիշ եւ մարտնչելու իր բնաւորութեամբ շաա աւելի համբաւուած բանաստեղծ մը կը գրէր:



Ա. ՔԱԼԱՆԹԱՐ.— Հնազտ, ուրարտագէտ, դասախօս: Ծնած է Թումանեանի շրջանի Արդուի գիւղը, 1884ին. Աւարտած է Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը: 1907ին կ'ընդունուի Պետերբուրգի համալսարանը, ուր կը հետեւի արեւելեան լեզուներուն, աշակերտելով Ն. Մառին: Ուսանողութեան տարիներուն, ինչպէս նաեւ հետագային կը մասնակցի Ն. Մառի ղեկավարութեամբ Անիի մէջ կատարուած պեղումներուն: 1921ին կը հրաւիրուի Երեւանի համալսարանը եւ մինչեւ 1937 թուականը կ'աւանդէ հնագիտութեան, հին Արեւելի, հայոց պատմութեան հնագոյն շրջաններուն վերաբերող նիւթեր: Կը կազմակերպէ ու կը ղեկավարէ գիտական բազմաթիւ արշաւանքներ գէպի Հայաստանի տարբեր շրջանները՝ հնագիտական հետազօտութիւններ կատարելու նպատակով: Հեզինակ՝ բազմաթիւ աշխատութիւններու:

«Փրոֆ. Քալանթարի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:



Ն. ՍՏԵՓԱՆԵԱՆ.— Տնտեսագետ, փրոֆեսոր: Ծնած է Կիրովապոլս, 1898ին: Նախակրթութիւնն ու միջնակարգ ուսումը կը ստանայ տեղւոյն վարժարանին մէջ: Կը մտնէ համայնավար կուսակցութեան շարքերը եւ կը դառնայ անոր զործօն անդամներէն մէկը, Թիֆլիսի եւ Ելիզավետպոլի մէջ: 1920ին կը մասնակցի Հայաստանի մայրամէկեան ցոյցերուն ու ձերբակալուելով Դաշնակցական կառավարութեան կողմէ՝ կը դատաւարտուի 10 տարուան բանտարկութեան: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, իբրեւ կուսակցական դործիչ կ'աշխատի Էջմիածնի շրջանը, իսկ 1922ին կը զրկուի Մոսկուա, ժողովրդական տնտեսութիւն ուսանելու: 1930ին պաշտօններ կը վարէ Բաքուի մէջ, իսկ մէկ տարի ետք իբրեւ դասախօս կը հրաւիրուի Երեւան: Ատեն մը կ'աշխատի լուսաւորութեան նախարարութեան մէջ, իսկ 1932էն մինչեւ 1936 կը վարէ պետական համալսարանի քաղաքատնտեսութեան ամպլոնը:

«Փրոֆ. Ստեփանեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:

«Անգրկովկասի ժողովուրդների եղբայրութիւնն ու համերաշխութիւնը աւելի ամրացնելու ուղղութեամբ կատարած աշխատանքը արգելակել եւ գրողների կազմութեան ղեկավար դիրքերում բոյն դրած Ն. Ստեփանեանի տրոցկիստական-նացիոնալիստական խմբակի անդամները, — Ակսել Բակունց, Դր. Սիմոնեան, Ալազան, Նորեց, Եւայլն»:

Ի՞նչ մեղքեր ըսես չէին զործած ձերբակալեալ այդ դժբախտները եւ ինչպէ՞ս արատաւորած էին Հայաստանի մշակոյթին մայր երակները, որոնց կարգին նաեւ Հայկիւնոն, ուր, ըսա կուսակցական պաշտօնաթերթին՝ «հակա-յեղափոխական Խանջեանի յանձնարարութեամբ ու հովանաւորութեամբ ծրարել էին տրոցկիստական տարրերը: ...Գեղարուեստական Խորհրդի ղեկավարութիւնը իրենց ձեռքը ձգած ժողովրդի անարգ թշնամիներ՝ հակա-յեղափոխական Դր. Սիմոնեանը, Բակունցը, Ալազանը, Գ. Մահարին, որոնք Հայկիւնոն հեռու եւ պահել սոցիալիստական թեմաներից եւ անց եւ կացրել տրոցկիստական-դաշնակցական կոնտրաբանդ»:

«Դաւաճան Խանջեան»ի սպանութենէն նոյնիսկ տարի մը ետք, այս պաշտօնաթերթը, «Խորհրդային Հայաստան», առիթ չփախցուց նոյն զրպարտութիւնը պաշտօնապէս յեղյեղելու: Յատկանշական է 1937 Յուլիսին դումար-լած ճարտարապետներու ժողովին բացման օրը լոյս ընծայած անոր խմբա-զրականն ու հատուածը.

«Համագումարը մինչեւ վերջը կը մերկացնի ու շիկացած երկաթով կ'այրի նացիոնալիստական արտայայտութիւնները, որ տեղ էին գտնում մեր քարտարատեսութեան ասպարէզում՝ երկերեսանի դաւաճան Խանջեանի եւ նրա ստոր գործակիցների՝ Երզնկեանների եւ միւս սրիկաների հրահրումով ու հովանաւորութեամբ»:

Յիշենք, որ առաջին օրերուն ձերբակալուած ղեմքերուն մէջ ամէնէն աւելի քաշքշուած անունը եղաւ «Հակայեղափոխական-աեռորիստական խումբ»:

բակի հովանաւորող» Ն. Ստեփանեանը, որ թէ՛ իբրեւ փրոֆեսէօր, եւ թէ կուսակցական ու քաղաքական դործիչ շատ քիչ ծանօթ անձ է ընթերցողին: Արդէն ճանչցուելու շատ ժամանակ ալ չտրուեցաւ իրեն: Քառասունին չէր հասած ասկաւին, երբ «Պրաւդա»-ի մէջ Բերիայի ստորադրած յօդուածով մէկ անդամէն «պարզուեցաւ», որ «ազգայնական արաւայտութիւններ է ունեցել եւ հակայեղափոխական տրամադրութիւններ ցուցահանել... կապ պահպանելով հայկական նացիօնալ ֆաշիզմի դաշնակցական թափփուկների հետ, որոնք միշտ էլ կողմնակից են եղել տեռորի»: Եւ ապա նաեւ ա՛յն, որ Ա. Խանջեանը «հովանաւորող վերաբերմունք է ունեցել» դէպի «կուսակցական եւ անկուսակցական մտաւորականների այն հակայեղափոխական-նացիօնալիստական-տրոցկիստական խմբակը, որի ղեկավարն է եղել տրոցկիզմի տականքների ամենագգուելի ներկայացուցիչ Ն. Ստեփանեանը»:

Չերբակալութենէն մինչեւ զնդակահարման լուրը, համարեա՛ տարի մը ամբողջ վերի մեղքերը եւ առաւել ուրիշներ կրկնուեցան ու կրկնուեցան Ն. Ստեփանեանի անունին դիմաց: Ըստ երեւոյթին, Բերիայի անձով դրսեւորուած «վրացական տիրամոլութեան, գերակայութեան եւ դերիշխանութեան» դէմ պայքարողներուն մէջ, Աղասի Խանջեանէն ետք, զօրաւորագոյն անձը Ն. Ստեփանեանն էր եւ նոյն կարգով Բերիան որոշած էր ոչնչացնել դայն:

Բերիա-Ստեփանեան հակառակութեան յատկանշական դրուագ մը արձանագրած է Վաղարշակ Նորենց, Չարենցի դէմ շղթայադերժուած հալածանքին առիթով, 1934ին, «Գիրք մանապարհի»-ն լոյս ընծայելու-չընծայելու հարցին կապակցութեամբ: Նորենց կը պատմէ.

«Չարենցի գրքի հարցը քննող յանձնաժողովի կազմում միակ մարդը, որ համակրում էր բանաստեղծին եւ ամէն ջանք գործադրում էր նրան պաշտպանելու բախտախնդիրների յարձակումներից, Ներսիկ Ստեփանեանն էր, այն ժամանակուայ Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարը: Մի անգամ Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Ալազանն ու տողերիս հեղինակը գնացին նրա մօտ: Մենք յայտարարեցինք, որ Չարենցի գրքի շուրջ ստեղծուած համակովկասեան աղմուկը իստ վիրաւորական է ո՛չ միայն ամբողջ սովետահայ գրականութեան, այլեւ մեր հանրապետութեան համար: Չարենցի դէմ յարուցուած անհիմն մեղադրանքը, ամենակոպիտ վարչական միջոցներով գրական հարցեր լուծելու մեթօտը, գրականութեան այս կամ այն իրական կամ կարծեցեալ սխալն ու սայթափումը կարիերիստական նպատակներով օգտագործելու նկրտումները ոչ մէկ կապ չունէին գրական քաղաքականութեան հետ եւ նիշդ հակառակ էին նրան: Եւ այդ համոզմամբ էլ մենք որոշել էինք ամէն գնով պնդել, ամէն միջոց ձեռք առնել, որ Չարենցի գիրքը՝ «Գիրք ճանապարհի»-ն լոյս տեսնի:

«Ն. Ստեփանեանը մեզանից աւելի շատ էր վրդովուած: Նա գտնում էր, որ մենք շատ նիշդ ենք գնահատում երեւոյթը եւ խոստացաւ անել այն ամէնը, ինչ ինքը կարող էր, որպէսզի Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն լոյս տեսնի:

« — Այդ բոլոր ինտրիգների, խարդաւանանքների թելերը գալիս են Թիֆլիսից, այնտեղ է այս բոլորի հովանաւոր չար ոգին... Բերիան: Այդ է դժուարացնում գործը, թէ չէ՝ ո՞վ է Լ. Ա. ն կամ Ս. Ա. ն, որ կարողանան այսֆան արգելակել մեր կուլտուրայի եւ գրականութեան զարգացումը...

«Այդ մենք էլ գիտէինք»:

Իսկ մեր դիացածը այն է հիմա, որ Ն. Ստեփանեանի դէմ եղած մահացու մեղադրանքներուն շարժառիթները իմանալու համար նոր տուեալներու պէտք չունինք:



ՄԿԻՏԻՉ ԶԱՆԱՆ.— ԴԵՐԱՍԱՆ, ՂԵՐՈՍՈՅՅ ԵՆ
Թատերադիր: Ծնած է Պոլսոյ Սամաթիա թաղը,
1892ին: Դերասաններով շրջապատուած միջավայ-
րի մը մէջ հասակ առնելով՝ Զանան վաղ մանկու-
թենէն կը տարուի թատրոնով եւ 1911ին կ'ըն-
գունուի Վահրամ Փափաղեանի ղեկավարած «Պոլ-
սոյ հայ դրամատիկ խումբ»ին մէջ: Ծանօթ կղեւ-
նին հետեւանքով քայքայուած թատրոնը վերա-
կենդանացնելու համար՝ 1918ին քանի մը ուրիշ-
ներու հետ կը ձեռնարկէ «Պոլսոյ հայ տրամաթիկ
ընկերութեան» հիմնադրման, իսկ տարի մը անց
կը մեկնի Փարիզ եւ կը հետեւի դերասանական
արուեստին ու գրականութեան: Այնուհետեւ կը
չըջի եւրոպական կարգ մը քաղաքներ եւ կը վե-
րադառնայ Պոլիս, ուր Վահրամ Փափաղեանի
խումբին մէջ կը մարմնաւորէ շարք մը կարեւոր
դերեր: 1922ին, Սունդուկեանի անուան թատրո-
նին հրաւերով՝ Փափաղեանի եւ ուրիշներու հետ
կ'երթայ Հայաստան եւ կը ստանձնէ բազմաթիւ
դերեր, դառնալով նոյն թատրոնին առաջնակարգ
դերասաններէն մէկը: Կը գրէ շարք մը թատեր-
դրութիւններ, որոնց մէջ առանձին տեղ մը կը
գրուէ «Շահնամէ»:

«Զանանի գործունէութիւնն ընդհատուեց 1937
թուականին»:

Վերիններէն թերեւս աւելի ողորդական է այն միւս վկայութիւնը, որ
պատկերացուած է այդ դէպքերուն անդրադարձող յօդուածի մը հետեւեալ
պարբերութեանց մէջ.

«Մորհրդային Հայաստան» թերթի 6 Օգոստոսի թում տպուած են եր-
կու նամակներ, ուղղուած երկու վրացիների՝ Ստալինին եւ Բերիային եւ
ստորագրուած Հայաստանի պրոֆեսէօրների, դասախօսների, դերասանների,
նկարիչների, գիտնականների, գրողների, երաժշտագէտների եւ այլնի կողմից:

«Այդ նամակներում Հայաստանի բարձր մտաւորականութեան ներկա-
յացուցիչները, ընդառաջ գնալով Բերիայի նիւթած դաւերին, հաստատում
են գոյութիւնը Ն. Ստեփանեանի «հակայեղափոխական-տրոցկիստական-նա-
ցիոնալիստական խմբակի» եւ հրապարակով սուտ վկայութիւն են տալիս այն
մասին, որ իբր թէ Ա. Խանջեանը «հովանաւորել է» Հայաստանում նացիո-
նալիզմն ու նացիոնալիստներին»:

Տիրող բարքերուն մասին վկայող Հայաստանի մտաւորականներուն
ստորագրած դոյզ նամակներէն նուազ սահմուկեցուցիչ չեն այն երեւոյթները,
որոնք դատի քաշուած «անմեղ մեղաւորներուն» առիթով յաճախադէպ դար-
ձան մեր երկրին մէջ:

Ահաւասիկ մէկը այդ բարացուցական եղելութիւններէն:

1937 Դեկտեմբեր 28ին, Հայաստանի դատարանը կը կայացնէ վճիռ մը,
ըստ որում՝ ութ մեղադրեալներ կը դատապարտուին դնդակահարութեան,
«վնիոր վերջնական է ու բեկման ենթակայ չէ» յայտարարութեամբ: Յաջորդ
օրը, «Խորհրդային Հայաստան» թերթը ընթերցողին կը յայանէ սա աննա-
խաղէպ նկարագրականը, թէ՛

«Դատավճիռի հրապարակումը դահլիճում ներկայ գտնուող հարիւրա-
ւոր բանուորների, կուլտուեսականների, խորհրդային ինտելիգենցիայի ներ-
կայացուցիչների կողմից դիմաւորուեց ցնձագին ծափահարութիւններով,

ուռուաներով, բացականչութիւններով, «կեցցէ խորհրդային արդարադատութիւնը», «մահ ֆաշիստական շներին», «ողջոյն խորհրդային դատարանի արդարացի դատավնդին»:

Աշխարհի մէջ չկայ թերեւս ժողովուրդ մը, չկայ քաղաքակրթութեան հետ քիչ-չատ կապ ունեցող ոեւէ հաւաքականութիւն, որուն տարբեր խաւերը, պարզ բանուորէն սկսած մինչեւ դիտնական փրոֆեսէօրները կամովին խմբուին դատարանի մը առջեւ եւ հաւաքաբար քրքջան մահաւճիռներու ի լուր: Կեանքէն զրկուող ամէնէն մեղսաթաթաւ անձին իսկ պարագան մարդկայինի սահմաններուն մէջ մնացած մարդուն համար տխրութեան դուռ կը բանայ եւ բնաւ չի ձգեր, որ ուրիշներ տօնական կեցուածք ընդունին այդ առիթով եւ ցնծադին ուռուաներ արձակեն:

Մահապարտներու պատմութիւններէն յաղեցած եւ սուղի մշակոյթէն կուշտ մեր ժողովուրդին մօտ մանաւանդ բոլորովին խորթ երեւոյթ է դատարաններու առջեւ կաղմակերպուած ցնծութեան որեւէ ցոյց: Այնուամենայնիւ, փաստը փաստ է:

Մարդոց ներքին հարստահարման համար յղացուած ստալինականութեան եղերականօրէն ցայտուն բարքերէն մէկը նկարագրած է ինքը, «անյանցանք տաժանակիր» Գուրգէն Մահարին, իր «Ծաղկած փշալարեր»-ուն մէջ, փրոֆեսէօր Թադէոս Ավդալբեկեանի եւ անոր աշակերտներուն սա հուսկ փոխյարաբերութեան մէջ, որ ծայրագոյն ապաբարոյութեան բնորոշ նմոյշ մըն է:

«Երբ «Կապիտալ»-ի առաջին թարգմանչին, ազնիւ սովետական դասախօսին ֆննիչները ծեծի են քաշել, դասախօսը փորձել է ուշփի բերել իր նախկին ուսանողներին, դիմելով նրանց զգաստացնող խօսքերով. — Ի՞նչ էք անում, տղաներ, ինչո՞ւ հեռու չէք նայում, ախր պատմութիւն կայ, պատասխանատուութիւն կայ... — Քննիչներից մէկը ծխախոտը հանգեցրել է՝ սեղմելով իր պրոֆեսորի նակատին եւ ասել, — քանի մենք կանք, պատմութիւն չի լինի, իսկ երբ պատմութիւնը լինի, մենք չենք լինի»:



Թ. ԱՎԴԱԼԲԵԿԵԱՆ. — Ուսուցիչ, պատմաբան, տնտեսագէտ, թարգմանիչ: Ծնած է Պարսկաստանի Մակու քաղաքը, 1885ին: 1907ին աւարտած է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը եւ մինչեւ 1913 զբաղած է ուսուցչութեամբ: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, կ'աշխատի Հայպետհրատի եւ Համալսարանի մէջ, միաժամանակ զբաղելով պատմական, բանասիրական, տնտեսական եւ թարգմանչական աշխատանքներով: Իր գլխաւոր գործերն են. — «Միհրը հայոց մէջ», «Անյայտ ազանդաւորներ հայոց մէջ ԺԶ. եւ ԺԷ. դարերում», «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18րդ դարի վերջում», «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրութիւնների մէջ», եւն.: Ավդալբեկեան յատուկ ուսումնասիրութիւններ նուիրած է Աբովեանի, Նալբանդեանի, Մուրացանի, Արսէն Թումաճեանի սեղծագործութիւններուն: 1934-1935 թուականներուն մասնակցած է «Ռուս-հայերէն նոր բարառան»-ի կազմութեան աշխատանքներուն: Գերմաներէնէ թարգմանած է Մարքսի «Կապիտալ»ը:

«Թադէոս Ավդալբեկեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:



ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆ.— Վիպագիր, հրատարակագիր, մանկավարժ: Ծնած է Պոլսոյ Սկիւտար թաղամասը, 1878ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն ազգային վարժարանին մէջ: 1895ին փոխադրուած է Փարիզ եւ մասնակցած Գուիտոն Լուսինեանի Ծրանսերէն-հայերէն բաժանին խմբագրութեան, միաժամանակ Սորպոնի մէջ հետեւելով դրական դասընթացներու: Այդ շրջանին աշխատակցած է նաեւ Փրանսական պարբերական մամուլին: Պոլիս վերադառնալով կը մասնակցի մեր հանրային կեանքին ու կը ստորագրէ շարք մը վէպեր եւ վիպակներու հաւաքածոներ, որոնց մէջ գլուխ-գործոցներ կը համարին «Աւերակներու մէջ», «Վերջին բաժակը» եւ «Սիլիհտարի պարտէզները»: 1933ին Հայաստանի կառավարութեան հրաւերով կը մեկնի Երեւան եւ համալսարանի մէջ կ'աւանդէ արտասահմանեան դրականութիւն:

«Եսայեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:

Այս պատկերին ղիմաց ո՞վ կրնայ ճշդեւ, թէ հոն գործող անձերէն ո՞ր մէկուն կացութիւնը աւելի ողբերգական է, փրոֆեսէօրի՞ն կացութիւնը, թէ դադաններուն ամէնէն վայրագն անդամ չուքի մէջ ձգող անոր աշակերտներուն:

Փրոֆեսէօր Ավդալրեկեանը իր դժոխքին մէջ մնաց եւ այլեւս տուն չվերադարձաւ անշուշտ, բայց ի՞նչ եղան արդեօք զինք այդ վիճակին մատնող աշակերտները, մանաւանդ ինչո՞ւ աշակերտներուն յանձնուած է իրենց փրոֆեսէօրը մահէն առաջ մեռցնելու այդ մահաբեր պաշտօնը: Հարցումը ունի հարկաւ իր պատասխանը: Գործելակերպի ոճ էր, հարադատ մը մօտիկ մերձաւորներու ձեռքով խողխողել տալու սաղայէլական սաղբանք, որու գործադրութիւնը հաստատող օրինակները քիչ չեն, անհամար են: Մահապարտ մը մահէն առաջ մեռցնելու նոյն սկզբունքին հետեւանքով էր, որ Մտալինի բարակները յաջողեցան եղբայրը հանել եղբօրը դէմ, կինը՝ ամուսնոյն, դաւակը՝ հօր, աշակերտը՝ ուսուցիչին, գործիչը՝ գործակիցին, զրոյը՝ գըր՝ չակիցին:

Ու հեղնանք թուի թերեւս, եթէ ըսենք, որ խորշակին առաջին օրերուն դատապարտուած դժբախտները յաճախ աւելի բախտաւոր եղան, քան չարչարանքի բանաւոր, գրաւոր կամ Փիղիքական պաշտօններ ստանձնած առաջին չարչարադէտները, որոնք պաշտօնապէս դատապարտուած իրենց հարազատները բանիւ եւ գործով չարչարելէ ետք, չուչացան իրենց հերթին նստիլ ամբաստանութեան նոյն աթոռներուն վրայ, ով դիտէ ինչ խորութեամբ ապրելով մերձաւորներ մեղադրած ըլլալու իրենց անսանձ ելոյթներուն սանձազերծ ողբերգութիւնը...

Ու նման դրսեւորումներու հիմամբ է, որ մտաւորական դէմքերը կը վերլուծեն մարդ էակը իր բովանդակութենէն պարպած ստալինականութիւնն

Դ. ՏԵՐ-ՍԻՄՈՆԵԱՆ.— Մշակութային գործիչ, մանկավարժ: Ծնած է Համամլու գիւղը, 1895ին: 1903ին կ'ընդունուի Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը, զոր կ'աւարտէ 1912ին: 1913ին կը յաճախէ Քիւեի առեւտրական ինստիտուտը: 1915ին կը զօրակոչուի եւ կարճ ատեն մը սպայից վարժարանի դասընթացքներուն հետեւելէ ետք, կը զրկուի ռազմաճակատ: Հոկտեմբերեան յեղափոխութեան յաջորդող տարիներուն, լայն գործունէութիւն կ'ունենայ կուսակցական եւ զինուորական ասպարէզներուն մէջ: Խմբադիր՝ յաջորդարար լոյս տեսած քանի մը թերթերու: 1928ին կը զրկուի Փարիզ, ուր կը խմբադրէ «Երեւան» թերթը: Ատեն մը՝ Հայաստանի գրողներու միութեան նախագահ եւ արուեստի գործերու վարչութեան պետ: 1934-1936 թուականներուն՝ դասախօս Երեւանի պետական համալսարանի մէջ:

«Դ. ՏԵՐ-ՍԻՄՈՆԵԱՆԻ գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:



ո՛վ դիտէ: Այս վերջիններուն մէջ մրցանակ կոտորող եռանդ մը ցուցաբերեց Հրաչեայ Քոչար, որուն բերնէն դուրս եկած են հետեւեալ բառերը.

«Զգուանձով պէտք է արտասանենք երկերեսանի Դր. Սիմոնեանի անունը, որը յիմարներին խաբելու համար, յարմար համարելով քաղաքական ներքինի ձեւացնել իրեն, նացիոնալիստական թշնամական տարրերի դայեակի դերն էր ստանձնել եւ խրախուսում էր նրանց հակայեղափոխական արարքը»:

Մեծահասակներուն հետ ձայն բռնած Քոչարէն ետք, Քոչարի հասակակիցները եւս մասնակցեցան իրենց երէկի ընկերներուն դէմ պաշտօնական մեղադրանքները կրկնելու եւ զարդացնելու մրցավազքին, ինչպէս ցոյց կու տայ Ցական Շողենց ստորագրող անորոշ անձին սա մահացու յերիւրանքը.

«Վախտանգ Անանեանի «Քարանձաւի բնակիչները» լի է հակայեղափոխական պրովակացիաներով եւ ֆաշիստական գրպարտութիւններով: ...Անանեանը նիշդ նոյն կերպ է վարում, ինչպէս Դաշնակցական բանդիտ Մահարին իր խժբժանքների եւ տրոցկիստ-տեռորիստ Ալազանն իր հակայեղափոխական փեղցփեղութիւնների մէջ»:

Արեւմտահայ դրականութեան ապրիլեան եղեռնին հետ թէեւ մէկ-երկու անգամ յիշեցինք արեւելահայ դրականութեան ապրիլեան եղեռնը, բայց խղճմտանքը թոյլ չի տար սահմանափակուիլ միայն դրականութեան մէջ ու քանի մը բառով չանդրադառնալ նոյն ամսոյն կատարուած մտաւորական միւս խաւերուն կոտորածին:

Ապրիլի առաջին շաբաթներուն կայացած զրոյներու զոյգ-զոյգ ժողովներուն առնթեր, ժողովներ զուճարուեցան նաեւ այլ մարդերու եւ յատկապէս կրթական կալուածին մէջ: Անոնցմէ մէկը սկսաւ 17 Ապրիլին եւ վերջացաւ նոյն ամսոյն 22ին: Ժողովի անունին տակ տեղի ունեցած այդ հաւաքոյթները իրական առումով ժողով չէին հարկաւ, այլ հաւատաքննական բաց ատեններ, ուր ինքնաքննադատութեան կարգով նրբին խոստովանութիւններ


կորզուեցան ներկաներէն ու դատի քաջուեցան մասնաւորաբար անոնք, որոնք «մտացան յիշատակել, որ ինստիտուտում ո՛չ միայն անցեալում, այլեւ այժմ էլ գործում են տրոցկիստ-նացիոնալիստական տարրեր»: Ու երախաաշատ մարդիկ դատի կանչուեցան միայն այն պաաճառով, որ խօսք չբացին այն մասին, որ «իրենք կողմ կողմի են աշխատել հակայեղափոխական-նացիոնալիստական-տրոցկիստներ Ն. Ստեփանեանի, Դր. Սիմոնեանի, Ա. Եղիազարեանի եւ ուրիշներին»:

Պետական համալսարանի եօթը օր տեւած ժողովը ի միջի այլոց արձանագրեց, թէ՛

«կուսակցական կազմակերպութեան եւ համալսարանի դեկաւարների յեղափոխական զգաստութեան թուլութեան, քաղաքական կարնատեսութեան հետեւանքով՝ հակայեղափոխական-տրոցկիստական-դաշնակցական-նացիոնալիստական տարրերը տարիներ շարունակ քողարկուած կերպով իրենց քայքայիչ աշխատանքն էին կատարում պետական համալսարանում, իդէոլոգիական փրոնտի բոլոր կարեւորագոյն հարցերում անցկացնելով իրենց հակայեղափոխական կոնցեպցիան»:


Կը պարզուի, որ ձերբակալուած Ն. Ստեփանեանը, Դր. Սիմոնեանը եւ ուրիշներ «իրենց աւանդած առարկաներում, իրենց յանձնուած ամբիոններում անց են կացրել հակայեղափոխական-տրոցկիստական կոնցեպցիաներ, կեղծել են պատմութիւնը»: Ութ ամիս առաջ ձերբակալուածներուն «հակայեղափոխական» այդ վարմունքին հետ դարձեալ չեն մոռցուած ձերբակալման նոր թեկնածուներուն մեղքերը, թէ՛ «մինչեւ վերջին ժամանակներս էլ ուսանողներին հակայեղափոխական գրականութիւն էր հրամցում առանձին դասախօսների կողմից»:

Պետական համալսարանի այդ նոյն ժողովին էր, որ «մերկացուեցան» կարգ մը դասախօսներ, Յակոբ Զօրեանը օրինակ, որ «թոյլ էր տուել նացիոնալիստական կարգի մի շարք սխալներ՝ պատմական Հայաստանի աշխարհա-



Յ. ԶՕՐԵԱՆ.— Պատմաբան, գիտութիւններու տոքթոր, փրոֆեսէօր, մանկավարժ: Ծնած է Թուրքիոյ Օրդու քաղաքը, 1894ին: Միջնակարգ կրթութիւնը ստացած է Պոլսոյ Պէրպէրեան վարժարանը: 1912էն 1915՝ ուսուցիչ իր ծննդավայրին մէջ: 1915էն 1919՝ ապրած է Պուլկարիա: Այնուհետեւ, մէկ տարի կը հետեւի Լօզանի համալսարանին, իսկ 1925ին կ'աւարտէ Պերլինի համալսարանը: Նոյն թուականի աշնան Հայաստանի կառավարութեան կողմէ կը հրաւիրուի Երեւան՝ իբրեւ հայ ժողովուրդի պատմութեան դասախօս: Հայաստանի մէջ կը վարէ նաեւ իր մասնագիտութեան համապատասխան այլ պաշտօններ: Իր գլխաւոր գործերն են.— «Ֆէօդալական Հայաստանի գիւղացիական շարժումները 10րդ դարում», «Ներդասակարգային պայքարը հայ Արշակունիների քաղաւորութեան վերջին շրջանում», «Արտաշատի, Վաղարշապատի եւ Դուինի փրոպիւնները», եւ այլն:

«Պրոֆ. Յ. Զօրեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:



Գ. ԷՒԻԼԵԱՆ.— Հողերան, մանկավարժ, փրոֆեսոր: Ծնած է Իջեւան, 1885ին: Նախնական կրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, 1896—1899 թուականներուն կը հետեւի Ներսիսեան վարժարանի դասընթացներուն: 1898ին կ'ընդունուի Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որուն լսարանական բաժինը կ'աւարտէ 1903ին: Յաջորդ տարի կ'անցնի արտասահման: Քանի մը տարի Գերմանիոյ Ենայի եւ Լայպցիկի համալսարանները յաճախելէ ետք, ուսումը կը շարունակէ Զուիցերիոյ Պեռնի համալսարանին մէջ: 1909ին կը վերադառնայ հայրենիք եւ երեսուն տարի շարունակ կը պարապի ուսուցչութեամբ: 1921ին կը հրաւիրուի Երեւանի համալսարանը, ուր կ'աւանդէ հողերանութիւն եւ հայոց լեզու: Ունի կարգ մը աշխատութիւններ մանկավարժութեան, հողերանութեան, հայերէն լեզուի ուսուցման եղանակին, մանկավարժական մտքի պատմութեան եւ հայ դրականութեան պատմութեան վերաբերող:

«Փրոֆ. Էդիլեանի գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:

գրութեան եւ առհասարակ պատմութեան ծրագրերը կազմելու եւ դասաւանդման գործում», ու փրոֆեսոր Գ. Իդիլեանը՝ «իր մանկավարժական մի շարք ռեակցիոն տեսակէտների» համար:

Միւս դիտնականներուն ու փրոֆեսորներուն սրածման կամ անհետացման պատճառներուն մասին տեղեկութիւններ կը պակսին մեզի, դիտենք միայն, որ անոնց

«Գործունէութիւնն ընդհատուեց 1937 թուականին»:

Մինչեւ հոս եղած մատնանշումները կը վերաբերէին մասամբ քաղաքական, քաղաքականին հետ կուսակցական, քիչ մը կրթական եւ ընդհանրապէս դրական ասպարէզներուն, բայց մաքրագործման խորշակը այդ սահմաններուն չմնաց, այլ ընդդրկեց աշխատանքի ու դործունէութեան բոլոր մարդերը, ուր կամայականութեան, պաշտօնամոլութեան ու պատեհասպաշտութեան հսկայ քառսի մը մէջ, տեղական խաթարուածները, հաշուեյարդարի կարգով՝ դերակատարեցին վերէն պահանջուած արիւնոտ հունձքը:

Վաստակաւոր, անուանի թէ պարզ մարդոց ոչնչացման պատճառներուն ամբողջական անհեթեթութիւնը շօշափելի դարձնելու համար՝ կատարենք արդ քաղուածք մը եւս, ուր կիրարկուած հայոց լեզուն իր պատմութեան մէջ այդքան խաթարում երբեք պատկերացուցած չէր թերեւս եւ մարդոց շրթներուն երբեք այդ աստիճան ապականած չէր ինք:

Ահա թէ ինչպէս, միշտ իրենց արտայայտութիւններով՝

● Կոնֆերանսը պահանջեց անմիջապէս դահլիճից հեռացնել լիտիացած հակայեղափոխական Ա. Յովհաննիսեանին եւ տեղն ու տեղը միաձայն որոշում ընդունեց նրան կուսակցական շարքերից վտարելու մասին:

● Կուսակցութեան շարքերում իրենց ստոր դործն էին կատարում հակայեղափոխական-տրոցկիստական-դաշնակցական ճիւղներ Խ. Սուլթանեանը, Ա. Աղայեանը, Ա. Յարութիւնեանը եւ ուրիշներ:

● **Զայրոյթով անարդանքի սիւնին է դամուել ստոր թշնամի, թաքնը-
լած Գաշնակ Հրանա Ղարիբեանը, որը երկերեսանիութեան միջոցով հասել
էր շրջկումի քարտուղարի սլաշտօնին :**

● **Շրջանային Լուսարաժնի վարիչ Ա. Նալբանեանը կապեր է ունե-
ցել դաւաճան Ն. Ստեփանեանի, Արտօ Եղիաղարեանի հետ եւ կատարել է նը-
րանց դիրեկտիւները՝ նացիոնալիստական դիժ վարելով յատկապէս թուրքա-
կան դպրոցների նկատմամբ :**

ՂՈՆԱՆՉԵԱՆԸ, — ազգային փոքրամասնութիւնների մէջ դժգոհութիւն
առաջացնելու համար կտրել է քրտական դիւղերի հողամասերը եւ յանձնել
հարեւան հայ դիւղերին :

Զ. ԳՊԻՐԵԱՆԸ, — կոնֆերանսում հանդէս դալով, թաքցրեց իր աւագ
եղբօր տրոցկիստ լինելը եւ նրա հետ պահպանած իր կապը :

Ի. ԱՍՍՏՐԵԱՆԸ, — կապ սլահպանելիս է եղել արտասահման փախած
իր հակայեղափոխական եղբօրը հետ եւ հաճոյակատարութեամբ ու ստորա-
քարչութեամբ է դբազուել :

Վ. ԲԱՈՅԵԱՆԸ, — կուսակցութիւնից թաքցրել է իր՝ կալուածատիրոջ
որդի լինելը :

ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ, — ստորներից ստոր, երկերեսանիութեամբ դե-
կավար պոստ սողոսկած :

Ա. ՂՈՒԼԱՐԵԱՆԸ, — կարիերիստ եւ քծնութեան ստաժաւոր վարպետ :

ՇՈՒՇԻԿ ՆԱՎՈՅԵԱՆԸ, — վտարուել է կուսակցութիւնից իր ամուս-
նու հետ կապեր ունենալու համար :

ՀՐԱՆՈՅՇ ԳԱԻԹԵԱՆԸ, — տաս տարի սերտ յարաբերութիւն է ունեցել
իր ամուսնու հետ, դիտակցել է նրա տրոցկիստ լինելը, բայց չի յայտնել այդ
մասին կուսակցութեանը եւ ամէն կերպ հովանաւորելիս է եղել մերկացուած
հակայեղափոխական տրոցկիստ Ենդիբաբեանին :

ԶԱԽՄԱՆՉԵԱՆԸ, — ո՞վ է Զախմախեանը, մի քանի օր առաջ նրա
կնոջը՝ Վարդուչին մերկացրին, որպէս հակայեղափոխական տրոցկիստ :

ՍՈՖԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԶԱՆԱՆ, ԹՈՂԱՅԵԱՆ, — այդ վիժուածքները
փորձում էին թատրոնը դարձնել իրենց սեւ դաղափարախօսութեան օճախը :

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ, — բուրժուական նացիոնալիզմի վարժուած մաքսա-
նենդ :

ՎԱԽՏԱՆԳ ԱՆԱՆԵԱՆԸ, — դաշնակցական վիժուածք :

ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆԸ, — Խանջեանի արբանեակ, Աբխեանի մանկլաւիկ,
դաշնակցական հովերով տարուած պողխալիմը (ստորաքարչը) :

ԵՐՈՒԱՆԳ ՔՈՉԱՐԸ, — այս սրիկան այս ու այն կողմը մի քանի ան-
դամ լկտի հակայեղափոխական, ըստ էութեան Փաշիզմը դովերդող յայտա-
րարութիւններ է արել :

Ինքնապաշտպանութեան որեւէ միջոցէ դուրկ մարդերը նման բառերով
որակելու եւ կացութիւններով ներկայացնելու այս ամօթալի եղանակը ո՛չ
միայն մեր, այլեւ մարդկային բովանդակ պատմութեան մէջ չունի իր նա-
խընթացը :

Ազասի Խանջեանին յաջորդող Ամատունիի օրով եւ անոր եռանդուն մաս-
նակցութեամբ կատարուած այս մաքրազործումները, որոնք անշուշտ առաջ
մղուեցան «ընկեր Բերիայի ամէնօրեայ օպերատիւ դեկալարութեամբ», —
ուանձին դնահատութեան արժանացան 17 Մայիս 1937ին դումարուած Երեւա-

Բ Ա Գ Ի Ն

րազոյն Խորհուրդի ընտրութեան կապակցաբար, «խորհրդային Հայաստան»
թերթին մէջ կան նոյնիսկ յայտարարութիւններ այդ մասին, թէ՛

«Միկոյեանը հանճարեղ առաջնորդի ցուցումներով ջախջախել ու հող-
մագրիւ է արել հայ ժողովրդի ամենակատաղի թշնամիներին», եւ այլն:

Ընտրութիւններու կապակցութեամբ 1937 Դեկտեմբերի առաջին օրե-
րուն Մոսկուայէն Երեւան եկած Միկոյեան չհերքեց ջախջախումներուն բե-
րած իր մասնակցութիւնը, ընդհակառակն, իբր արտասանած ճառերուն մէջ
գովաբանեց ջարդարարներուն, եւ աւելի՛ն. կոչ ըրաւ շարունակել կոտո-
ւածը:

«Հայկական ԽՍՀն գարգանում է արագօրէն. նա կը կարողանար գար-
գանալ է՛լ աւելի, եթէ նրա գարգացումը չարգելակէին հայ ժողովրդի թշնա-
միները — դաշնակները, տրոցկիստները — բուխարիական վնասարարները,
որոնց բունն արդէն հիմնականում ջախջախուած է, բայց թափփուկները որոշ
տեղերում դեռ մնացել են եւ նրանց հարկաւոր է արմատախիլ անել եւ անո-
ղոքաբար ոչնչացնել»:

Անշուշտ, Հայաստանի ժողովուրդին սպասածը այս չէր Գերագոյն Խոր-
հուրդներու երէկի անգամ ու այդ օրուայ թեկնածու իր արենակիցէն, մարդ-
կայնութեան շունչն էր սպասուածը եւ ո՛չ թէ քոսսային պայմաններու մէջ
զաւակ, ամուսին, կին, սրտակից, բանաստեղծ, դրագէտ, ուսուցիչ կորսըն-
ցուցած սարսափահար մարդոց հիւժած սրտերուն վրայ նոր ամպեր կուտա-
կող մարտաշունչ ճառ, — «բայց թափփուկներ որոշ տեղերում դեռ մնա-
ցել են եւ նրանց հարկաւոր է արմատախիլ անել ու անողոքաբար ոչնչա-
ցնել»:

1937ի վերջին ամիսներուն, դեռ Երեւանի եւ այլ վայրերու բանտերուն
մէջ էին ձերբակալուած անմեղներէն շատերը, խոշտանդուած կամ հիւսիսի
ճամբարներուն չէին դատապարտուած տակաւին, եւ Միկոյեան փոխանակ
անմեղօրէն ոչնչացուողներուն թիւը պակսեցնող ճիգեր ի դործ դնելու, դո-
հերուն ցանկը աճեցնելու պապակ մը բերաւ Մոսկուայէն ու նախամեծար հա-
մարեց մեղսակից դառնալ մեր հայրենիքը իմացապէս ու հողային առումով
կոտորակող վրացական րացայայտ դաւին:

Ու այդ օրերու «անհամար» ցաւերէն ետք, ցաւ մըն ալ ա՛յս՝ հայ ժո-
ղովուրդի սրաին, որ Գերագոյն Խորհուրդի դիրքերուն հասած իր արենակի-
ցին հանդէպ երախտողիտական զզացումներ փայփայելու փոխարէն՝ ստիպ-
ւեցաւ փոքրոգութեան փաստեր արձանադրել անոր անունին դիմաց:

Պատմական ցնցումներու առաջացուցած վէրքերէն դեռ չբուժուած,
մեր երկրին մտաւորականութիւնը, Հայաստանի խորհրդայնացման համար
եռանդուն պայքար մղած դէմքերը մանաւանդ, այսպէս, խորհրդայնացման
տասնըհինգամեակի վաղորդայնին, ենթարկուեցան աննախատեսելի սպանդի
մը, Ֆիդիքտիկան թէ հողեկան առումով, պետական, կուսակցական, մշակու-
թային ու դրական բոլոր ճակատներուն վրայ:

Համայնավար աշխարհը, ինչպէս նաեւ համայնավարութեան ուղեկից
արաստահամանեան կուսակցութիւնները շատ ուշ միայն ընդունեցին ու յայ-
տարարեցին, որ հարիւրաւոր ու հազարաւոր մարդոց սրածման համար առաջ
քշուած վերոյիշեալ պատճառները միայն ու միայն զրպարտութիւններ եղած
են եւ զուրկ արեւէ իրական հիմքէ: Այս մասին խորհրդային պատմութեան
էջերուն արձանագրուած հաստատում մը կ'ըսէ, թէ՛ «Այդ ժամանակաշրջա-
նում պետութեան մէջ ամենապատասխանատու պոստերն էր խցկուել սրիկայ,

«Մերկաշուեց նաեւ Հայաստանի հակայեղափոխական - նացիոնալիստական - տրոցկիստական կենտրոնը, որի անդամներն էին Ա. Երզնկեանը, Ա. Եսայեանը, Ս. Փիլրոմովը, Պ. Մակինցեանը եւ ուրիշներ»:

1937, Ապրիլ



ՊՕՂՈՍ ՄԱԿԻՆՅԵԱՆ

քաղաքական աւանտուրիստ Բերիան, որն իր յանցաւոր նպատակների համար կանգ չէր առնում ոչ մի չարագործութեան առաջ եւ, օգտագործելով Ի. Վ. Ստալինի անձնական թերութիւնները, զրպարտեց եւ ոչնչացրեց պարտիային ու ժողովրդին նուիրուած մեծ թւով ազնիւ մարդկանց»:

Ի հարկէ, առանց Ստալինի հովանաւորութեան եւ ստալինականութիւն կոչուած արիւնաթաթախ դրութեան ո՛չ Բերիան եւ ոչ ալ Բերիայի համամիութենական ու հայաստանեան գործակալները կը յանդդնէին յանցաւոր նըպատակներու համար չարագործութեանց մեքենայութիւնները նման համեմատութիւններու բարձրացնել, ըայց ատիկա, ինչպէս ըսուեցաւ անդամ մը, ուրիշ խնդիր է, եւ դուրս՝ կաաարուած սպանդը ընդհանրապէս առարկայական փաստերով պատկերացնելու կոչուած այս սիւնակներուն ծիրէն:

Բոլոր պարագաներուն ահաւոր էր ստալինեան նախճիրը, որուն ենթարկուած մեր մտաւորականներէն ոմանք բանտարկութեան տարին չլրացուցած՝ զնդակահարուեցան կամ խոչտանդուեցան Չեկայի զնտաններուն մէջ, — Ներսիկ Ստեփանեան, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Չապէլ Եսայեան, Եղիշէ Չարենց, Դրաստամատ Սիմոնեան, Գուրդէն Վանանդեցի, Եւայլն:

Ուրիշներ բանտերէն հանուեցան ու քշուեցան դէպի ցրտաշունչ ատժանավայրերը, ուր շաաերը անհեա կորսուեցան, — զիտնականներ, փրօֆեսօրներ, պետական ու կուսակցական գործիչներ, ու վերապրեցան քանր մը «բախտաւորներ», որոնցմէ ոմանք տուն վերադարձան իրենց բաժին ինկած «տասը տարուայ ազատագրկման դառն պլանը գերակատարելով», իսկ ուրիշներ «տասնըվեց տարի, երկու ամիս եւ տասնըհինգ օր» ճամբարէ ճամ-

բար քաջքշուելէ յետոյ, — Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն, Վաղարշակ Նորենց, Վահրամ Ալազան, եւայլն :

Անմիջապէս ոչնչացուած դէմքերուն յետձերբակալման կենսազրութեան մասին շատ քիչ մանրամասնութիւններ ունի հայ մարդը, անհետ կորսուածներուն մասին դարձեալ լայն տեղեկութիւններ կը պակսին, իսկ վերապրողները «հայրենիքից, տնից հեռու, ամբաստանուած, մերժուած, արհամարհուած, անսիրտ, անհոգի մարդկանցով շրջապատուած» ատեն ապրած իրենց կեանքէն մաս մը բան օրադրեցին, նկարագրեցին տաժանքը «Ծաղկած փշալարեր»ու ետին օր աւուր խամրող մարդոց, որոնք «Պատուիրեցին յանձնել ձեզ» իրենց դառնադառն փորձառութիւնները :

Զիւնհալին հետ սկսած յարաբերական խաղաղութեան շրջանին, Հայաստանի մեր ապրող մտաւորականները խղեցին պարապիր լուծիւնը եւ իրենք եւս անդրադարձան վերը ուրուադժուած մոռյլ երեւոյթին պաճառներուն եւ ծանր հետեւանքներուն : Առ այդ լոյս տեսած բազմաթիւ դրութիւններէն անջատենք երկու հատուած, քննադատի մը զայրոյթը եւ բանաստեղծի մը «հոգեկան ցաւը» :

Քննադատը կը դրէ .

«Հայրենիք, հող, ազգային հպարտութիւն ու արժանիքներ, ազատագրական շարժում ու պայքար, կորցրած հայրենիքի կարօտ ու սէր, հայ ժողովուրդ, — հասկացողութիւնները 20ական թուականներին եւ 30ական թուականների սկիզբին համարուում էին աններելի յանցանքներ եւ գրեթէ դաւանաւորութիւն՝ սոցիալիզմի գործին : Շատ շուտով այդ փառաբանութիւնը ստացաւ գործնական յստակութիւն : 30ական թուականներին նացիոնալիզմի մեղքով՝ բանտեր նետուեցին եւ ոչնչացուեցին շատ մտաւորականներ, գրողներ ու գրականագէտներ, այդ թւում էին նաեւ յեղափոխութեան վետերաններ, որոնց հասցէին նետուած մեղադրանքները այսօր թւում են զարմանալի «միամիտ» եւ ծայր աստիճան անազնի» :

Ահա եւ բանաստեղծին կսկիծը .

«Անհատի պաշտամունքը յատկապէս դառն ու վնասակար ազդեցութիւն թողեց մեր գաղափարական աշխատանքի բոլոր բնագաւառների վրայ : Դա հաստատելու համար բաւական է վերցնել հենց մեր հանրապետութեան, մեր ժողովրդի մտաւորականութեան հետ կատարուած փաստը : Անասելի ծանր հոգեկան ցաւով եւ ափսոսանքով ես լցում, երբ ամէն անգամ մտածում ես, թէ որքա՛ն հարուստ ու մեծ կը լինէին մեր յաջողութիւնները գիտութեան, տեխնիկայի, գրականութեան, արուեստի, կուլտուրայի, լուսաւորութեան բնագաւառներուն, եթէ ժամանակից շուտ արհեստականօրէն կեանքից չհեռացուէին հազարաւոր յայտնի, մտքով, սրտով ազնիւ ու տաղանդաւոր դէմքեր» :

Ոսօքը նոյն քննադատին կը պատկանի դարձեալ, արձանադրուած տարբեր առիթով մը, որ սակայն մէկ ուղղակի արձագանգն է բանաստեղծին «որքա՛ն հարուստ ու մեծ կը լինէին» բացազանչութեան, «որքա՛ն» .

«Որքա՛ն տաղանդներ անհետացան ասպարէզից, եւ որքան գրքեր մեմֆչունեցանք, ինչպէս տանջալի կերպով խաբարուեց մեր գրականութեան այնքան մօտիկ թուացող սփանչելի գալիքը» :

Իրապէս «որքա՛ն դրքեր մենք չունեցանք», ու փոխարէնը որքան շատ զոհեր ունեցանք :

Գնդակահարուածներ ու խոչտանդուածներ ,

Անհեա կորսուածներ ,

Վերապրողներ :

Բայց միայն ասո՞նք եղան ստալինեան նախճիրին զոհերը :

Չենք կրնար կրկնութեան դնով չըսել, որ ո՛չ, միայն ասոնք չսղան : Գնդակահարութենէ , անհեաացումէ , բանաային սարսափներէ ու ճամբարային թիապարաութիւններէ դերժ մնացողները , խնայուածներ՝ըրը , աւելի բախաաւոր չեղան հայրենի մեր երկինքին աակ :

Ինչպէ՞ս բախաաւոր կարելի է համարել այն մարդերը , որոնք հարկադրուեցան իրենց սրահն մօտ եղող բաներուն դէմ արաայայաուիլ շարունակ եւ դովերգել իրենց հողիներուն բոլորովին խորթ երեւոյթներ , դէպքեր , դէմքեր : Ըսուած է բաղմիցս ու ամէն ոք դիակէ , թէ սաալինական ժամանակաշրջանին բանաստեղծը կամ դրագէաը «լրիւ չէր ասում այն , ինչ զգում էր , չէր բացայայտում այն , ինչ պահում էր նա հոգու խորքում , կամ բնդիակառակը՝ ասում էր այն , ինչի մշմարտութիւնը կասկածում էր , փառաբանում այնպիսի բաներ , որ սրտին հարագատ չէին , չէին դարձել սեփական համոզումն ու մշմարտութիւն» :

Ինչո՞ւ այսպէս եղաւ կեանքը , ո՞վ պաաճառ դարձաւ , որ ահադեկիչ այս մթնոլորաը աիրէ մեր երկրին մէջ :

Եա երթանք պահ մը ու յիշենք Յ7ի սպանդը անկաաար համարելով ադեան յաւելուածական հնճաններու պահանջը բերած միկոյանական ծարաւը .

«...Բայց թափթփուկներ որոշ տեղերում դեռ մնացել են եւ նրանց հարկաւոր է արմատախիլ անել ու անողոքաբար ոչնչացնել» :

Բիչ մը աւելի ետ երթանք եւ «անողոքաբար ոչնչացնելու» Միկոյեանի մարտահրաւէրին հետ կրկին կարդանք տարբեր ասպարէզներու մէջ գործող մարդոց մղճաւանջը մնայուն դարձնելու միտող նոյնանման կոչերը : Նախ՝ Նորայր Դաբաղեանի յայտարարութիւնը .

«Ով որ յայտարարում է , թէ չի նկատել այդ բացայայտ նացիոնալիստների քայքայիչ աշխատանքները՝ ապա ինքն էլ տուրք է տուել նացիոնալիստական տրամադրութիւններին» :

Պետական համալսարանի նիստին մէկ «ախտաճանաչումը» յետոյ .

«Ինստիտուտում ո՛չ միայն անցեալում , այլեւ այժմ էլ գործում են տրոցկիստ-նացիոնալիստական տարրեր» :

Ու նոյն համալսարանին միւս արճանադրութիւնը , թէ՛

Ըիհչեւ վերջին ժամանակներս էլ ուսանողներին հակայեղափոխական գրականութիւն էր հրամայում անանին դասախօսների կողմից» :

Ու մտածել , որ երբ Յ7ին վերէն ու վարէն նման յայտարարութիւններ կը կատարուէին , Հայաստանի սահմաններուն մէջ աչքի ինկող մարդ դրեթէ չէր մնացած : Կը նշանակէ , թէ հետապնդուածը ուրիշ բան էր այդ կէտէն անդին , սարսափի մթնոլորտը , որ վերադաս վաասերածներուն հրահանգներով Դամոկլեան սուրի մը պէս առկախ մնաց մարդոց դլուխներուն վրայ ու ձեւադեղծեց անոնց հողեկան դիմաւորը :

Արդարեւ , Հայ մաաւորականութեան մեծ տոկոսին մաքրագործումէն եաք ճնշումը այնպիսի ծայրայեղութիւններու հասաւ , որ բարոյական բոլոր հասկացողութիւնները աակնուվրայ եղան եւ մեր հայրենիքին մէկ ծայրէն միւսը սկսան թաղաւորել կասկածամտութիւնները , դաւնրը , մասնութիւնները , ուրացումները , ստորաքարչութիւնը , քծինքը , արճակով՝ «դա այն շրջաններն էին , երբ

կարգին հառաչել չէր լինում, ու անգամ մաքի մէջ խօսելն էր դարձեալ անհնարին», *իսկ բանաստեղծութեամբ՝*

Մտքի մէջ խօսելն անհնարին էր,
 էլ ուր մնաց, որ խօսէր բերանը,
 Սարսափի պատկերն իմ սնարին էր,
 Մատնիչ էր թւում տանս գերանը:

Հեռուն չերթալու համար՝ դառնանք քիչ առաջ լռելեայն յիշատակուած քննադատին ու բանաստեղծին դրութիւններուն եւ կարգանք անոնցմէ մէջբերուած հատուածներուն ուղղակի շարունակութիւնները:

Քննադատը՝

«Ճիշդ է, հայրենական մեծ պատերազմի ժամանակ, գգալիօրէն սրբագրուեցին այդ սխալներն ու արատները, ժողովրդական հայրենասիրութեան հզօր տարերփի առաջ ջարդուփշուր եղան շատ կաղապարներ եւ գաղափարական կեդժ, պրոկրուսեան մահիճներ, բայց պատերազմից յետոյ կրկին մոլեգին թափ ստացաւ պայքարը՝ ազգային ոգու, աւանդների, պատմութեան կննդոտ հարցերի գիտական նշմարիտ մեկնաբանութիւնների դէմ»:

Բանաստեղծը՝

«Բայց անհաաի պաշտամունքը ծանր ազդեց ո՛չ միայն նրանց վրայ, ովքեր բռնի ուժով գրկուեցին աշխատելու հնարաւորութիւնից: Իսկ նրա՞նք, որոնք աշխատում էին այդ բնագաւառներում մօտաւորապէս երկու տասնամեակի ընթացքում: Զինուորական տարագով գրահաւոր «հզօր անհատը» ամէնուր սփռել էր իր չարագուշակ ստուերը»:

Ակամայ մտանք «իր չարագուշակ ստուերը» ամէնուր սփռած անհաաին քսանամեայ մռայլին մէջ, մինչ մենք կ'ուզէինք կանգ առնել անոր կապուած եղեռնագործութեան առաջին մեծ պայթումը դուժող 37 թուականին առջեւ միայն, որ այնքան ճակատագրական եղաւ հայրենի մեր գրականութեան համար:

Վերադառնանք՝ առանց նոր բան մը ըսելու:

Ընթերցողը արդէն անդրադարձաւ, որ մշակութային մեր այդ երկրորդ եղեռնը է: անոր հեռեւանքները ուրուագծող այս նշմարին խմբագրութեան ատեն մենք գրեթէ բան չըսինք, այլ պարզապէս մէկտեղեցինք նահաաակներուն դէմ եղած յերիւրանքները, եւ ապա՝ անոնց անմեղութիւնը հասատող փաստերէն մաս մը, իբրեւ աղբիւր բացառաբար օգտագործելով հոն հրատարակուած հին ու նոր թերթերը:

Անկարելի էր անշուշաա անհարելի եղաւ այս էջերուն մէջ սպառել տուեալ նիւթը եւ կենսագրականներու եւ լուսանկարներու աւելի ընդարձակ բաժիններով յարգել բոլոր զոհերը: Մեր միջոցները թոյլաաու եղան կանգ առնել հայ գրականութեան ու մշակոյթին մօա եւ առաջին խումբի նահատակներուն առջեւ մէայն, որոնք տաղանդով ու պատրաստութեամբ մեծ էին, ու յիշատակով՝ անարատ:

Յաջորդ էջերուն վրայ ընթերցողը պիտի գտնէ պայծառանուն նահատակներու: Եւ իրենց երիտասարդութիւնը ճամբարներու մէջ նահաաակած վերապրող քանի մը դէմքերուն նուիրուած էջեր, ուր մեծ վիրաւորներուն խոր վիշտին հետ խմրուած են նաեւ վշտահար ուրիշներու երկիւղած վկայութիւնները...

Վր դիրքերի հակայեղափոխականութիւնը
խոստովանեց զբող Եղիշէ Զարենց։



**

Հնարան՝ը է արդեօք մի ամբողջ
ժողովրդի երգ զատարան տանել —
Եւ իբրեւ խեղճ, յանցաւոր ամբողջ
Եւ խարագանել, եւ ամբաստանել...

Այն ո՛վ է ստոր պոեար, որ,
Իբրեւ անցեալի զբռնակակիր —
Դէպի անցեալի զիրկն է կամեցել
Քչել մեր կեանքի ընթացքը վսեմ...

Ո՛ր — ջեմ հաւատում, որ նայիրական
Աշխարհում ամբողջ զանուի զէթ մի
Գուեա, որ այսօր իր բախաբ զանի
Իր ժողովրդի վսեմ, ախրական
Երթը խափանող ուղիների մէջ...

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

1936

II. Մ...—Ի ՅԻՇԱՏԱԿԻՆ (Հատուած)

Որպէս գորշ, դեղին տերեւներ, —
Ցլու՛մ է հողմը, ցրում —
Ա՛ղաղար. սերունդէ սերունդ —

Նայիրեան երգի արեւկեր,
Աներկիր հունտը անմահ,
Որ վաղո՛ւց, իր հողից հեռու՝
Ե՛ւ դարեր առաջ, ե՛ւ հիմա —
Քշուել է տաշեղի նման
Աշխարհի բոլո՛ր բացերում...

Եւ կրկին որպէս տերեւներ,
Քշո՛ւմ է հողմը նրանց,
Որ չընկնե՛ն, նրանք չամբանան
Հայրենի հողերի վրայ, —
Այլ, իբրեւ դեղին տերեւներ —
Թշնամի դաշտերում մեռնեն...

Եւ ահա, ինչպէս միշտ, — հիմա
Աշխարհի բոլոր կողմերից,
Ազատուած հազար հողմերի
Ժանտաժանտ ուժից, մերձիմահ
Հաւաքուել էին երբ հազիւ
Դաշտերում իրենց հարազատ —
Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց՝ բիրտ ու գազիր...

Ե. ԶԱՐԵՆՑ

Երեւան, 17-11-1937

ԺԳ.

Ոչ փող գարկին, ոչ խուլ արձագանգ...
Ոչ ֆահաճայ, ոչ դբօշ կարմիր.
Մի տեղ փորեցին մի փոս՝ անբառ
Շարական երգեց աշնան ֆամին...

ԺԶ.

Ու ինչպէս խօփը հնամենի
Տուեց հանճարեղ երգեր մտրդում,
Այնպէս էլ մեքենան, ուժով յորդում
Կր տայ պոետներ նոր, ամենի.
Իսկ այդ ամենին հենց դու էի՛ր,
Քո մտտեաններով լայնապարփակ,
Քո հատորներով արգելափակ,
Քո մտեով դաժան, անմեկնելի...

Գ. ՄԱՀԱՐԻ

ՄԵՌԱԾ ՊՈՇՏԻՆ

ԶԱՐԵՆՑԻՆ

Այնտեղ ամէն ոք կար, եղածի՛ց էլ աւել,
 Միայն դո՛ւ չկայիր այդ ժխտում,
 Լոյս էր, տօն էր այնտեղ ու սիրալիր հրաւէր,
 Միայն քո՛ սրտից էր արիւն ծորում:

Այնտեղ խրախֆանք էր. դռներն էին փակել,
 Որ ներս չմտնէր քո ստուերն յանկարծ,
 Ահեղ շառաչելով քո աստղն էր ընկել,
 Հանգել ոտքերի տակ չնչին մարդկանց:

Շողո՛ւմ էին դէմքերն ու ժպիտները գոհ,
 Քո ստուերն էր փայլում փողոցներով,
 Զկար նրանց համար խրախֆանքի մի գոհ,
 Զոհուել էիր դու քո մահո՛ւր սիրով:

Կանչել էին նրանք բոլո՛ր գոյնի մարդկանց,
 Զէի՛ն յիշել միայն, միայն որբիդ,
 Նրանք հրուում էին ուրախութեամբ անանց,
 Կոյր՝ քո տեսի առաջ եւ խուլ՝ ողբիդ:

Կային այնտեղ լափած ջենտրլիմեններ բազում,
 Մայրուած ու շֆեղ շա՛տ մադամներ,
 Նրանց ձեռքերում կար ե՛ւ ձիթեմի, ե՛ւ սուր,
 Նայած ո՛րք պիտի ի ցո՛յց հանուէր:

Մէկն այնտեղ էր ընկել ֆծնանքով իր յամառ,
 Մէկն՝ սիգիֆեան իր համբերութեամբ,
 Մէկն՝ իր յոյժ ու յատուկ ծառայութեան համար,
 Իսկ միւսն էլ՝ այնպէ՛ս, բախտի բերմամբ:

Կային այնտեղ մարդիկ, որոնց խիղճն է գարթնում
 Ո՛չ քէ ֆնից առաջ, այլ ֆնի՛ մէջ,
 Իսկ դու ստուեր դարձած՝ շրջում էիր անտուն,
 Էլեգիական դէմքով, ցակատով պերճ:

Ցնծո՛ւմ էին նրանք, իրար բա՛րձր երգում,
 Իսկ դու վախճանն էիր սգում բախտիդ,
 Նրանց համար փառքի լիութիւն էր կեանքում,
 Ոչի՛նչ չէր մնացել ֆեգ, աղփատի՛դ:

Իսկ քո դիմաց փայլով արեւոտ ու չֆնաղ
 Ճանապարհներն էին ո՛ղջ աշխարհի՛.
 Դու գնդանից ելած փայլում էիր դանդաղ
 Դեպի գագաթնե՛րը քո մեծ դարի:

ՀՐԱԶԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Քեղ սիրեցի, եւ իմ սէրը դարձաւ մորմոք,
 Եւ իմ սէրը դարձաւ վախ,
 Իմ սրտում կար մի երկնային երգի որոտ,
 Բայց դարձայ լուռ, դլխահակ:

Հաւատում եմ, հաւատում եմ, որ կը դայ մեծ
 Դո՛ւ յարութեան օրն արդար,
 Եւ դու նորից յաղթանակով կը յառնես,
 Եւ ոսոխդ կ'ընկնի վար:

Որքա՛ն մարդիկ պիտի փութան ամբիոններ՝
 Առաջինը յուզուելով,
 Եւ անիծեալ իրենց անցեալը օծեն
 Յիշատակիդ լոյսերով:

Բայց մենք կը վանք դահլիճներով խուռներամ
 Ու քայլերով անվհատ,
 Եւ քո բոլոր դահլիճներին ոճրադործ
 Պիտի զարկենք պատէպատ:

Եթէ նոյնիսկ ես չհասնիմ այդ օրուան,
 Եթէ մնամ կէս ճամբին,
 Վաղուայ վառքիդ շքամուտով ներս կը դամ,
 Աչակերտի պէս անբիծ:

ԽԱԶԻԿ ԴԱՇՏԵՆՑ

1939

**

... Ես այլևս Չարենցին չտեսայ եւ չլսեցի նրա ձայնը... Ո՛չ, դա ճշմարիտ չէ. դրանից տասնըվեց ամիս յետոյ, բանտային արտակարգ պայմաններում, մի դիշեր ես լսեցի նրա ձայնը, առանց կարենալու նրան տեսնել: Ես լսեցի նրա ձայնը եւ ինձ թուաց, թէ ես խելադարւում եմ... Օ՛, այդ ձայնը: Եղիչէ Չարենցի ձայնը դեռ մըջտանոյն թարմութեամբ հնչում է իմ ականջում, հնչելու է մինչեւ իմ մահը, եւ ինձ թուում է՝ իմ մահից յետոյ էլ այն հնչելու է անվերջ... եւ դալիք բոլոր սերունդները լսելու են այդ արտակարգ ձայնը:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

Նորերի մէջ, եղբայր Չարենց, քո ֆնարի լարն է հոգիս,
 Քեզ չարն ասաւ. «գնա՛ մեռի», բարին ասաւ՝ «արի սիրեմ»:
 Բայց որտե՞ղ է գերեզմանդ, որ գամ գոնէ ֆարն համբուրեմ:
 Թէ ֆար չունես, ելնեմ Մասիս, ամենասուրբ ֆարը բերեմ:
 Ա՛խ, ֆարաշատ Հայաստանը ֆար չգցեց վրադ, Չարենց:
 ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ



«Դաշնակ Բակունցը եւ ուրիշներ, իմանջեանի ցուցումով, աշխատում էին անցկացնել իրենց հակայեղափոխական դրուժիւնները»:

Այս ամէնի համար, օ՛, խեղճ իմ բարեկամ,
 Ես քեզ օրհնում եմ, արդ, իմ անաղարտ երդով,
 Այս ամէնի համար եւ քո եղերական
 Տառապանքի համար, որ արդ կրկին
 Վեհուժիւն է խառնում քո անաղարտ երդին,
 Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական:
 Ես ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ
 Իմ շուրթերով, ինչպէս օրեր առաջ,
 Երբ դու դեռ այր էիր մի անարատ,
 Եւ ես ընկերն էի քո բանաստեղծ:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

1936

— Խոնջ ես ասում, Ակսել, ոմանք քո «Միրանի փող»ը համարում են նացիոնալիստական եւ, նոյնիսկ...

— Նոյնիսկ մեր անդարագեան հարեւանի տերիտորիայի նկատմամբ ամենակտիւ ոտնձգութեան արտայայտութիւն, — ընդհատեց նա ինձ, — եւ դու կարելորութի՞ւն ես տալիս դրան, — աւելացրեց նա քմծիծաղով եւ, ապա, այն միտքը յայտնեց, որ նման մարդիկ ողորմելի են ոչ միայն նրա համար, որ չեն հասկացել ինտերնացիոնալիզմի էութիւնը, որ գուրկ են ազգային արժանապատուութեան զգացումից, այլեւ նրա համար յատկապէս, որ նրանց հոգին թափուր է ազնիւ զգացումներից եւ նրանց խիղճը չի զարգացած առհասարակ: Այդպիսի մարդկանց հետ վիճելը դժուար է, վտանգաւոր եւ անմիտ: Այդպիսի մարդկանց քննադատութիւնը, խելքը գլխին գրողին կը տայ միայն այն օգուտը, որ նա մի անգամ եւս կը մտածի, որ ինքը ճիշդ ստեղծագործական ճանապարհով է ընթանում:

Վ. ՆՈՐԵՆՑ

Ա Կ Ս Ե Լ Ի Ն

Լուսաւոր հանճար մութ ձորերի,
 Լեռնային աղբիւր յտա՛կ, յտա՛կ,
 Արծիւ՝ հին վանքում ընկած դերի,
 Լուսավանք, լեռան ուսին նստած:

Ձա՛նդ ոսկելեզուակ, կախա՛րդ վարպետ,
 Թրատուա՛ծ երակ, վսեմ երդո՛ւմ,
 Կոթո՛ղ վեհանիստ, անձեռակերտ,
 Վարդավառ, դողթա՛ն քնարերգու:

Դու դի՛ւտ, մազաղաթ, վէ՛մ ու մարմա՛ր,
 Կարմի՛ր ուխտաւոր, դրի՛չ, տրիբո՛ւն,
 Կանթե՛ղ մշտավառ, խարո՛յկ անմար:

Անճառ նահաաա՛կ, նշխա՛ր անմահ,
 Սի՛ւն ոսկեքանդակ, մե՛ծ դպրութիւն,
 Վիրաւոր արեւ, ընկած կամա՛ր,

Անաւա՛րտ, բիւրե՛ղ զանդակատուն:

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

*
**

Դու եօթնապատիկ անմեղ նահատակ,
Անհուն, անեղծ այս երկնքի տակ
Որտե՞ղ որոնեմ հանգրուանը քո,
Որ դամ, խոնարհուեմ մի ուշ երեկոյ,
Գրկեմ շիրիմը քո նուիրական
Եւ այն լուանամ ես ալպիական
Մանուշակների անարատ ցօղով,
Կորուստդ ողբամ ծիրանի փողով:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

*
**

Սկսուեցին 1936-37 թուականների «խառն ժա-
մանակները», եւ ես այլեւս չտեսայ նրան: Մոս-
կուայում էր, հեռադրով կանչել էին: Ձգալով
խարդախ մարդկանց սարքած որողայթը, Աղբս-
տաֆայում իջել էր զնայցից, հեռադրել կնոջը,
որ երեխային բերի Դիլիջան: Այնպէս, իր հայ-
րենիքում մեծ դրողը վերջին անգամ տեսնում է
իր ընտանիքին, պատուիրաններ է տալիս էր միայն
որդուն՝ Սեւադային եւ վերջին հրատեւտը...

Այլեւս մեղնից ոչ ոք չտեսաւ բիւրեղեայ հո-
ղու աէր այդ մարդուն: Մի ասրի անց միայն նրա
ձեռագիրը նշմարեցի բանախ կամերայի մութ ան-
կիւնում՝ խոնաւ պատի ծեփին. «Այսօր տանում
եմ գլուխս ուտելու: Ակսել Բակունց, 18. 7. 38
բ.»:

Չոքեցի երեսով դէպի պատը, գլուխս առա
ափերիս մէջ եւ լուռ ողբացի իմ ընկերոջ, իմ ու-
սուցչի ողբերգական վախճանը: Կսկծացի կա-
խարդական Միրհաւի համար, որ արիւն տալով
զնայց թաղուեց անյայտութեան մէջ...

ՎԱՅՏԱՆԴ ԱՆԱՆԵԱՆ

Ս. ԲԱԿՈՒՆՑԻՆ

Անաղմուկ բացել հնձանիդ դուռը,
Ո՞ր կածանով ես անդարձ գնացել...

Քեզանից յետոյ՝
Տարիներ անվերջ,
Սրսփացել է Սոնան հնձանում,
Հին Դրմբոնում կափան է թախծել,
Ամպ է ծանրացել կափաւաքերդում,
Եւ մանուշակն է գիշերով լացել...

Քեզանից յետոյ՝
Տարիներ անվերջ,
Որպէս Խոնարհի՞ խոնարհ աղջիկներ
Քո Մթնաձորի հեփաթն են հիւսել
Ու լոյս են փաշել քո Մթնաձորից:

Քեզանից յետոյ՝
Հնձանդ յաւէտ բաց է մնացել
Եւ դեռ յորդում է խորփերում գինին...

ԱԼԲԵՐՏ ԻՍԱԶԱՆԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻՆ

Քո սիրտը լիքն էր լոյսով արեւի, ծաղկի ծիծաղով,
Քո սիրտը լիքն էր ջրվէժի երգով, սիրով ամէնփի,
Բայց անանկնկալ խոցուեց նա մի օր դառնաղի ցաւով,
Նայիրեան երկրի գտնգրաւեր որդու մահուան լեզենդից:

Քո սիրտը խոցուեց, երբ մի մութ գիշեր կարմիր կրակում
Լացով այրեցիր բակունցեան էջերն այն լուսապսակ,
Նրբ յայտնեցին, թէ արեւը փարէ պատից է ծագում
Հազար ինն հարիւր երեսուն եւ եօթ թուից սկսած:

Քո սիրտը խոցուեց, երբ պատերազմի մրրիկներում մառ
Ուրիշի մեղքով ցաւի մէջ ընկար, մեղքին՝ անիմաց,
Նրբ Տիսուսի պէս քո կրած ծանր տանջանքի համար,
Ցուցամատերի սուրիներ էին ցցում քո դիմաց:

ՀՐԱԶԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



Յունիս ամիսը, որին Վահան Թոթովենցը միշտ դիմաւորում էր ուրախառիթ յոյգերով ու ժպիտներով, իր մանկան օրերի անուշ վերջիչումներով, եղաւ նրա թէ՛ ծննդի, թէ՛ կորստի ամիսը: Կեանքի պարագաների մի զարմանալի դասաւորում, եւ բոլոր դէպքերում տուեալ մարդու կամքից ու մասձումից անկախ: Ահա թէ ինչպէ՛ս է առաջանում անհիմանալի ճակատագրի հասկացողութեան շօշափելի բովանդակութիւնը:

Ս. ՄԵԼԻՔՍԷԹԵԱՆ

«Ժողովրդի անարդ թշնամիներ — հակայեղափոխական Դր. Սիմոնեանը, Բակունցը, Ալաղանը եւ Թոթովենցը, որոնք վայրապօրէն խրժուել են Հայկինոյի միջոցները»:

*
**

Ես, ինչպէս մեր բախտակից շատ ընկերներ, իմացանք թո՛ւմենավերջին դրաւոր խօսքը, միայն մի պարբերութիւն, որի մէջ դու դրել ես մի ահաւոր ողբերգութիւն, մի հերոսական հոգի եւ անխորտակելի մի լաւատեսութիւն թո՛ղովրդի ապագայի համար: Քո այդ պարբերութիւնը սեփական աչքերով կարդացել է մեր ընկեր Արմենակ Թոթովենցը (որ բարեբախտաբար ապրում է մինչեւ այսօր) եւ նոյն օրը՝ կարդալուց կէս ժամ յետոյ յայտնել է մեզ, քառասուն բախտակիցների, 1938 թուականի Յունիսի 20ին:

Ահա թո՛ւ վերջին դրաւոր խօսքը.

«Հինգ բուպէի դատավարութեամբ՝ դատապարտուեցի մահուան. բացարձակապէս անմեղ եմ: Կեցցէ՛ հայ ժողովուրդը»:

Սրտի սրբազան պարտք եմ համարում թո՛ւ վերջին հոյակապ խօսքը այսօր, տարիներ անց, յանձնելու մաքուր թղթին եւ նրա միջոցով թո՛ղովրդին, որին այնքան սիրում էիր դու եւ որն այսօր կարող է պարծենալ քեզ նման պայծառ զաւակ ծնելու համար:

Այդքան, սիրելի Վահան: Դու անմահացար Չարենցի, Բակունցի եւ դրչի միւս ընկերների հետ: Մենք, ձեր ընկերներից մի քանիսը, նորից կեանք մտանք: Դուցէ՛ բախտը կենդանի պահեց մեզ նրա համար, որպէսզի ճշմարտութիւնն ասենք ձեր ողբերգութեան մասին, պարծենանք ձեզանով եւ պանծացնենք ձեր հերոսական անմահութիւնը:

ՎԱՀԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՅ

Գրական անհատականութեան բարձունքը նուաճած, խիզախող ու վարպետացած գրողը ստեղծագործական մեծ մտայղացումներ, դեղարուեստական շատ ծրագրեր ունէր: 1936 թուականին նա հրատարակութեան էր յանձնել տպագիր ու անտիպ պատմութեան «Ծիրանի ծառ» ժողովածուն: Երկար ժամանակ փայփայում էր մի վսեմ նպատակ՝ իրագործել տարիների իր երազանքը, գրել մի վէպ՝ «հովուերգական, հերոսական ու ողբերգական վիպերգութիւն մի ժողովրդի՝ իր երկրում եւ այլ երկրներում» մօտաւոր անունով, բազկացած վաթսուն մամուլից:

Սակայն Թոթովենցի շատ ծրագրեր, մտայղացումներ ու ստեղծագործական պլաններ մնացին անկատար: Ոգեշունչ ու հայրենանուէր աշխատանքի, կրակոտ ներշնչանքի, դեղարուեստական ու գաղափարական հասունութեան ծաղկուն շրջանում զոհ դարձաւ անհասի պաշտամունքին:

Թոթովենցն էլ իր գրչակից ընկերների՝ Չարենցի ու Բակունցի պէս անտարբեր չի անցել հայրենական ոչ մի դաշտից. խնամքով դուրգուրել, փայփայել, սիրով հաւաքել է հանդիպած բուրումնաւէտ ծաղիկները:

Ս. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

... 1936 թուականի Օգոստոս 9ի ղիշերը ես ձերբակալուեցի: Ինձ տարան «Ինտուրիստ» ռեստորանից:

Զինուորական կոլեգիայի դերադոյն դատարան: Ես Մեղադրուում եմ տեռորի եւ Հայաստանը Սովետական Միութիւնից անջատելու ու կապիտալիստական աշխարհին միացնելու մէջ: Ես պիտի սպանէի՝ Բերիային: Ես դատապարտուեցի տասը տարուայ ազատազրկման:

Հետզհետէ հաւաքուեցին դատապարտուածները, հաշուեցինք, քառասուն հոգի: Դրանցից՝ երկուսը ճարտարապետ, երեքը զրոյ, չորսը ինժեներ, մէկը ժողովրդական կոմիսար, մնացեալը պետական եւ պարտիական աշխատողներ: Պատասխանատու աշխատողներ:

Հիմա մեզ համար արդէն պարզ էր, որ պիտի ուղարկեն Հայաստանից դէպի հիւսիսները:

... Այստեղ խժժում էր կալանաւորական ամբողջ մի բանակ: Սրանք էլ ինձ նման սարսափելի «տեռորիստներ էին ու դեռ լրտեսներ, վնասարարներ, ընդդատակեայ կազմակերպութիւնների ահեղ անդամներ, հակայեղափոխութեան քարոզիչներ»:

Չնայած, որ ես դատապարտուած էի տասը տարուայ ազատազրկման (եւ հինգ տարուայ ձայնազրկման...), այնուամենայնիւ, ինձ բաց թողին միայն տասներմէկ տարի յետոյ: Պատճառը պատճառը զարմանալի է, ինձ ուղեկցող վճռի փաստաթղթում մեքենադրուհին բաց էր թողել մի վրիպակ — ժամկէտի վերջը 1946 թուականի փոխարէն (1936-1946) տպուած էր 1947... ես մի տարով գերապատարեցի ինձ բաժին ընկած դառն պլանը:

24 Փետրուար 1963 թ.
Երեւան

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

Կ Ա Ր Օ Տ

Ո՞ւր ես դու, ի՞մ մանկիկ,
Ո՞ւր ես դու հիմա,
Չե՞ս յիշում, անդին իմ,
Ունէիր մի հայր:

Չե՞ս յիշում, դրում էր
Պոեմ ու քանդակ,
Սրտի տեղ արեւ էր
Կրում կրծքի տակ:

Ա՛խ, դնա՛ց մի օր նա
Երկիր մի հեռու,
Լաց եղան կին ու մայր,
Քնել էիր դու:

Նա հիմա չի յիշում
էլ ոչինչ, ոչինչ,
Ոչ սարը մշուշում,
Ոչ ջրերը ջինջ:

Հիմա նա յիշում է
Միծաղդ գուարթ,
Ու երգում են շուրջդ
Լիճ, անտառ ու արտ:

Յիշո՞ւմ ես, անպին իմ,
Ունէիր մի հայր,
Ո՞ւր ես դու, մանկիկ իմ,
Ո՞ւր ես դու հիմա...

1937

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ





«Միլիտիչ Արմէնը իր էնտուզիաստները փրճառում է խորհրդային կարգերից դուրս»:

Միլիտի խորհրդային ֆաղափացիներ, իմ հայրենակիցներ:

Այս գիրքը ՊԱՏՈՒԻՐԵՑԻՆ ՅԱՆՁՆԵԼ ՁԵՁ ձեր հայրերը, եղբայրները եւ գաւակները, որոնց հետ ես հանդիպեցի 1937 թուականին եւ դրանից յետոյ ութ տարի շարունակ, նամբարներում, ինքս էլ լինելով նրանց պէս մի կալանաւոր:

Եթէ ուրիշ շատ եւ շատ կալանաւորներ իրենց ժամկետն անցկացնում էին միայն մի տեղում կամ ընդամէնը մի ֆանի անգամ տեղից տեղ վախադրուելով, ապա պատահականութիւնն այնպէս էր կամեցել, որ ես թափառէի նամբարից նամբար՝ ութ տարում աւելի ֆան վաթսուն անգամ...

Ես թափառում էի նամբարից նամբար եւ ամէնուր ինձ մօտենում էին մարդիկ, պատուիրում գրել իրենց մասին, գրել նշմարտութիւնը, միայն նշմարտութիւնը, այն, որ ես տեսայ ութ տարի շարունակ, երբ գնչուի պէս թափառեցի վաթսուն նամբարներով, ծառ կտրեցի վաթսուն անտառներում եւ գերաններ լուղարկեցի վաթսուն գետերով: Եւ ոչ մի վայրկեան վար չնետեցի հաւատի բարձր պահած ջահը՝ եղեւնի խէժով պատած իմ ձեռքերից:

Ես վերադարձայ եւ գրեցի այս գիրքը, որ ՊԱՏՈՒԻՐԵՑԻՆ ՅԱՆՁՆԵԼ ՁԵՁ: ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

Ժ Ի Ր Ա Յ Ր Գ Լ Ե Ն Ց

Երբ տասներկու տարի, երկու ամիս եւ ասուներհինգ օր առաջ ընդհատուեց ժիրայրի կեանքը, նա բոլորովին նախապատրաստուած չէր դրան: Դեռեւս չհասկանալով կատարուածի ամբողջ ողորկութիւնը, նա շտապում էր նոյն օրն իսկ վերադառնալ տուն եւ շարունակել իր կիսաաթողած անյետաձգելի դործերը: Բայց նրան չթողեցին... Յուսահատութիւնից նա պատրաստ էր լինելու, բայց մի՞թէ դա կ'օղնէր:

Եւ օրն անցաւ: Բայց չէ՞ որ նա, դուրս դալով աշխատավայրից, շտապում էր դնալ դեղատուն՝ դեղ վերցնելու մրսելուց հիւանդացած իր մի տարեկան Յովիկի համար: Եւ քանի որ նա այդ օրն աշխատավարձ էր ստացել, ապա մատուցել էր նաեւ նարինջ դնել Բրաբիի համար: Կինը շատ էր սիրում նարինջ եւ անշուշտ հիմա, յղիութեան ամիսներին, շատ կ'ուզենար ուտել դոնէ մի քանի հատ: Բայց խնայողութիւն անելու անհրաժեշտութիւնից դրդուած, այդ մասին լռում էր

Բրաբին՝ նիհար ու սուսիկ նրա երիտասարդ կինը: Հաղիւ երեք տարի էր, ինչ նրանք ամուսնացել էին, հարկաւոր էր անընդհատ դրամ ետ դրցել ռուբլի առ ռուբլի, իրեր գնել, հաղուստ... Իսկ ժիրայրն աշխատում էր որպէս մի փոքրիկ հիմնարկի ղործավար եւ ստանում էր շատ համեստ աշխատավարձ: Ու թէեւ դիտէր, որ կինը տրտնջալու էր նրա կատարած աւելորդ ծախսի համար, բայց որոշել էր դնել նարինջ՝ մի ամբողջ կիլո...

Բայց նա չվերադարձաւ տուն՝ դեղի ստացալանը եւ ամսուայ աշխատավարձը գրպանում: Երբ անցաւ դիշերը, նա չէր հաւատում, թէ անցնելու էր նաեւ երկրորդ օրը. եւ դուցէ խելագարուէր, եթէ ասէին նրան, որ անցնելու են եւս հազար ինը հարիւր տասնեօթ այդպիսի օրեր:

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

(Հատուած)



ԿԱՐՕՏԻ ՅՈՒՇ

Կարօսել եմ իմ տա՛ք Երեւանին,
Հիմա այնանդ դարուն է բիւրերանդ.
Բոյբեր է բուրվառում եղբւանին,
Համեստ ժպտում են յասմիկներ ճերմակ:

Հեռում լեռների լեռն է վեհանում,
Մայր Արադածը հազնում է դմբուխտ,
Կանչում են ծաղիկներ հազարանուն՝
Եօթադրերտնց արուն, դինարր եւ տուղտ...

Մինչ Սեւանից թաւշեայ մեր դաշտերին
Գարնան համրոյրներ է բերում Ձանգուն,
Նորքում արծաթում է փշատենին՝
Քոնարհ հակուած առուի վրայ ղնդուն:

Եւ դեղուղէչ բարդին անուշ խշշում՝
Ձարկում է դափ ու ծափ, ցնծում պայծառ.
Եւ զարթօնքի հազար դուարթ շշուկ
Մփում է թփից թուփ եւ ծառից ծառ:

Դեղձենին է ապրում կարմիր արբունք,
Ծաղկաւորում է որթը խաղողի...
Քւնի՛-քանի՛ սրանք են խոր արբում
Բեղմնաւորման մղող բոյրով հողի:

Աղլիկներ են ծաղկում սէր սրտերում
Եւ շուրթերին մաքուր համրոյրի իղձ...
Սիրոյ իմ երգերը, է՛յ, ո՞վ է միտ բերում,
Եւ կա՞յ դէ՞ք մէկն արդեօք: որ յիշէ ինձ:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

«Ն. Ստեփանեանի տրոցկիստական-նացիոնա-
լիստական խմբակի անդամներն էին Ա. Բակուն-
ցը, Դր. Սիմոնեանը, Ալազանը, Նորենցը եւ ու-
րիշներ»:

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Այնտեղ ցուբտ էր ու սառոյց,
Եւ դիշէին երկար.
Մարդիկ դժգոհ իրարուց,
Սրանքը ժեռ քար...

Ասա՛, սիրտ իմ, դու այնտեղ
Ինչպէ՞ս դիմացար...
Եւ մնացիր միշտ անմեղ,
Մնացիր պայծառ:

Ոչ մի թթւուտ չաղարտեց
Ոսկին քո մաքուր,
Ի՞նչ մնացիր բանաստեղծ՝
Բոլորից թաքուն:

Տ Ե Ր Ե Ի

Ես մի տերեւ եմ, անդամ ոչ պտուղ.
Երբ ընկնեմ ծառից,
Կանդնած կը մնայ ամուր, աներկիւղ,
Հին ծառն առանց ինձ:

Բիւր սերունդների, դարերի առաջ
Ի՞նչ մնայ պայծառ,
Այդպէս խորարմատ, մշտապէս կանաչ,
Պտղաւոր իմ ծառ:

Արհաւիրքների հին սամումը քեզ
Թող չտատանի,
Առօրեայ հովը թող հազար ինձ պէս
Տերեւներ տանի:

Վ. ՆՈՐԵՆՑ

*
**

Ամէն ինչի սպասում էի, բայց հեռագրի՝ ոչ: Եւ ահա հեռագիր: Հեռագրում է լեմվել Մարութեանը Երեւանից. «Վախճանուեց Ալազանը. լեմվել»: Ե՛ւ կարճ, Ե՛ւ ազդու:

Ես չեմ ուզում այստեղ անդրադառնալ այդ տարիների դրականութեան սպասմութեանը, կ'ասեմ միայն, որ Ալազանը դրաւեց դրա-վարչական այնպիսի ուժեղ դիրքեր, որ Չարենցը չէր կարող երազել անգամ: Գրական ճակատագիր ասածը մի անհասկանալի բան է... Ալազանն՝ այստեղ, Ալազանն՝ այնտեղ: Հայաստան Բարբիւս էր դալիս, — Ալազանը սլիտի դնար դիմաւորելու, Մաքսիմ Գորկին էր ժամանում, Ալազան, Մոսկուա՝ Ալազան, Թիֆլիս՝ Ալազան, Փարիզ՝ Ալազան: Բանուոր դասակարգի սիմվոլն էր Ալազանը, յատակից ելած մարդը, որի հետ մեծ յոյսեր էր կապել այն ժամանակ սլոյեւտարական դրականութիւնը:

Երկու օր է անցել այն օրից, երբ ստացայ հեռագիրը եւ այս երկու օրերի ընթացքում մըտքերս հետապնդում են Ալազանին կամ ընդհակառակը: Այս երկու օրերի ընթացքում ես եկայ այն համոզման, որ Ալազանը մահն ինձ վրայ աղդել է աւելի քան ցաւազին: Այդ պէտք է վերագրել այն բանին, որ ես բացի դրական Ալազանից, մօտից ճանաչեցի նրան որպէս մարդու: Մրամիտ էր նա, անմիջական, ընկերասէր ու զգայուն: Կեանքն այնպէս դասաւորուեց, որ նա չկարողացաւ տալ այն ամէնն, ինչ կարող էր տալ: Արհեստաւոր էր Ալազանի հայրը եւ կոչւում էր ուստա Մարտիրոս: Այս Մարտիրոս անունն աւելի սազական էր նրա որդուն, Ալազանին, որը եղաւ յիրաւի մարտիրոս:

Ափսո՛ս, ափսո՛ս Ալազան:

«Բախուեցը, Ալազանը, Վանանդեցին եւ ուրիշներ՝ մերկայուեցին որպէս հակայեղավորական տրոցկիստներ»:

ՀՐԱԺԵՇՏ ԱՇՏԱՐԱԿԻՆ

Հրաժեշտ եմ ասում ես Աշտարակին՝ Այնտեղ թողնելով սրտիցս մի մաս, նրա բոցավարս արեւածագին, Այնտեղ թողնելով սրտիցս մի մաս:

Այգու դէմ կեցած խրհիթին իմ մառ, Աղբիւրի պէս ջինջ՝ իմ քոյր Շուշիկին, Հրաժեշտ եմ ասում խոր ու սրտագին՝ նրանց թողնելով սրտիցս մի մաս:

Հրաժեշտ եմ ասում ես Աշտարակին՝ Ոսկի խաղողի բերքին դեռահաս, Խորունկ Քասախի անմեռ նուագին, Այնտեղ թողնելով սրտիցս մի մաս:

Պոռշեանի հէֆ, թախծոտ տնակին Հրաժեշտ եմ ասում խոր ու սրտագին, Այնտեղ թողնելով սրտիցս մի մաս:

Եւ րնկուզեմուն լուռ ու հովասուն, Եւ համայնական արտերին հասուն, Չեոֆերս պարգաժ՝ հրաժեշտ եմ ասում:

Եւ քոջական արտերին վնիտ, Եւ եղբայրական հոգիներին ջինջ, Երգերս պարգաժ՝ հրաժեշտ եմ ասում:

Ուր էլ որ գնամ՝ ես Աշտարակում Բախտի մաս ունեմ ու հացի պատառ, Քասախի ձորում, այգում, պուրակում՝ Երգի սագ ունեմ ու յոյգերի թառ, Հարսանիքներում, քէֆում, խնոյֆում Գինու թաս ունեմ ու խօսքի մի բառ, Ուր էլ որ գնամ, իմ Աշտարակում էլի մաս ունեմ ու բախտի պատառ...

ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆ

«Բազին»ի ներկայ համարին վերջին երեսուն էջերուն համար պատ-
րաստած էինք Չարենցի, Բակունցի, Թադևոս Ավդալբեկեանի, Սիրական Տիգ-
րանեանի եւ միւս գոհերէն ոմանց մասին այլ վկայութիւններ, գորս ստիպ-
ւեցանք դուրս ձգել՝ տեղի անձկութեան պատճառով:

Այդ վկայութիւնները պիտի ներկայացնենք ընթացիկ տարեշրջանին,
պարբերաբար:

*
**

Տեղի անձկութեան նոյն պատճառով՝ յաջորդ թիւին յետաձգեցինք
մեր գրախօսականներու բաժինը եւ շարք մը նշմարներ:

*
**

Լիբանանեան երկարատեւ տագնապին ընթացքին, Հայաստանի մէջ տե-
ղի ունեցան գրական երկու իրադարձութիւններ, — Աւ. Իսահակեանի ծնընդ-
եան 100ամեակի հանդիսութիւնը եւ գրողներու եօթներորդ համագումարը,
որոնց պիտի անդրադառնանք մեր հետագայ թիւերով, կարգ մը ճշդումներու
եւ հաստատումներու սահմաններուն մէջ:

*
**

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

Հրաչ Զարդարեան (արձակ)

Վահէ Օշական (բանաստեղծութիւն)

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ

Լիբանանի մէջ «Բազին»ի ցրումը յանձնուած է

ԳՐԱՏՈՒՆ ԱՆԻԻ

Նահր էլ Մոթ

Հեռ. 262671

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزاجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄՆԱԳՆԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban